



Թիվ 1 (7), դեկտեմբեր - հունվար, 2005 - 2006 թթ.



**ՈՒՄՍ**

**ԱՐԱՐԱՏԻ**

Ես ոչ միայն մենակ մնալու չեմ, այլ ԼԻՆԵԼՈՒ ԵՄ ե՛ր առաջինը, որ պիտի հնչեցնէ այս նոր ձեւի պատերազմի հրաւիրող փողը:

Անցած տարիները եկան ինձ ապացուցելու, որ այս աշխարհում ազատութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն եւ սրանց նման բարձր գաղափարների իմաստը, եթէ այսպէս շարունակուի մեր կեանքը, շուտով միայն բառարաններում ենք գտնելու: Բաւական է, որքան հայ անհատը, գնչու դառած, դռնէդուռ ընկած ողորմութիւն է աղերսում մարդկութիւնից:


Ես՝ անհատս, ո՛չ ցանկութիւն ունեմ այլեւս լռելու եւ ո՛չ էլ ժամանակ:

Միակ ցանկութիւնը, որ մնում է իմ մէջ, այդ է՝ չլինել միակն այս ձեւի պատերազմն իրականացնելու գործում:

Վերջնական յաղթանակը լինելու է մե՛րը, կասկած չունե՛մ:

Դո՛ւք՝ հայ ազգի զաւակներ, ՆԵՄԵՍԻՍՆԵՐՐ դարձած, հարուածէ՛ք թշնամուն ամէն մի տեղ, որտեղ դուք ինքներդ յարմար կը գտնէք:

ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆ



**Գուրգեն Յանիկյան,**  
 յուղաներկ, 81X61, գործ՝  
 Գագիկ Խաչատրյանի

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Չի կարելի թույլ տալ օտարում ժողովրդի և պետության միջև	էջ 1	
Գուրգեն Յանիկյան	էջ 2-3	
Գուրգեն Եանիկեանի երկար մամակ-յուշագրին վերջին մասը	էջ 4-5	
Շնորհակալություն, որ դուք կաք	էջ 5	Նարեկ Առուստամյան
Մեր մահատակները	էջ 6-7	
Գիտնական-ռազմագետը	էջ 8	
Պատմութեան համար	էջ 9	
Պատմությունը և դասագրքերը	էջ 9	Սարգիս Պարսամյան
Քաղաքական խաղեր և լիակատար անտարբերություն	էջ 10	Սուրեն Մանուկյան
«Ազգայնականություն» եզրի ընկալման պատմական էվոլյուցիան	էջ 11	Թամարա Վարդանյան
Ներկայիս ազատականության կայսերական բնույթը	էջ 12	Կարեն Ավետիսյան
«Երկնագույն հոսքը» միացրեց Թուրքիային ու Ռուսաստանին	էջ 13	Արտակ Շաքարյան
Վրացական թրթապանակ	էջ 14-17	Խաչատուր Դադայան
Դատապարտում են գերմանական արխիվային փաստաթղթերը	էջ 18-19	Նորայր Սարուխանյան
Մարզական սխրանքի մի դրվագ	էջ 19	Հակոբ Մանջյան
«Հայաստանի գանձեր» Նինա Հովնանյան-Ալեքսանյան	էջ 20	Լիլիթ Եղիազարյան
Հրաչյա Ներսիսյանի ծննդյան 110-ամյակին	էջ 21	Անի Մնացականյան
Գյումրին նորից կհամի ու կշենանա. Նիկոլայ Օտտուրյան	էջ 22-23	Նանե Սևան
Գեղարվեստական խոսքը ոգեշնչող ու դաստիարակող է	էջ 24	Լիլիթ
Հայրենի լեռնաշխարհն ամուր թիկունքս է	էջ 25	Գայանե Հովհաննիսյան
Աշխարհն առեղծված է, մարդը՝ վերծանող	էջ 25-26	
Հնամենի ընկուզենին	էջ 27	Հայկ Խաչատրյան
Գրիգոր Տաթևացի	էջ 28	Աշխեն Գրիգորյան
1500-ամեայ հայոց գիրը. Գրիգոր Զօհրապ	էջ 29	Հոկոտա Հակոբյան
Հին Թիֆլիսը և Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը (1825-1912)	էջ 30-31	Արամ Ալեքսանյան
Հովհաննես Լազարյան (1735-1801)	էջ 31	
Ս ի պ ի լ	էջ 32	Փ. Հովհաննիսյան
Սելևկիա	էջ 33	Զենմա Բաղդադյան
Նոր հրատարակություններ	էջ 34-35	
Հայոց մկրտութիւն՝ հոգեւոր վերածնունդ	էջ 36	Հովիկ Սկրտչյան

Հրատարակիչ՝  
 «Ուխտ Արարատի»  
 ՍՊԸ

Տպաքանակը՝ 1000  
 Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
 Համարի թողարկման  
 պատասխանատուներ՝  
 Տիգրան Փաշաբեզյան,  
 Գևորգ Յազըճյան

Տպագրված է «ԱՍՄԱՐԿ»  
 տպարանում  
 Ստորագրվել է  
 տպագրության  
 19.12. 2005

Խմբագրության հասցեն  
 375023, Երևան,  
 Մաշտոցի 8  
 Հեռ. 56-71-50

Official periodical of  
 "Oukht Ararati"  
 LTD

EDITORIAL BOARD  
 Responsible of the issue:  
 Tigran Pashabezyan,  
 Gevorg Yazedjyan

Address: 375023,  
 Yerevan, Mashtots 8  
 Tel. 56-71-50  
 E-mail:  
 oukhtaradi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

**«Ուխտ Արարատի»  
 ամսագրից նյութեր  
 արտատպելիս՝ խնդրում  
 ենք հղում կատարել:**

**Հարգելով հեղինակային  
 իրավունքը՝ ստացված  
 հոդվածները չենք  
 խմբագրում:**





## ՉԻ ԿԱՐԵԼԻ ԹՈՒՅԼ ՏԱԼ ՕՏԱՐՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Ն

2005թ. նոյեմբերի 27-ին անցկացված Սահմանադրական փոփոխությունների հանրաքվեն հերթական անգամ ցույց տվեց ամբողջ հայության՝ հայաստանաբնակ թե արտաբնակ, աղետալի չափսերի հասած օտարումն իր հայրենիքից և ազգային լինելու կոչված, բայց այսօր այդպիսին չեղող պետականության գաղափարից:

Ս

Նախորդ և ներկա իշխանավորները «Հայրենիք» և «Ազգային պետականություն» գաղափարներն այնքան են հասցրել այլանդակել ու վարկաբեկել, որ ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև ողջ հայությունը, չնչին բացառություններով, օտարվել է հենց այդ՝ սուրբ գաղափարներից: Արդյունքը՝ սեփական Հայրենիքի, սեփական պետության նկատմամբ համատարած անտարբերության զգացումը, որն, ի վերջո, նշանակում է՝ անտարբերություն սեփական

Գ

Ս

Ը

Գ

Ս

Բ

Ս

Ն

ճակատագրի իսկ նկատմամբ: Հենց այս վերջինն է, որ չի գիտակցվում. չի գիտակցվում այն պարզ ճշմարտությունը, թե սեփական Հայրենիքից և սեփական պետությունից դուրս «չիք փրկություն»: Ահա թե ինչու չի դադարում արտագաղթը նույնիսկ «տնտեսական աճի» պայմաններում, ահա թե ինչու հայ մարդկանց մեծագույն մասը շարունակում է իր իսկ Հայրենիքում ապրել լիովին օտարվածի զգացումներով:



Սա կործանման սկիզբը կարող է լինել: Հանրահայտ ճշմարտություն է, թե պատմությունը կրկնվում է նրանց համար միայն, ովքեր խելամտություն չեն ունենում դա քաղել նրանից: Մեր այսօրվա իշխանավորները, մեծ ու փոքր տրամաչափի պետական պաշտոնյաների մեծագույն մասը, նաև ընդդիմադիրների ջախջախիչ մեծամասնությունը ոչ մի դաս չեն քաղել Հայաստանի առաջին Հանրապետության պատմությունից: Նրանք երբևէ իրենք իրենց հարց տվե՞լ են, թե ինչո՞ւ Հայոց առաջին Հանրապետությունը կործանվեց:

Հարց ենք տալիս. այդ ինչպե՞ս եղավ, որ

1918թ. գարնանը դեռևս պետականություն և կազմակերպված բանակ չունեցող ժողովուրդը ծառս եղավ թուրքին և կերտեց մայրաքաղաքի հերոսամարտերը, իսկ երկուսուկես տարի հետո, արդեն պետականության և կազմակերպված բանակի պայմաններում՝ խայտառակ, պարտություն կրեց՝ վրա տալով կիսանկախ պետականությունն ու Հայրենիքի տարածքի մեծագույն մասը:

Պատասխանը շատ հստակ է. որովհետև այս շատ կարճ ժամանակահատվածում 1918-ի հերոսները «հասցրեցին» այնքան անմարդկայնանալ, ապազգայնանալ, նյութական հարստության կուտակման մրցավազքում այնքան լկտիանալ, որ թուրքի յաթաղանը բազմիցս ճաշակած ժողովուրդը նախընտրեց ապավինել նույն թշնամու ողորմությանը, քան շարունակել «վայելել» երեկվա ազգային հերոս, այսօրվա ազգային

տականքի իշխանության «բարիքները»: Մի խոսքով՝ ժողովուրդն օտարվեց իր Հայրենիքից ու պետությունից, որովհետև նրա մոտ այդ գաղափարներն ուղղակի զուգորդվում էին իշխանավորների վարվելակերպի հետ:

Ժողովրդի մեծ մասը չգիտի, կարիք էլ չունի իմանալու, թե հիմնովին տարբեր հասկացություններ են «Հայրենիքը», «Ազգային պետությունը», «վարչակարգը» և «իշխանավորները»: Վերջին երկուքը ժամանակավոր երևույթներ են և, ի վերջո, գնայուն են, մինչդեռ պետությունը մնայուն արժեք է, իսկ Հայրենիքը՝ հավիտենական արժեք: Ահա այս գիտակցությամբ էլ պետք է մոտենալ ՀՀ-ում և առհասարակ հայ իրականության մեջ տեղի ունեցող իրադարձություններին: Այդ դեպքում միայն՝ ոչ մի օտարում տեղի չի ունենա:

Հայրենիքը ՄԵՆՔ ենք, հայոց ազգային պետությունը ՄԵՆՔ ենք՝ հայ ժողովուրդը: Սրանք գերիվեր արժեքներ են, որոնց պարտավոր են ստորադասվել բոլոր ժամանակների իշխանավորները:



# ԳՈՒՐԳԵՆ ՅԱՆԻԿՅԱՆ

## Կենսագրական համառոտ ակնարկ

Գուրգեն Յանիկյանը ծնվել է Կարինում (Էրզրում), 1895-ի դեկտեմբերի 24-ին: Հազիվ վեց ամսական էր, երբ տեղի ունեցավ կիլիկիահայության պատմական մեծ ջարդը, որին զոհ գնացին ավելի քան 300.000 անմեղ հայեր:

Գուրգենի հայրը սերտ հարաբերություն ուներ Կարինում պարսկական հյուպատոսի հետ: Դրանից օգտվելով՝ իրենց ընտանիքն ու 28 հարազատներ ապաստանում են պարսկական հյուպատոսարանում: Այնուհետև, հյուպատոսի կարգադրությամբ, լեռնային ճամփաներով հասնում են Կարսի Քյոթահ գյուղը: Պարզվում է, որ փոքրիկ Գուրգենը չկա. հոգնած և սառնամանիքից անզգա դարձած մոր զրկից սահել ու ընկել էր ճանապարհին: Մայրը և Հակոբ եղբայրը որոշում են վերադառնալ՝ փոքրիկին գտնելու: Գտնում են մանուկ Գուրգենին՝ զրեթե անկենդան վիճակում: Հասնում են Կարս: Կարճ ժամանակ հետո, քաղաքական նպատակով, փոքրիկ Գուրգենը դառնում է պարսկահպատակ:

Տարիներ անց մայրը, Հակոբ եղբայրը ու վեց տարեկան Գուրգենը գաղտնի վերադառնում են Էրզրում՝ իրենց տան ախոռում թաղված ոսկեղենն ու կարևոր փաստաթղթեր պարունակող երկաթե արկղը գտնելու: Աղջամուղջին Գուրգենն ու մայրը թաքնվում են ախոռին կից սենյակում, որի ճեղքից դիտելով՝ հետևում էին Հակոբին: Բրիչի հարվածների ծայնից երկու թուրք, ներս մտնելով, բռնում են Հակոբին և գլուխը դանակով կտրում: Գուրգենը սարսափահար փորձում է գոռալ, բայց մայրն անմիջապես իր ափով ամուր փակում է նրա բերանը, որ նա ևս զոհ չդառնա: Երկու ոճրագործ թուրքերը, արկղը հանելով, անհայտանում են: Մայրը համբուրում է իր մորթված զավակի արյունոտ գլուխը և Գուրգենի հետ հասնում պարսկական հյուպատոսարան:

Գուրգենը, մոր և Սաթենիկ քրոջ հետ ուղարկվում է Ժնև, որտեղ էլ հաճախում է ֆրանսիական վարժարան: 3 տարի հետո վերադառնում են Կարս, ուղարկվում՝ Նոր Նախիջևանի հայկական վարժարանը: Այնուհետև նա ուսումը շարունակում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվում է Մոսկվայի համալսարանի ճարտարապետության ֆակուլտետը:

Պայթում է Առաջին համաշխարհային պատերազմը: Գ. Յանիկյանը մտածում է, որ հասել է հայ ժողովրդի և եղբոր վրեժը լուծելու ժամանակը: 50 ուսանողներով

որոշում են մեկնել Թիֆլիս՝ կամավորական արձանագրության գրասենյակ, որտեղից բուլդոզերն էլ ուղարկվում են Բ գնդի հրամանատար Դրոյի բանակատեղին:

Ծնողները գալիս են Իգդիր՝ ճանապարհելու: Բաժանման պահին հայրը նրան ասում է. «Տղա՛ս, չմոռանաս ազգիդ վրեժը, չամաչեցնես ինձ»: Երիտասարդ Գուրգենը պատասխանում է. «Հայրիկ, մի՞թե կասկածում ես, ո՞ւմ զավակն եմ...»:

Թուրքական բանակը գրավել էր Կարսը. ընտանիքը փախել էր Թիֆլիս: Կարսի հայկական ելեղեցին հրո ճարակ էր դարձել, նրա բակում և ներսում 3000-ից ավելի այրված մարմիններ դիզված էին այլանդակ ձևերով: Այդ տեսարանի մասին պատմելիս՝ նա անկարող էր զսպել հուզումն ու արցունքները. «Այդ օրից ես ուխտեցի ցնցել թուրքերին, այդ օրից վրեժը եղավ իմ կյանքի գլխավոր նպատակը»:

Գ. Յանիկյանը մեկնում է Մոսկվա՝ շարունակելու կիսատ թողած ուսումը: Բացառիկ հաջողությամբ ստանում է ճարտարագետի վկայական: Կատարելագործվելու համար հաճախում է Շվեյցարիայի համալսարան՝ ստանալով ճարտարագետի տիտղոս: Վերադառնում է Թիֆլիս, ապա՝ անցնում Խարկով, որտեղ կառավարության կողմից նշանակվում է պատասխանատու պաշտոնի:

Գ. Յանիկյանն ամուսնանում է Խարկովում հայտնի Քյոմուրճյան ընտանիքի աղջկա՝ բժշկուհի Շուշանիկի հետ: Որպես ամուսնության գլխավոր պայման՝ Գուրգենը խնդրել է Շուշանիկի աջակցությունն իր ուխտին, որը նա հավատարմորեն կատարել է մինչև մահը՝ 1974թ.:

1930-ին իր տիկնոջ հետ մեկնում է Պարսկաստան՝ Թավրիզ, որտեղ հիմնում է առաջին մետաղածուլարանը: Որպես արվեստագետ-քանդակագործ՝ կառավարության խնդրանքով պատրաստում է Պարսկաստանի նշանավոր անձանց ու թագավորների մետաղե արձանները: Կառավարության կողմից հրավիրվում է Թեհրան՝ ղեկավարելու երկրին անհրաժեշտ մի շարք շինարարություններ: Կառավարության պատվերով կառուցում է Պարսկաստանի առաջին և մեծագույն ստորերկրյա զինագործարանը:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ դաշնակից բանակները գտնվում էին Պարսկաստանում: Դաշնակից մեծ պետություններից դեպի Խորհրդային Միություն մեկնող և զինամթերք փոխադրող նավերը մեծ կորուստներ էին կրում գերմանական սուզանավերի կողմից: Որոշվում է օգնությունը հասցնել Պարսկաստանով:

Ամերիկացիները, վստահելով Յանիկյանի ուժերին և ճշտապահությանը, խնդրում են նրան ճանապարհի կառուցումն ավարտել 10 ամսում: Նա համաձայնվում է: Արժանապատվության ու պատասխանատվության զգացումով, հայի համառ կամքով ու ճիգով էր կատարում այս շատ ծանր աշխատանքը: Խոստացված 10 ամսվա փոխարեն Յանիկյանը, երեքուկես ամիս շուտ վերջացնելով, հեռաձայնում է ամերիկացի ընդհանուր հրամա-



նատարին, թե ճանապարհը պատրաստ է շահագործման: Ամերիկացին, չհավատալով լսածին, իր օգնականներով մեկնում է Ջանջան կայարան և ականատես լինում իրողությանը:

Իր այս ձեռնարկից շահելով որոշակի գումար՝ Գուրգեն Յանիկյանը տիկնոջ՝ Շուշանիկի հետ որոշում է անցնել հոր պատգամի և իր երդման իրագործմանը, որը նյութական մեծ ծախսեր էր պահանջում:

«Մեր ծրագիրը շատ պարզ էր. մեր անձնական դրամով գաղտնի կերպով պատրաստել մի շարժանկար՝ ցույց տալու աշխարհին մեր ժողովրդի քաշած տանջանքները և վայրենի-գազան թուրքի կոտորածները, Հայկական ցեղասպանությունը՝ չմոռանալով, այսպես ասած, քաղաքակրթված ազգերի դավադրությունները՝ հանդեպ մեր իրավունքները:

Սկըր և Լոզանը իրենց արժանի տեղն ու գնահատականն էին գտնելու այդ շարժանկարի մեջ: Գիրքը և սցենարը ես պատրաստել էի արդեն, իսկ անունը տիկնոս էր ընտրել՝ «Դրախտ» վերնագրով: Շարժապատկերը (բացատրական գրքուկների հետ միասին) ձրի պիտի ցուցադրվեր աշխարհի բոլոր անկյուններում: Մեր ցանկությունն էր ցնցել մարդկության խիղճը, արթնացնել մեր քնած ժողովրդին, նոր կյանք և հույս ներշնչել նոր սերնդին, բուն պայքարի մի նոր ձև՝ շղթայագերծելու մեր հողային իրավունքները: Այս ծրագրի իրագործման համար մտածում էինք գտնել հարմար վայր»:

Մինչև Կալիֆոռնիայում հաստատվելը՝ Յանիկյանը 2 անգամ եղել է Դեր Ջորում և Բաղդադում: Մի քուրդ գյուղապետի օգնությամբ այցելել է 1915-ի հայկական կոտորածների վայրերը: Շատ տեղերում պեղել տալով՝ հազարավոր թաղված ...կմախքներ է դուրս հանել:

Չորս անգամ աշխարհի շուրջը ճամփորդելով՝ կատարել է լուրջ ուսումնասիրություններ՝ ազգերի ու կրոնների պատմության վերաբերյալ: Իր շրջապատույտների ընթացքում մոտիկից ծանոթացել է Հունաստանի Գեորգիոս II թագավորի, Եգիպտոսի Ֆարուք թագավորի, վարչապետների, նախարարների և բարձրաստիճան այլ պետական այրերի հետ, որոնց բոլորի ստորագրությունները կան թուրքական այն հազվագյուտ թղթադրամի վրա, որը շատ թանկարժեք յուղանկարի հետ հետագայում օգտագործեց 2 թուրք հյուպատոսների սպանության ժամանակ:

Գրել է քաղաքական, աստվածաբանական և ընկերաբանական հոդվածներ՝ Նեգրուզ ստորագրությամբ: Իր «Հուղայի հաղթանակը», «Հարեմի խաչը», «Համբարձված Հիսուսը», «Անհատը», «Կյանքի սիմֆոնիան», «Մեր Մեսիան» և «Դրախտը» գրքերը թարգմանվել են ֆրանսերեն, անգլերեն և գերմաներեն: Նրա հեղինակած գրքերը հատկանշվում են մարդկային խոր ապրումներով և փիլիսոփայական խորհրդածություններով: Իր գրական վաստակի համար Յանիկյանն արժանացել է ամերիկյան «Who's Who», «Blue Book», «Mark Twain» գրական կազմակերպությունների պատվավոր անդամի և «International Institute of Art and Literature» շվեյցարական գեղարվեստական հիմնարկի ցմահ պատվո անդամության լինելով 1800 անդամներից միակ հայը՝ Վիլյամ Սարոյանի կողքին:

Հայկական ոչ մի քաղաքական կազմակերպության մեջ նա չի եղել, բոլորի հետ ունեցել է բարեկամական կապեր:

Յանիկյանը ստեղծել է «Յանիկյան» իր անունը կրող սարքը, որի միջոցով կարելի է տեսնել երկրի 400 ուտը՝ խորությամբ և 40 ուտը տրամագծով ծավալի մեջ գտնվող իրերը: Սարքի ստեղծման համար խթան է ծառայել 8 տարեկան մի աղջնակի՝ գետնի բացվածքում ընկնելն ու կորչելը: Իր գյուտի համար ամերիկյան կառավարությունից գնահատական նամակ և նյութական նվեր է ստացել: Նյութական նվերը վերադարձնելով կառավարությանը՝ խնդրել է, որ այդ սարքը գործածվի միմիայն բարի նպատակների համար: Երբ նա ցանկանում էր հետախուզել Դեր Ջորի անապատները, հավաքել հայերի կմախքները և հարմար մի տեղում հսկա հուշարձան կանգնեցնել, դիմում է ամերիկյան կառավարությանը, իր հնարած սարքի օգտագործման թույլտվությունը ստանալու համար, մերժվում է: Ահավասիկ, այս պայմանների և դրդապատճառների ճնշման տակ գտնվող կարինգի Յանիկյանը պարտավորված է զգում կատարել հունվարի 27-ի արարքը՝ «Մահ իմացյալ անմահություն է» նշանաբանով: Յանիկյանը խառնվածքով հաստատուն կամքի տեր բացառիկ մի ծնունդ էր. ծրագրող, հեռատես և համառ հարատևող: Իր որոշումներում՝ աննահանջ, անկաշկանդ և վճռական: Որպես մարդ՝ արդարությունը պաշտող և անարդարության դեմ ուխտյալ պայքարող:



Նա ջատագովն էր աշխարհի բոլոր ազգերի խաղաղ համակեցության: Որպես հայ՝ անսահմանորեն հպարտ էր իր կոչումով և ազգությամբ: Եզակի հայ, որ կարողացավ անցնել ռուբիկոնը, կատարել վճռական, համարձակ և անդամալի քայլը: Ահա՛ նրա համառոտ կենսագրությունը: Ահա՛ Հայկական հարցը կենդանացնող, դրա համար իր կյանքը նվիրաբերող անձը, որը դատապարտվեց ցմահ բանտարկության՝ 78 տարեկան ալեհեր հասակում: Ավելի քան 10 տարի բանտում մնալուց հետո «մարդասեր» ամերիկյան իշխանությունները 88-ամյա Գուրգեն Յանիկյանին բանտից հանեցին (երբ նա արդեն ծանր հիվանդ էր ու մահամերձ) և դրեցին տնային կալանքի տակ: Մի քանի շաբաթ անց՝ 1984-ի մարտի 27-ին, Հերոսը հավերժ փակեց աչքերը: Նրա մարմինը հանձնվեց ամերիկյան հողին:

1998թ. «Ֆրեզնո բի» թերթի հունվարի 25-ի համարում՝ 25 տարի քար լռությունից հետո, վերջապես խոստովանեց Յանիկյանի դատախազ Միները. «Ցավում եմ, որ թույլ չտրվեցի ցեղասպանության վերաբերյալ փաստերի լիարժեք ներկայացմանը, ոչ միայն նրա համար, որ պատմության ամենամուռ էջերը՝ ցեղասպանությունները, պետք է բացահայտվեն, որպեսզի այլևս չկրկնվեն արհավիրքները: Դժբախտաբար, Հայկական ցեղասպանությունը ցարդ չի դատապարտված...»:

Գուրգեն Յանիկյանի մասունքները, Հայկական ազատագրական պայքարի հին ու նոր ֆիդայիների աշունների նման, հայրենադարձության են սպասում:

Գուրգեն Յանիկյանը հավերժ միացել է իրեն ծնող Ցեղի Ոգուն և դարձել Հայության հավիտենական կենսագրության մասնիկը:



# ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆԻ ԵՐԿԱՐ ՆԱՄԱԿ-ՅՈՒՇԱԳՐԻՆ ՎԵՐՋԻՆ ՄԱՍԸ

...Սիրելի՛ ցեղակիցներ,  
Այս մասը մասնաւորապէս պիտի հետաքրքրէ ձեզ, որովհետեւ, կազմելով իմ ընդհանուր գաղափարների մասը, վերաբերում է մեր ցեղին, որը, հանգամանքներից ստիպուած, ցրուած է ամբողջ աշխարհում:

Շատ բնական է եւ զարմանալու էլ բան չկայ, որ ձեզանից շատերը զարմացած նայում են աշխարհի մեծերին ու նրանց, այսպէս կոչուած, «միացեալ կապիկներից» կազմած ընդհանուր ժողովին, որն ըստ իր կանոնագրութեան՝ պիտի քննէ ու պաշտպանէ բոլոր ազգերի, նամանաւանդ փոքր ազգերի իրաւունքները...

Ո՞վ չի խաբէլ մեզ...Ո՞վ չի աշխատել օգտագործել մեր ազգը իր սեփական շահերի համար... Չետաքրքրուողները թող կարդան պատմութիւնը. ես պատմութիւն գրելու ցանկութիւն չունեմ:

Մենք, որ աշխարհիս ամենահին ազգերից մէկն ենք, մենք, որ քանիցս, երբ պատմութեան փոշին ուզել է մեզ ծածկել, շնորհիւ մեր զաւակների կամքին՝ նոր ծնունդ ենք առել եւ նրանց զոհողութեամբ մինչ այսօր էլ ապրում ենք մեր անունով ու ՆԱՅԻՐԵԱՆ կամքով, պիտի մոռանա՞նք կապիտալիստական սիստեմի արարքները դէպի մեզ՝ հայ ազգը:

Փառք ազգի զաւակներին, որ նրանք կերտում են մի նոր ՆԱՅԻՐԵԱՆ երկիր, որ պիտի զարմացնէ արար մարդկութեանը: Աշխարհի ամէն կողմ ցրուած հայերը ունեն ամէն տեսակ հպատակութիւն: Նրանք մի ազգի զաւակներ են, ովքեր յիշում են անցեալը եւ լեցուած են ցատունով, որ վերջապէս գազանը ստանայ իր արծանի պատիժը ու վերադարձնէ մեզմիջ գողացածը:

Միայն վրժի ցատունը չէ, որ ղեկավարելու է մեր արարքները, այլեւ մեր ցանկութիւնը. ապացուցել մարդկութեանը, որ ՀԱՅ մարդը, անխտիր, ինչ երկրում էլ նա ապրում է, ուն հպատակութիւնն էլ կրում է - դեռ չի մեռել եւ իր կրօնը ու դեռ պահում է վառ արդարութեան ու հաշուետուութեան պահանջները:

Տասնեակ տարիներ մեզ քնեցրել են խոստումներով, եւ մենք դիվանագետների սեղանների վերայ դարսած թղթերի կոյտերից ոչ մի արդիւնք չենք ունեցել: Կան շատեր, որ ցանկանում են, որ կամաց-կամաց Հայը մոռանայ իր պահանջներն, ու պատմութեան փոշին այս անգամ էլ ծածկի մարդկութեան կողմից կատարուած անարդարութիւնները:

Երբ պատմութիւնը մեզ սովորեցնում է, որ այս աշխարհում միայն ուժն է թելադրում մարդկային գործերը, դէ, այն ժամանակ ի՞նչ իրաւունք ունենք մենք՝ հայերս, որպէս ԴՈՆ-ՔԻՇՈՏՆԵՐ սաւառնել երկնքում արդարութիւն որոնելով:

Մեր պատմութիւնը ապացուցել է աշխարհին, որ հայ



**Այս հարուածները ծնունդ տուին ՀԱՀԳ Բանակին սփիւռքահայ այն միակ կազմակերպութեան, որ խորապէս կը գիտակցէր, թէ դէպի Հայրենիք ծանապարհը ծածկուած չէր մետաքսեայ գորգերով:**

ազգը կարող է կռուել:  
Անցեալներում հազարաւոր մեր եղբայրներից գնում էին կամաւոր կերպով դէպի մահը եւ ժպտում էին, երբ կտրուում էր նրանց կեանքի թելը:

Չեն կարծում, որ կեանքի հաճոյքներն ու կապիտալիստական սիստեմը կատարել են իրենց քանդիչ գործը եւ ստեղծել դրութիւն, որ մեր կեանքում արդէն բացակայում են անձնագոհ ու գաղափարի համար զոհուող անհատներ:

Չի կարելի նոյնիսկ ենթադրել, որ ազգիս ողբերգութիւնը ցոյց տուող զրականութիւնը եւ կառուցուած կորողները զանազա Գ Ա Ճ

երկրունքում չեն լեցրել մեր մատաղ սերունդի ներքին աշխարհը ցանկութիւններով օգնել իրեն կեանք տուող ցեղին, բարձրացնել եւ իր ձայնը մարդկութեան դէմ:

Թող Թուրքիան եւ նրա բարեկամները մեզ կոչեն ԳԷՇ, բայց չանուանեն ԷՇ:

Տրուած են աշխարհի չորս կողմը եւ նրանք, որոնց արդէն տարիքն առած ուղեղներում դեռ վառ են մնացել անցած օրերի արիւնոտ պատկերները, նրանք աշխատել են օգնել իրենց կեանք տուող ցեղին, երբ դեռ երիտասարդ էին ու կռուել են գազանների դէմ: Տարակոյս չկայ, որ նրանց մէջ էլ դեռ չի մեռել բողոքող եւ իրաւունքները պահանջող ոգին:

**Ես ոչ միայն մենակ մնալու չեմ, այլ ԼԻՆԵԼՈՒ ԵՄ Ե՛՛ւ առաջինը, որ պիտի հնչեցնէ այս նոր ձեւի պատերազմի հրաւիրող փողը:**

Անցած տարիները եկան ինձ ապացուցելու, որ այս աշխարհում ազատութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն եւ սրանց նման բարձր գաղափարների իմաստը, եթէ այսպէս շարունակուի մեր կեանքը, շուտով միայն բառարաններում ենք գտնելու: Բաւական է, որքան հայ անհատը, գնչու դառած, դռնեղուռ ընկած ողորմութիւն է աղերսում մարդկութիւնից:

Ես՝ անհատս, ո՛չ ցանկութիւն ունեմ այլեւս լռելու եւ ո՛չ էլ ժամանակ:

Միակ ցանկութիւնը, որ մնում է իմ մէջ, այդ է՝ չլինել միակն այս ձեւի պատերազմն իրականացնելու գործում: Վերջնական յաղթանակը լինելու է մերը, կասկած չունեմ:

Դո՛ւք՝ հայ ազգի զաւակներ, ՆԵՄԵՍԻՍՆԵՐ դարձած, հարուածէք թշնամուն ամէն մի տեղ, որտեղ դուք ինք-



Ներդ յարմար կը գտնեք:

Հանգամանքներից են կախուած, թէ ե՞րբ, որտե՞ղ եւ ինչպե՞ս ես պիտի հնչեցնեմ այս նոր տեսակ հայ անհատի որոշած պատերազմի առաջին փողը...:

Յուսով եմ, որ շատ ժամանակ անցնելու չէ:

Տարիներ էին ինձ հարկաւոր, որ ես գայի այս որոշմանը:

Երկար ամիսներ էին հարկաւոր, որ ես պատրաստի որոշածիս իրագործումը, որովհետեւ ես գիտէի, թէ ես այրում եմ բոլոր կամուրջներն իմ հետեւից եւ վերադառնա-

լու հարց չէր կարող լինել:

Կասկած չունեմ, որ ես մենակ լինելու չեմ: Կասկած չունեմ, որ լինելու եմ ինձ նմանները, որոնք հասկանալով, որ մենք այլեւս ուրիշ ելք չունենք, դիմելու ենք մի միջոցի, որը միակ հասկանալի լեզուն է մեր ներկայիս կեանքում:

Սանթա Բարբարա  
Սեպտեմբեր, 1972թ.

**ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆ**  
**ՆԵՄԵՍԻՍ դարձած մի հայու զաւակ**



Երբ այս նամակը կը կարդայք՝ արդէն ես, որ հեղինակն եմ այս նոր ձեւի պատերազմին ու տարիների ընթացքում փայփայել է այս գաղափարը, արդէն անցել եմ նրա իրագործման...

Ես լինելու եմ ե՛ր առաջինը, եւ լինելու եմ օրինակ շատ շատերին...

Կասկած չունեմ, որ ինձ նման մտածողների ցանկը կարճ լինելու չէ...

Կասկած չունեմ, որ շատերն են գնալու այս նոր ձեւի պատերազմի ճանապարհով...

Կասկած չունեմ, որ ամէն մի հայ անհատ պիտի աշխատի տարածել այս նոր ձեւի պատերազմի գաղափարը, եւ, պէտք եղած դէպքում, ՀԱՅ ԱՆՀԱՏԸ ՕԳՆԵԼՈՒ Է ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ:

**ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԿԵԱՆ**  
**ՆԵՄԵՍԻՍ դարձած մի հայ անհատ**

*Ո՛չ՝ Եանիկեան ծուռ մըն է այն Սասնայ ծռերուն նման, որ հայ ժողովուրդը երգած ու պաշտած է դարերէ ի վեր: Եանիկեանը ամչցուց հայ քաղքենի ղեկավարութիւնն ու հայ ժողովուրդի անտարբեր խաւը, բայց ան ներշնչեց ու ծնունդ տուաւ նոր ծռերու:*

## ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ, ՈՐ ԴՈՒՔ ԿԱՔ

Բարև անծանոթ բարեկամիս, ավագ եղբորս, համախոհիս, ընկերոջս, չնայած՝ երկի ես դեռ փոքր եմ ձեր ընկերը կամ համակիրը համարվելու համար: Բայց, անկախ ձեր կամքից, դուք ինձ համար և՛ ընկեր եք, և՛ եղբայր, և՛ կյանքի ճիշտ ուղին ցույց տվող շատ հարազատ անձնավորություն: Ցավոք, դեռ մինչև հիմա անմիջակա՝ նորեն չեմ ճանաչում ձեզ, բայց իմ կարծիքով շատ լավ ճանաչում եմ ՀԱՅԳԲ-ի յուրաքանչյուր մարտիկին, նույնիսկ դեռ անհայտ, որը մտածում է յանիկյանակերպ, ասել է թե՛ հայակերպ, աստվածակերպ:

Ես ինչ-որ չափով «Հայ արիներ», «Վասն հայության», «Ուխտ Արարատի» պարբերականների և Գուրգեն Յանիկյանի «Նպատակ և ճշմարտություն» գրքի միջոցով ծանոթացել եմ ձեր գործելակերպին, գործողություններին ու նաև ձեզ: Թող չթվա, թէ կեղծավորությամբ փորձում եմ գրավել ձեր ուշադրությունը, բայց դուք ինձ համար կատարելության ամենաբարձր աստիճանին հասած մարդ-աստվածներ եք, մտքեղան ցեղապաշտ հայորդիք, կենդանի լեզուններ, մարդկային մարմնում ամբողջացած հինգհազարամյա մի ժողովրդի պատմություն: Հայկյան եռաթև նետի ուժն է ձեզ տրված, Մամիկոնյանների սկզբունքայնությանն ու Նժդեհի ազգային վեհ գաղափարների կրողն եք դուք: Դուք մեր մեծ ազգի հույսն էիք ու այժմյան լույս սփռողն եք: Դուք մեր Հայկն եք, Մամիկոնյան Վարդանը, Մխիթարը, Դավիթ Բեկը, Նժդեհն ու Անդրանիկը, ծուռ սասունցին եք ու քաղաքակիրթ եվրոպացին, դուք Վազգեն Սիսյանն եք ու Վարու-

ժան Կարապետյանը, ձեր բոլորի անունները անհնար է նշել, ինչպես անհնար է չափել ձեր ոգու մեծության, նվիրվածության աստիճանը:

Երկի սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ հիմնականում ձեզ նման եմ մտածում: Իմ գլխավոր նպատակներից մեկն էր նմանվել Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի զինվորներին, հասնել կատարելության աստիճանի՝ ճանապարհի հարթել դեպի Մասիսը, ինչպես որ նրանք էին մեզ համար հարթում 1975-ից (1973-ից Գուրգեն Յանիկյան) սկսած:

Շատերն են ասում, որ ԱՍԱԼԱ-ն լուծարվել է, բայց ես խստորեն կասկածում եմ այս մտքի իսկության վրա. նման հզոր կառույց չի կարող լուծարվել, որովհետև իրավունք չունի, հայ ժողովուրդը անպայման պետք է ունենա նման ուժային կառույց, բայց այնուամենայնիվ...

Ինչպես գիտենք, այսօր պաշտոնապես գործում և իր ակտիվ գործունեությունն է ծավալում ասալայական մի նոր կազմակերպություն՝ «Ուխտ Արարատի» անունով: Այս կազմակերպությունը շատ մեծ խնդիրներ ունի լուծելու իր անհարթ ճանապարհին լինի դա ուժի, թե՛ այլ միջոցներով: Եվ հենց այս նպատակներով է, որ ՀԱՅԳԲ-ն ինձ հարազատ է, և ես մեծ սիրով ու հպարտությամբ, ձեր թույլտվության և միջնորդության դեպքում իմ փոքր լուծման կներդնեմ մեր միասնական խնդիրների հաղթահարման համար:

**ՆԱՐԵԿ ԱՌՈՒՏԱՍՅԱՆ**



# Մ Ե Ր Ն Ա Յ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը



### ՆՈՒՊԱՐ ԵԱԼԸՍԵԱՆ

Արեւմտեան Հայաստանի հայկական Վարդօ գիւղին մէջ հայկական գեղջուկ ընտանիքի մը յարկէն ներս, 1958-ին աշխարհ կու գայ Ռեշօ մկրտուած մանուկ մը, որ յետագային կը կոչուի ՆՈՒՊԱՐ ԵԱԼԸՍԵԱՆ:

1969-ին՝ 12 տարիքը չբոլորած, Եալըմեան կ'անցնի Պոլիս եւ կը յաճախէ հայկական վարժարաններ: Պոլսոյ Գուն Գափուի Պէզճեան ազգային վարժարանի աշակերտական տարիներուն իսկ կը սկսի գրիչ շարժել, գրական ու ընկերային նիւթեր շօշափելով տեղւոյն հայկական օրաթերթերէն մէկուն մէջ:


1977-ի Մայիսի մէկեան ցոյցին՝ Պոլսոյ Թաքսիմ հրապարակի նշանաւոր բախումներուն կը մասնակցի: Թեթևօրէն կը վիրաւորուի եւ կը ձերբազատուի թուրք ոստիկաններու ձեռքէն:

1978-ին կ'անցնի Հոլանտա: 1979-ին կը հիմնէ «Պայքար» ամսաթերթը, որով շեշտը կը դնէ հայ-քիւրտ-թուրք յեղափոխական միասնականութեան վրայ: 1980-ին կը կազմաւորէ Հոլանտահայ Երիտասարդաց Միութիւնը:

Գաղափարական ու քաղաքական իր խոր գիտակցութեամբ, Ն. Եալըմեան սիրելի անուն մը կը դառնայ ոչ միայն հայ, այլեւ Թուրքիոյ բոլոր ճնշուած ժողովուրդներուն համար:

Նուպար Եալըմեանը միշտ հաւատացած էր, թէ Թուրքիոյ «ՃՆՇՈՒՄԾ ԴԱՍԱԿԱՐԳՆ ԱԼ, ՀԵՏԵԵԼՈԿ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՆԱԶԱՆ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ ՊԱՅՔԱՐՈՂ ԻՐ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ ՕՐԻՆԱԿԻՆ, ՍԿՍԵՐ Է ԹՕԹԱՓԵԼ ԱՅԴ ԴԱՐԱԻՐ ՈՒ ՍՏՈՐ ԽԱԲԱՐԱՍՏՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐ ՀԱՅԵԱՑՔՆ ՈՒՂԴԵԼՈԿ ԴԷՊԻ ԼՈՒՍԱԻՐ ԾԱՆԱՊԱՐՅ, ՈՐՈՒ ՀԱՄԱՐ ԲԱԶՄԱՀԱԶԱՐ ԶՈՂՅԵՐ ԿՈՒ ՏԱՅ»:


1982-ի Նոյեմբերի 5-ի երեկոյան, թուրք գործակալներ կը դաշունահարեն Ն. Եալըմեանը, Իւրթեխք քաղաքի իր բնակարանին մէջ:



### ԺԱՆ ԽՈՉԵԱՆ

Նահատակուել է Լիբանանում, 18 Նոյեմբեր 1985-ին:


Հայ կաթոլիկ շրջանակների ներկայացուցիչ էր: Եւս մէկ վկայութիւն այն բանի, որ Նորագոյն զինեալ ազատագրական պայքարի գաղափարախօսութիւնը կարողացել էր ոգեշնչել ու միասնական պայքարի մղել հայութեան տարբեր հասարակական-քաղաքական եւ հոգեւոր հոսանքների պատկանող նուիրեալ մարդկանց ու երիտասարդներին:



### ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱԹՈՒՉԵԱՆ (1930-1985)

Նահատակուել է Լիբանանում, 19 Նոյեմբեր 1985-ին:

«ԱՆ մեր ազգային հերոսին անունը կը կրէր հպարտութեամբ ու կը միտէր արժանի ըլլալ առաւելագոյնս: Հայու բացառիկ դրական տիպար մըն էր իր ֆիզիկական կուռ կազմով, առիւծամման կեցուածքովը: Խիզախ էր ան, ինչպէս արժիւր հայկական լեռներուն»,- Ռամկավար ազատական կուսակցութեան Յովսէփեան ակումբի ատենապետ Արտրունի Մատուռեանի արտասանած հրաժեշտի վերջին խօսքից:








**ՄԻՆԱՍ ՄԻՍՈՆԵԱՆ (1952-1982)**

Մէկն էր ազատագրական պայքարին նուիրուած այն երիտասարդներից, ովքեր գործում էին անաղմուկ, ընդդատակեայ ու անտեսանելի: Բէյրութում 24 Դեկտեմբեր 1982-ին հայ ժողովուրդի պայքարող զաւակները ստորաբար չէզոքացնելու խաւարամած նթնուորտի մը մէջ՝ Պէյրութի նաւահանգիստի մօտակայքը, թուրք եւ տեղացի ֆաշիստական ուժերու գործակալներ կանխածրագրուած մահափորձի կ'ենթարկեն Մինաս Սիմոնեանը, որ իսկոյն կը մահանայ իր կրած ծանր վէրքերուն ի հետեւանք:

Ան իր կարելին տրամադրելու պատրաստակամութեամբ, իր անուրանալի եւ համեստ վաստակն է ներդրած հայ Նորագոյն զինեալ ազատագրական պայքարի հունաւորման գործընթացին մէջ:

Մինչեւ իր տարաբախտ նահատակութիւնը, ան խոր ատելութեամբ է յորդած հայ ժողովուրդի տեսանելի ու անտեսանելի թշնամիներու վայրագութիւնները՝ ցմրուր ճաշակելով օտար պետութիւններու խաբէպատիր քաղաքականութեան դառնութիւնը:

Տարիներ անբողջ՝ ան այրուած է Հայրենիքի կարօտով:



**ԳԱՌՆԻԿ ՎԱՐՈՒՍԵԱՆ (1960-1982)**

Տակաւին վաղ հասակում, մոռանալով հաճոյք ու վայելք, ան իրեն նուիրաբերեց Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակի (ASALA) մղած պայքարին՝ կատարելով տարբեր յանձնարարութիւններ:

Յեղափոխութիւնը միայն զէնք չէ, այլեւ ժողովրդային դժուարին աշխատանք: Խորապէս համոզուած այս իրականութեան՝ Գ. Վահրատեան կը լծուի այս գործունէութեան: Կը դառնայ յաճախակի «այցելու»-ն Լիբանանի, Սուրիոյ, Յունաստանի եւ այլ վայրերու հայկական տուններուն:

Ժողովուրդը կը դառնայ իր հետաքրքրութեան կիզակետը: Կը տխրի անոր տխրութեամբ, կ'ուրախանայ անոր ուրախութեամբ: Սօսեն կը ճանչնայ ժողովուրդին մտայնութիւնը, եւ անխոնջ աշխատանք տանելով՝ իր երիտասարդական աւիւնը կը ներդնէ ազատագրական պայքարի դժուարին առաքելութեան մէջ:

Անսակարկ նուիրումով կը շարունակէ առաջ տանիլ ժողովրդային զանգուածները փոշեծածկ մտածելակերպէ դուրս բերելու դժուարին աշխատանքը մինչեւ... չարաբախտ իր նահատակութիւնը՝ 8 Դեկտեմբեր 1982-ի գիշերը, Աթէնքի մէջ:

Թրքական խուճուտայի ահաբեկիչները դարանակալօրէն ռմբային յարձակումով կը խոցեն Գ. Վահրատեանի 22-ամեայ մարմինը, որ կը տառապէր հայ ժողովուրդի լուռ ցաւերով:



# ԳԻՏՆԱԿԱՆ - ՌԱԶՄԱԳԵՏԸ



*Վարդան Մալխասյանը՝ Ազատագրական բանակի «Արցախի վրիժառուներ» ջոկատի հրամանատարը, պատմում է հերոս-հրամանատար, երջանկահիշատակ Լեոնիդ Ազգալոյանի մասին:*

«Անկախության բանակ»-ն ուներ Յրամանատարական խորհուրդ, նրանք էին Լեոնիդ Ազգալոյանը, Ֆրիկ Մելիք-Ադամյանը, Նորայր Ադալյանը, Նորայր Գալստյանը և

Ալեքսանդր Թամանյանը: Ռազմավարական աշխատանքներով հիմնականում զբաղվում էր Լեոնիդ Ազգալոյանը, իսկ մնացած հարցերով՝ Ֆրիկ Մելիք-Ադամյանը:

Հայաստանի ազատագրության հայ զաղումի բանակի (ԱՍԱԼԱ) մասին աղոտ պատմառիկներ էին ընկել մեր ձեռքը, որոշակի տեղեկություն ունեինք Գուրգեն Յանիկյանից, բանակի ծրագրերից ու մարտավարությունից: Նրա մարտիկները, ովքեր ապրում ու գործում էին Սփյուռքում, իրենց խենթություններով կարծես *վարակեցին* մեզ. մենք էլ ինչ-որ կերպ ձգտում էինք նմանվել նրանց: Մեր պայքարը ԱՍԱԼԱ-ի մարտիկների պայքարից տարբերվում էր նրանով, որ մենք մարտի դաշտում էինք՝ ոսոխին դեմ դիմաց: Հիմնականում դա եղավ պատճառը, որ ջոկատը կոչվեց «Անկախության բանակ», այն Արցախի ազատամարտում ամենամարտունակ զորամիավորումներից էր և ամենածանր գործողություններից անգամ դուրս էր գալիս նվազագույն կորուստներով: Լեոնիդն իր զինվորներին անձամբ էր ընտրում: Ջոկատում կարգապահությունը դրված էր շատ խիստ մակարդակի վրա. հայ զինվորը պետք է միշտ լիներ զգոն՝ ամեն պահի պատրաստ, խմիչքի, օդու և թմրադեղերի գործածումը խստիվ արգելվում էր: Ձինվորը հանգիստն անցկացնում էր ինքնակրթությամբ, կամ ռազմական մարզումներով: Կուսակցական խնդիր չկար մեզ մոտ, մեր միակ նպատակը Հայաստանի հողերի ազատագրումն էր:

Մերո կապի մեջ էինք ԱՍԱԼԱ-ի մարտիկների հետ: Մեր գլխավոր հրամանատարը, թեկուզ հոգնած, խաղաղ ժամերին թուն չուներ. բացի այն, որ ռազմական ծրագրեր էր մշակում. արկերի լռության տակ նաև իր գիտական աշխատանքն էր շարունակում... (մասնագիտությամբ ֆիզիկոս էր, Լազերային գիտահետազոտական ինստիտուտում ավագ գիտաշխատող): Կարդում էր նաև Ավետարան, Ղուրան, մորմոնների մասին գրքեր: «Ավետարանը խոր փիլիսոփայություն է, մի քանի տեղից հավաքած», - ասում էր նա: Համեմատում էր Աստվածաշունչն ու Ղուրանը, շատ նմանություններ էր գտնում, և ասում էր, որ կպարզի՝ հույններն են թուրքերից վերցրել, թե՞ թուրքերը՝ հույներից:

Ավա՛ղ, նա մեծ գիտնական կդառնար... Հայոց բանակի հրամանատարական կազմի անդամների մեծ մասը գիտաշխատողներ էին:

«Անկախության բանակ»-ը դարձավ Արցախի բանակի հիմնաքարը, քանի որ նրա բանակի այսօրվա սպայակազմը «ուսանել է» մեր դպրոցում: Եվ ես համոզված եմ, նրանք կտարբերվեն մյուսներից, քանի որ խիստ կարգուկանոնի միջով են անցել, որը դրել էր Լ. Ազգալոյանը: Ես, լինելով հրամանատար, երկու անգամ պատժվել եմ ծխելու համար: Հրամանատարներիս մոտ կային փոխադարձ վստահություն և նվիրվածություն:

Դժբախտաբար, Լեոնիդին՝ մարդ-գիտնական-ռազմագետին և նրա նմաններին ըստ արժանվույն չեն գնահատում: Պատմության դասագրքում միայն լուսանկարը կա. դա հերոսի համար քիչ է: Հուսով եմ եմ, որ նրա և իր նմանների հիշատակը չի խամրի...

Լեոնիդն ասում էր. «Չկա Լաչին ու Քելբաջար՝ չի լինի Հայաստան»: Մեր ծրագիրը, նախ և առաջ այդ երկուսի ազատագրման շուրջ էր, հետո՝ Նախիջևան ու Արևմտյան Հայաստան:

Ամառ էր: Վերջին անգամ տեսա նրան և վերադարձա Հաթերք: Ջոկատիս մարտիկները ստացել էին Լեոնիդի մահվան բոթը. սգո ժապավեն էին կրում բազուկներին, դա 1992-ի հունիսի 21-ին էր: Հարցրեցի՝ ի՞նչ է պատահել, լռեցին: Միայն հաջորդ օրն ասացին...

Երբ նա գայրանում էր, իր վերջին և անառարկելի խոսքը լինում էր. «Ես Հայաստանն է ու վերջ»:

Լեոնիդ Ազգալոյանը լուռ, մտազբաղ, միաժամանակ, անչափ խիստ հայացք ուներ: Հայրենի բնության մեծ սիրահար էր...:

**ԼԻՏՎԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԾԱՆԱԶԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**  
Դեկտեմբերի 15-ին Լիտվայի խորհրդարանը որոշում է ընդունել 1915թ. Թուրքիայում Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ:

**ԱՂՐԲԵՋԱՆԻՆ ԿԶՐԿԵՆ ԵՆ ԽՎ-ՈՒՄ ԶԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԵՎ ԿՍՎՍՎԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԾԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ**  
Աղրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ և ընդդիմադիր «Ենի սիյասեթ» դաշինքի ղեկավարներից Ջարդուշտ Ալիզատեն Բաբվի «Էխո» թերթին ասել է, թե նոյեմբերի 6-ի խորհրդարանական խայտառակ ընտրություններից հետո հնարավոր է, որ Աղրբեջանին զրկեն ԵՆ ԽՄ-ում ձայնի իրավունքից: Բայց ամենասարսափելին այն է, որ կարող է սկսվել Լեռնային Ղարաբաղի ճանաչման գործընթացը: Միջազգային կազմակերպությունները միանշանակ հայտարարում են, որ եթե Աղրբեջանում ոտնահարվում են հենց աղրբեջանցիների իրավունքները, ապա ոչ ոք չի կարող երաշխիքներ տալ, որ մեր երկրում չեն ոտնահարվի հայերի իրավունքները»:



Պատմության համար

**ԹՈՒՐՔԻԱՆ, ԱՐՑԱՆԻ  
ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅԳԲ-Ը**

*Խորհրդային Հայաստանի Պետական Անվտանգության Կոմիտեն սկիզբէն իսկ մօտէն հետեւած է Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի գործունէութեանը միշտ զայն որակելով «ժայրայեղական» եւ «ահաբեկչական» կազմակերպութիւն: Այդ դիտարկումը շարունակուած է նաեւ 1988-ին եւ յաջորդ տարիներուն, երբ պայթած էր Արցախեան նորագոյն ազատագրական պայքարը: Ատոր ապացոյցներէն է ՀՀ-ի մէջ առաջին անգամ հրապարակուող սույն փաստաթուղթը, որ մեկնաբանութեան չի կարօտիր:*

*Գաղտնի  
Թիւ 1 օրինակ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՍԿՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆԻՆ  
ՀԱՅԳԲ-Ի ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Ստացուած տուեալներուն համաձայն, Թուրքիոյ Հոռնի դեսպանատուն անձամօթի մը կողմէ յայտարարութիւն մը կատարուած է Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի (ՀԱՅԳԲ) անունէն, որ այդ ծայրայեղական կազմակերպութիւնը «Ատրպէյճանի մէջ հայոց զոհուելու վրէժի գործողութիւններ» կը նախապատրաստէ: Յարտարարութեան մէջ ընդգծուած է նաեւ, թէ ՀԱՅԳԲ-ը կը զօրակցի ԼԴԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիաւորելու ձեւով Ղարաբաղեան հարցի վերջնական նպատակին:

Այս կապակերպութեամբ, Թուրքիոյ դեկավարութիւնը չի բացառեր արտասահմանի մէջ թուրք դիւանագետներու եւ երկրին ներսը պետական հաստատութիւններու դէմ արտասահմանեան հայկական ծայրայեղական կազմակերպութեանց գործողութեանց հնարաւոր աշխուժացումը: Չեն բացառուիր նաեւ Թուրքիոյ մէջ խորհրդային

արտասահմանեան հաստատութեանց ու անոնց ներկայացուցիչներուն դէմ թշնամական գործողութիւնները: Տեղւոյն ոստիկանական մարմիններուն հրահանգուած է անվտանգութեան յաւելեալ միջոցներ ձեռք առնել. երկիր մուտքի հսկողութիւնը խստացուած է: Ուժեղացուած են նաեւ արտասահմանի մէջ թրքական դիւանագիտական ներկայացուցչութեանց ու անոնց աշխատողներու պահպանութեան միջոցները: Սեր կողմէ միջոցներ ձեռք կ'առնուին լրացուցիչ տեղեկութիւններ ստանալու համար:

Հայկական ԽՍՀ-ի Պետական Անվտանգութեան Կոմիտէի Նախագահ Վ. Կ. Պատամեանց

19 Դեկտեմբեր, 1988  
թիւ 1/3517

(Հայաստանի Ազգային Արխիւ, ֆոնտ 1, ցուցակ 87, գործ 26, թուղթ 252: Բնագիր):

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ**

Ինչպէս հայտնի է, հանրակրթական հաստատություններում սովորող մատաղ սերնդի հայեցի դաստիարակման գործում անփոխարինելի նշանակություն ունեն Հայոց պատմություն դասագրքերը: Դրանց շնորհիվ հայ պատանիներն ու աղջիկները ծանոթանում են մեր պատմական հեռավոր և ոչ հեռավոր անցյալի հերոսական դրվագներին և անում համապատասխան հետևություններ: Միևնույն ժամանակ դասագրքերն են, որ լավագույնս արտացոլում են հայրենի կառավարության որդեգրած արժեքները, նրա հետապնդած նպատակները ազգային խնդիրներում:

Վերջերս մեր ձեռքն ընկավ «Հայոց պատմություն» առարկայի 8-րդ դասարանի դպրոցական դասագիրքը, որի մի բաժինը (թեմա 12, էջ 136-152) ամբողջովին նվիրված է հայկական սփյուռքի 1920-90-ական թվականների պատմության լուսաբանմանը: Նշված թեմայի շրջանակներում նաև արծարծված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և այդ ուղղությամբ գործունեություն ծավալած կազմակերպությունների թեման, սակայն ազատագրական պայքարը հունավորած Գուրգեն Յանիկյանի և Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) մասին որևէ հիշատակում չկա: Կազմակերպություն, որը լուրջ ներդրում ունի Հայկական հարցի վերաբացման գործում և որի 39 մարտիկներ նահատակվել են ազգային բաղձալի նպատակների իրականացման համար: Չկա որևէ հիշատակում Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներ կազմակերպության մասին նույնպես: Մի խոսքով չի ներկայացված Սփյուռ-


քում ծայր առած Նորագույն զինյալ ազատագրական պայքարն ամբողջությամբ, որ ընդգրկում է շուրջ 15-ամյա մի ժամանակահատված (1972-1988թթ.):

Ընդ որում, ԱՍԱԼԱ-ի վերաբերյալ որոշակի նյութի արծարծումը դասագրքում ունի ոչ միայն հայրենասիրական, այլև տեղեկատվական նշանակություն: Աշխարհաքաղաքական բարդ գործընթացների և գլոբալացման ներկա պայմաններում ազատագրական պայքարի մեր նվիրյալներին շատ հաճախ նմանեցնում են ահաբեկիչների, ինչը շատ հեռու է իրականությունից: ԵՎ եթե համաշխարհային պրակտիկայում եղել է կամ կա նման մտայնություն, կարծում ենք, որ դրա առաջին մեղավորները մենք ենք:

ԱՍԱԼԱ-ն որպես ահաբեկչական կառույց որակելու հարցում ջանք չի խնայում թուրքական կառավարությունը: Դեռևս 1983թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարար Իլթեր Թուրքմենը, հանդես գալով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նիստում, հայտարարեց, թե «այսօր, ինչպես մեր դարի առաջին տարիներին, հայ տեռորիստները նպատակ ունեն կատարելու նոր ցեղասպանություն»:

Հուսանք, որ մոտակա շրջանում, երբ խմբագրվեն դպրոցական դասագրքերը և տպագրվեն նորերը, այնուամենայնիվ, հայ պատմագիտական միտքը ավելի մեծ ուշադրություն կդարձնի հայրենասիրական լուրջ կենսագրություն ունեցող կազմակերպության ուսումնասիրմանը:

**ՍԱՐԳԻՍ ՊԱՐԱՄՅԱՆ**





# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽԱՂԵՐ ԵՎ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նոյեմբերի 27-ին անցկացվեց Սահմանադրության փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեն: Պաշտոնական տվյալների համաձայն, նրան մասնակցել է քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների մեծամասնությունը, որը «այո» է ասել առաջադրվող փոփոխություններին:

Մի կողմ թողնելով բոլոր հայտարարությունները՝ խախտումների և լցոնումների կամ էլ հավաստիացումները գործընթացի չափազանց մաքուր և արդար ընթացքի մասին, փորձենք հասկանալ, թե ի՞նչ հետևանք այն ունեցավ:

Նախևառաջ պարզ է դարձել, որ հասարակությունը լիակատար քաղաքական անկման մեջ է: Հանրաքվեն չէր կարևորվում բնակչության կողմից ի սկզբանե, և այս անտարբերությունը խորացնում էին նաև քաղաքական ուժերը՝ դարձնելով այն զուտ քաղաքական պայքարի ասպարեզ: Եվ բնավ էլ պատահական չէ, որ հանրաքվեի արդյունքները չդարձան հասարակության տարբեր հատվածների քննարկման առարկա: Դրա վառ ապացույցն են նաև ընդդիմության հանրահավաքների մասնակիցների նոսր շարքերը: Անկախ այն բանից, թե որքանով են հավաստի ընդդիմության պնդումները չտեսնված, խայտառակ խախտումների մասին, կարելի է արձանագրել, որ մարդկանց մոտ ձևավորում է հստակ պատկերացում ցանկացած նման գործընթացի կանխորոշվածության մասին, երբ քաղաքացին այլևս գիտակցում է, որ ոչ մի բան իրենից կախված չէ:

Ընդ որում, այս «հաղթանակի» դափնիները հավասարապես կարող են կրել և՛ իշխանությունները, և՛ ընդդիմությունը:

Նման ընդդիմություն մենք երբեք չենք ունեցել: Անկախության 15-տարվա ընթացքում այն երբեք չէր եղել այսչափ անօգնական, պառակտված, գաղափարազուրկ և զգուշավոր: Իրարամերժ, հակասական և անտրամաբանական քայլերը կողմնակի դիտորդին կատարյալ զարմանք են հարուցում: Նախ՝ քաղաքացիներին կոչ արվեց «ոչ» ասել Սահմանադրության փոփոխություն-

ներին և նույնիսկ համապատասխան քարոզարշավ սկսվեց՝ մեքենաների շքերթներով և նարնջագույն «ոչ» մակագրությամբ պաստառներով: Հետո վերջին պահին որոշվեց փոխել մարտավարությունը և որդեգրել հանրաքվեի բոյկոտի քաղաքականություն, հաշվարկելով, որ նման ճանապարհով ավելի հեշտ կլինի պայքարել «այո»-ի դեմ: Ավելին, ընդդիմությունը հրաժարվեց նույնիսկ մասնակցել ընտրական հանձնաժողովների աշխատանքներին՝ դա բացատրելով կողմնակիցների ապահովության մտահոգությամբ: Եվ, վերջում, արդեն հանրաքվեի անցկացումից հետո, հնչեցնելով խախտումների մասին բազմաթիվ


Դալմայի այգիների կամ Բուզանդի փողոցի բնակիչների խնդիրները, կամ էլ երթուղային տրանսպորտի գների բարձրացման հարցը, նրանք ժողովրդի կողքին չհայտնվեցին: Գլուբալ ախորժակ ունեցող, բայց վերջին տարիներին բոլոր «ճակատամարտերում» պարտված ընդդիմությունն այսօր կոտրված տաշտակի առջև է հայտնվել:

Եթե ընդդիմությունը Սահմանադրությունը զրկեց իրավական փաստաթղթի կարգավիճակից և այն դարձրեց քաղաքական պայքարի միջոց, ուրեմն չպետք է այսօր մեղադրի իշխանական կոալիցիային: Իշխանություններն արեցին այն, ինչ պետք է անեին: Նրանք հասան իրենց նպատակին: Միգուցե չափից ավելի կոպիտ միջոցներով և անկատար ձևերով: Սակայն տվյալ պարագայում կարևորն արդյունքն էր: Իսկ արդյունքը գրանցվեց: Ավելին, այս արդյունքը վավերացրեց Եվրոխորհրդի դիտորդական առաքելության արձանագրության մեջ, որում դրանք համարվեցին «միջազգային չափանիշներին» համապատասխանող: Վրաստանի, Ուկրաինայի և Ղրղզստանի հեղափոխություններից հետո ցանկացած ընդդիմադիր ելույթում զուգամղոր հեղափոխությունների սպառնալիք տեսնող իշխանական թևը կարող է հանգիստ պատրաստվել Ամանորին:

Երկրի համար կարևորագույն փաստաթուղթը դարձավ ուղղակի մանր կուսակցական կռիվների և հարաբերությունների պարզաբանման զոհ: Հասարակությանը չհարցրեցին, արդյո՞ք, նա համաձայն է այս կամ այն դրույթի հետ, նրան ուղղակի պարտադրեցին քվեարկել «այո», «ոչ» կամ գնալ բոյկոտի, քանի որ դա էին պահանջում միմյանց ինչ-որ բան ապացուցելու և իշխանության համար մղվող պայքարում հաջողության հասնելու կանոնները:

Մնում է միայն հուսալ, որ դրա դիմաց վճարելիք գինը շատ թանկ չի լինի:

**ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
**Պատմական գիտությունների**  
**թեկնածու**



հայտարարություններ, ընդդիմությունը նույնիսկ չփորձեց բողոքարկել ԿԸՀ-ի հայտարարված արդյունքները:

Սակայն ամենամեծ սխալը, վճռական քայլերի գնալու հասարակական պատրաստականության գերազնահատման մեջ էր: Այսօրվա ընդդիմադիր առաջնորդները չեն հասկանում կամ չեն ցանկանում ընդունել, որ ժողովուրդն այլևս իրենց չի ընկալում իր շահերի պաշտպանի դերում: Այս կոչումից ներկայիս ընդդիմադիր գործիչները զրկվել են դեռ 2003-ից, երբ երկու ընտրությունների ժամանակ էլ չօգտագործեցին ժողովրդի պատրաստականությունը՝ պաշտպանելու սեփական քվեն կամ էլ հետագայում, երբ բազմաթիվ կենցաղային, առօրեական հարցերի լուծման ժամանակ, լինեին դրանք



**Ք**աղաքական փիլիսոփայության զարգացման հարթությունում, ինչպես նաև հանրային գիտակցության մեջ «ազգայնականություն» եզրի ընկալումը անընդհատ ենթարկվել է վերափոխումների: Այս եզրը ծագել է Անգլիայում, XVIII դ. և ծագման սկզբնական փուլում նշանակել է անհատի պատկանելությունը որևէ ազգի: Սկսած XX դ. «ազգայնական» նշանակել է համանուն գաղափարախոսության հետևորդ:

«Ազգայնականություն» եզրի գիտական շրջանառման և մեկնաբանման առաջին փուլը ներառում է 1789–1871թթ.: Դա չի նշանակում, որ ազգայնական շարժում կամ ազգայնականության դրսևորումներ մինչ այդ չեն եղել: Խոսքը վերաբերում է արևմտյան քաղաքական մտքի պատմության մեջ այս երևույթի քննարկմանն ու մեկնաբանմանը:

Նշված առաջին փուլը սկսվում է Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ և ավարտվում Գերմանիայի վերամիավորումով Օտտո ֆոն Բիսմարկի օրոք: Այս փուլում եվրոպական լեզվամտածողության, աշխարհընկալման մեջ կատարվեցին առանցքային փոփոխություններ: Եթե մինչ այդ միապետական իշխանությունն ընկալվում էր որպես միակ օրինական (լեգիտիմ) և Աստծուց շնորհված իշխանություն, ապա Ֆրանսիական հեղափոխությունից սկսած այս մոտեցումը վերանայվեց՝ օրինական իշխանության միակ աղբյուր հռչակվեց ժողովուրդը:

Քաղաքական փիլիսոփայության զարգացմանը զուգընթաց տեղի ունեցան նշանակալի փոփոխություններ նաև պետական-քաղաքական համակարգում՝ եվրոպական մայրցամաքում ձևավորվեցին ազգ-պետություններ: Առաջին ազգային պետությունը ստեղծվեց Անգլիայում XVI դ., երբ բողոքական Անգլիան բաժանվեց կաթոլիկ եվրոպայից: Այնուհետև Ֆրանսիական բուրժուական հեղափոխությունից հետո ստեղծվեց Ֆրանսիական ազգային պետությունը, 1789-ին ԱՄՆ-ում Սահմանադրության ընդունմամբ վերջ դրվեց Նահանգների միջև պատերազմին, իսկ հետո ընթացան իշխանության կենտրոնացման գործընթացներ, 1860-ին էթնիկ ընդհանրության հիմքով ստեղծվեց Իտալիայի թագավորությունը, և վերջապես 1871-ին Բիսմարկը մեկ միասնական ազգային պետության սահմաններում միավորեց տրոհված գերմանական իշխանությունները՝ ստեղծելով ուժեղ կենտրոնացված ազգ-պետություն՝ Գերմանիան:

**Ազգայնականությունն այն շարժիչ ուժն էր, որը խթանեց ազգ-պետությունների առաջացման գործընթացները եվրոպայում:** Նշված փուլում ազգայնականությունն ընկալվում էր որպես դրական զգացում, հզոր գաղափարախոսություն և առաջադեմ շարժում: «Ազգայնականություն» և «հայրենասիրություն» եզրերը սկսեցին օգտագործվել որպես հոմանիշներ: «Ազգայնականություն» եզրը սկսած 1871-ից որոշակի փոփոխության է ենթարկվում: Սկսվում է «ազգայնականություն» եզրի գիտական նոր ընկալման և մեկնաբանման 2-րդ փուլը, որն ավարտվում է 1945-ին: Այն ընդգրկում է Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմները, երբ եվրոպական մայրցամաքում սկսեցին նվաճողական պատերազմներն Ասիայի և Աֆրիկայի երկրներում:

Արդյունքում՝ «ազգայնականությունը», որպես երևույթ, շարժում և գաղափարախոսություն, սկսեց անխնա քննադատվել առաջադեմ մարդկության կողմից՝ հանրային ընկալումներում հետզհետե ձեռք բերելով բացասական երանգներ: «Ազգայնականություն» եզրը, աստիճանաբար կորցնելով իր դրական իմաստը, սկսեց հավաքվել ազգայնամոլությանը (շովինիզմ), ռասիզմին, ֆաշիզմին: Չմայած, այս փուլում էր, որ առաջին անգամ միջազգային դի-

վանագիտության մեջ, 1878-ին Բեռլինի վեհաժողովում շոջանառվեց և կիրառվեց ազգերի ինքնորոշման սկզբունքը, ինչպես նաև 1918-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը հրապարակեց իր հայտնի 14 կետերը միջազգային հարաբերություններում նույն սկզբունքի գերակայության մասին:

«Ազգայնականություն» եզրը մարդկանց ընկալումներում նոր՝ 3-րդ փուլ թևակոխեց, որն ընդգրկեց 1945-75թթ.: Այս պատմական ժամանակահատվածը հայտնի է որպես ապագադուրացման շրջան, որը զուգորդվեց Ասիայի և Աֆրիկայի երկրներում ազգային-ազատագրական շարժումների վերելքով: Այդ շարժումները որակվեցին դրական, ազատագրական, առաջադիմական, և ընթանում էին ազգայնականության դրսևորումներով: Ապագադուրացման գործընթացները ողջունեցին թե՛ կոմունիստական ճամբարում, թե՛ արևմտյան երկրների ձախ ազդեցիկ ուժերի շրջանում: Նշված փուլն ավարտվեց 1975-ին՝ Դեյվիդսոնի համաձայնագրի կնքումով, որով միջազգային հարաբերություններում գերակա հռչակվեց ինքնիշխան պետությունների սահմանների ամբողջականության պահպանման սկզբունքը:

Սակայն XXդ. վերջին քառորդում կար այն տեսակետը, որ ազգայնականությունը, դրան նույնացվող ազգային-ազատագրական շարժումներն ու դրանց հիմքում ընկած ազգայնական գաղափարախոսություններն ապակայունացնող, անջատողականություն սերմանող երևույթներ են:

Խորհրդային գիտության, հասարակագիտական-քաղաքագիտական պրակտիկայում «ազգայնականություն» եզրն օգտագործվում էր միայն բացասական իմաստով, երբ անհրաժեշտ էր քննադատել շեղումը ինտերնացիոնալիզմի սկզբունքներից:

Ազգայնականության վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ՝ կատարված ինչպես արևմտյան, այնպես էլ ժամանակակից հետխորհրդային շրջանի քաղաքագետների, հասարակագետների կողմից: Ազգայնականության տեսաբաններն այն դիտում են՝ և՛ որպես գաղափարախոսություն, և՛ որպես քաղաքական հայեցակարգ, և՛ որպես հուզական մտորումներ ու զգացմունքներ: Է. Ջոքս-բաունը գտնում է, որ «ազգայնականությունն ավելի շատ քաղաքական ծրագիր է», իսկ Կ. Դոյչը նշում է, որ «ազգայնականությունը մտքի այնպիսի իրավիճակ է, երբ, հասարակական կապերում որոշումներ կայացնելիս, հատուկ նշանակություն է տրվում «ազգային տեղեկատվությանը, հիշողությանը և կերպարներին»: Ազգայնականության մյուս տեսաբան է. Սմիթը խոսում է «ազգայնականության էթնիկ արմատների մասին» և նշում. «ազգայնականության հիմքում ընկած են էթնիկ առասպելները»:

Խոշոր վերլուծաբան Մ. Յանովիցը անհանգստանում է, որ Արևմուտքում ազգայնականության դեմ տասնամյակներ տևած մտավոր գրոհից մեծապես տուժել է հայրենասիրությունը. «Ազգայնականության վրա ձեռնարկված գրոհը շոշափելի զգուշավորություն է առաջացրել անգամ հայրենասիրության նկատմամբ»:

Ամերիկացի սոցիոլոգներից Լ. Քրիզբերգը առանձնացնում է էթնիկ ազգայնականության դրական կողմերը: Նա նշում է. «**Ավելի մեծ հանրության պատկանելությունը հաճելի զգացողություն է պարզևում. ինքնաշարունակ խմբի մաս կազմելն անմահության նման ինչ-որ բան է ապահովում... Մինչդեռ պատկանելությունն այնպիսի մի խմբի, որը զուրկ է ներքին հպարտությունից, վնասակար է անհատի ինքնագնահատականի համար**»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ազգայնականությունը հասարակական համախմբման ժամանակակից լավագույն մոդելներից է:

**ՌԱՍՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ**  
**Պատմական գիտությունների թեկնածու**





# ՆԵՐԿԱՅԻՍ ԱԶԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Արդի աշխարհաքաղաքական հիմնական գործընթացներն ընթանում են «ժողովրդավարացման» և «ազատականացման» կարգախոսներով: ԽՍՀՄ փլուզումից հետո, ինչպես ԱՊՀ տարածքում, Չայաստանում նույնպես ազատական գաղափարախոսությունը լայն թափով մուտք գործեց հասարակություն, ինչն, անշուշտ, ունեցավ իր դրական դրսևորումները: Բավարար է նշել հայ ժողովրդի հերոսական պայքարը՝ Ղարաբաղի շարժումը, որը ընթացավ ազատականացման և ժողովրդավարացման կարգախոսներով՝ ընդդեմ բռնությունների և ամբողջատիրական հասարակարգի:

Ներկայումս Չայաստանում ազատական գաղափարախոսությանը հետևելու մասին են հայտարարել մի շարք քաղաքական կուսակցություններ, բազմաթիվ հասարակական կազմակերպություններ և անհատներ: Նշենք, որ ազատական գաղափարների քարոզչության գործում մեծ ներդրում ունի «Ազատական (Լիբերալ) Ինտերնացիոնալ» միջազգային կազմակերպությունը, որին անդամակցում են մոտ 61 քաղաքական կուսակցություններ, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններից: Թեպետ ԳԳ-ում գրանցված քաղաքական կուսակցություններից և ոչ մեկը դեռևս չի անդամակցում այդ կառույցին, այնուամենայնիվ, մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ համագործակցում են նշված կառույցի շրջանակներում միավորված միջազգային հիմնադրամների և կենտրոնների հետ:

«Լիբերալ Ինտերնացիոնալ»-ի հռչակագրում, որտեղ ամփոփված են կազմակերպության գաղափարական հիմնական անկյունաքարերը, նշվում է, որ սոցիալական հավասարության նորմերը կարելի է անտեսել իսկապես մարդու իրավունքների և ազատությունների, որոնք գերակա են ու առաջնային: Մարդու իրավունքներն ազատականության գաղափարախոսության առանցքն են:

Ազատականության կողմնակիցների և հակառակորդների բանավեճը, կարծես թե, խարսխվում է այն հիմնական հարցին, թե ո՞րն է առավել առաջնային՝ մարդ-անհատն ու նրա իրավունքները, թե՞ որևէ այլ, ավելի խոշոր միավոր: Խոշոր տեսաբան Լ. Միգետը փաստում է, որ ազատականության հիմնական թերությունն այն է, որ այն անհատին զրկում է ավելի խոր և վեհ ձգտումներից: Ազատականությունը, մի կողմից առաջնային դիտելով անհատի ազատությունն ու իրավունքները, զրկում է նրան յուրայինների համար հոգածության, նվիրումի զգացումներից և զոհողության պատրաստականությունից: Հասարակական գիտակցության մեջ մոռեցվողվում է ԵՍ-ակենտրոն անհատի կերպարը, որն անսահման ազատության է ձգտում: Տեղին է հիշել Պոլոս առաքյալի խոսքերը. «Եղբայրներ, դուք կոչուած էք ազատութեան. միայն թէ ձեր ազատութիւնը սոսկ մարմնի օգտի համար չլինի» (Պոլոս Առաքեալի թուղթ գաղատացիներին, Գլուխ Ե, կետ 13):

Ազատականության հիմքում ընկած անհատապաշտությունը հանգեցնում է սպառողական հասարակության ձևավորմանը, ինչը նվազեցնում է ազգային խնդիրների շուրջ հասարակության համախմբման ռեսուրսը: Ազատականների տնտեսական քաղաքականության առանցքը շուկայական հարաբերություններն են և մասնավոր սեփականությունը:

**Եթե սոցիալիստները (ընկերվարականները) առաջնային են համարում սոցիալական հավասարությունը, ապա ազատականների համար ընդունելի է հասարակության սոցիալական բևեռացումը: Եթե ազգայնականները գերակա են հռչակում ազգային շահն ու նպատակները, որոնց իրականացման համար խիստ կարևոր ու անհրաժեշտ է հասարակության բոլոր շերտերի հա-**

**մախմբվածությունը, ապա ազատականների համար հասարակության շերտավորումը, ատոմիզացիան, անհատական վարքաբանական նորմերի գերակայությունը բնական են և արդարացված:**



Այժմ ընթանում են համաշխարհային տնտեսության ավելի ու ավելի ազատականացման գործընթացներ, որոնք հանգեցնում են խոշոր անդրազգային տնտեսական միավորումների դերի էլ՝ ավելի բարձրացմանը: ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՄՆ-ի և արևմտյան երկրների համար հնարավորություն ստեղծվեց այդ զարգացումների հորձանուտում ներառել նաև նախկին խորհրդային պետությունները: Միաժամանակ տեղի է ունենում այդ կորպորացիաների անարգել ներխուժում ազգային տնտեսություններ և տարբեր երկրների ներքին շուկաներ՝ շնորհիվ մի շարք պարտավորությունների, որոնք ստանձնում են մեր պետությունները՝ անդամակցելով այս կամ այն միջազգային կառույցին՝ Առևտրա-արդյունաբերական պալատ, Համաշխարհային բանկ, ՄԱԿ և այլն:

Այս զարգացումներին համընթաց տեղի է ունենում համաշխարհային հասարակության բևեռացման անընդհատ խորացում: Այսօր աշխարհի բնակչության առավել հարուստ հատվածը տիրապետում է համաշխարհային ռեսուրսների 80%-ին, իսկ ամենաաղքատ մեկ հինգերորդին բաժին է ընկնում այդ ռեսուրսների միայն 5%-ը: Աշխարհի 5.9 մլրդ բնակչությունից արժանավայել կյանքով ապրում է միայն 500 մլն, իսկ 4.5 մլրդ մարդ ապրում է ծայրահեղ չքավորության պայմաններում: Աշխարհում հայտնի 385 հարուստների ձեռքին կուտակված կապիտալը գերազանցում է աշխարհի 2,6 մլրդ բնակչության (այսինքն՝ աշխարհի բնակչության 45%-ի) ունեցած կապիտալին:

Ազատականությունը մի կողմից, գերադասելով անհատի իրավունքները, թուլացնում է ազգայինի դերը, դրանով իսկ նպաստում հասարակական համախմբվածության աստիճանի նվազմանը, մյուս կողմից, ընդունելով հասարակության շերտավորումը, օրինականացնում է «համաշխարհային ընտրամու» գոյությունը:

Պատահական չէ, որ այսօր արդեն զարգացած արևմտյան տերությունների քաղաքականության էության քննարկումների ժամանակ առաջադրվում է «ազատական կայսրություն» հասկացությունը: Նրանք բնական են համարում, որ զարգացած երկրները մնացյալ աշխարհի նկատմամբ կիրառում են կայսրությանը հարիր քաղաքականություն: Օրինակ՝ Ռ. Կուլպերը նշում է. «Յետմոդեռնիստական աշխարհը բարդ խնդրի առջև է կանգնած՝ համակերպվել երկակի ստանդարտների գաղափարի հետ: Այդ պետությունները միմյանց հետ հարաբերությունները կառուցում են օրենքի և բաց համագործակցային անվտանգության հիման վրա: Իսկ «հիստորի» պետությունների հետ մենք պետք է կիրառենք անցյալ դարի ավելի կոպիտ մեթոդները՝ ուժ, կանխարգելիչ հարվածներ, ծուղակներ, որոնք անհրաժեշտ էին 19-րդ դարում ապրողների համար»:

...Այսպիսով, կարևոր է, որպեսզի ազատականությանը հարող հայ հասարակական-քաղաքական ուժերը նկատի ունենան գլոբալ զարգացումների տրամաբանությունը և ազատականության դրոշմ պարզած՝ գլոբալ ուժերի իրական կայսերական էությունը:

**ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**



Իրականություն դարձավ «Երկնագույն հոսք» գազատարը, որը շրջանցելով սևծովյան ավազանի այլ երկրները, մասնավորապես Վրաստանը, Ռուսաստանից Սև ծովի հատակով հասնում է Թուրքիայի Սամսուն նավահանգիստ: Այն աշխարհում ամենից խոր գազատարն է և տարեկան Թուրքիա է մատակարարելու 8,5 մլրդ խորանարդ մետր բնական գազ: Այս թիվը մինչև 2010թ. ծրագրվում է կրկնապատկել: Ծրագիր կա հետագայում գազատարը երկարացնել մինչև Իսրայել, ինչպես նաև ճյուղավորել դեպի Յուճաստան և Իտալիա:

Գազատարի պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ 2005թ. նոյեմբերի 17-ին, որին մասնակցեցին Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը, Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը, ինչպես նաև Իտալիայի վարչապետ Ս. Բեռլուսկոնին:

Երկկողմանի առևտրում զարգացումները դրական հաշվեկշիռ ունեն: 2004-ին ռուս-թուրքական առևտրի ծավալը, ըստ թուրքական վիճակագրության ինստիտուտի, կազմում է 11 մլն ԱՄՆ դոլար, իսկ ըստ ռուսաստանյան վիճակագրության ծառայության՝ 8,7 մլն ԱՄՆ դոլար: Այնպես որ Ռուսաստանը Գերմանիայից հետո Թուրքիայի արտաքին առևտրում երկրորդ գործընկերն է: Համեմատած 2004-ի նույն ժամանակաշրջանի՝ 2005-ին ռուս-թուրքական առևտրի ոլորտում ռուսական արտահանումը աճել է 56%, իսկ ներմուծումը՝ 25%: Ինչպես և նախորդ տարիներին, Ռուսաստանի արտահանման հիմնական պարագաներն

են կազմում վառելիքն ու էներգիան (62%):

Համաձայն պաշտոնական տվյալների՝ Թուրքիայից Ռուսաստան ներմուծվում են մեքենաներ, սարքավորումներ (498 մլն ԱՄՆ դոլար՝ 26,9%), տեքստիլ-պատրաստի հագուստեղեն (420 մլն դոլար՝ 22,7%) և այլն: Ճամպուրկային առևտրի ծավալը կազմում է մոտ 3 մլրդ դոլար և ներառում է հիմնականում պատրաստի հագուստեղեն և կաշվե իրեր: Բացի այդ, Ռուսաստանն ակտիվորեն մասնակցում է Թուրքիայի ներտնտեսական կյանքին, մասնավորապես կառուցվել է Անկարա-Սամսուն գազատարը, որը «Երկնա-

Թուրքական կողմի ներդրումները 2004-ի սկզբին կազմում էին շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար:

Առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը ժամանակի ընթացքում վերածվում է աշխարհաքաղաքական գործոնի: Ռուս-թուրքական հարաբերություններում նոր գազատարը ևս մեկ հանգույցով իրար է կապում տարածաշրջանի այս ուժերին՝ փոխադարձ կախվածության մեջ օգտելով միմյանց:

Գազատարի երկարությունը 1213 կմ է, որից 373 կմ՝ Ռուսաստանի ցամաքային տարածքով, 396 կմ՝ Սև Ծովի, 444 կմ՝ Թուրքիայի ցամաքային տարածքով: «Երկնագույն հոսքի» արժեքը կազմում է 3,2 մլրդ ԱՄՆ դոլար, որից 1,76 մլրդ տրամադրվել է

ճապոնական, իտալական ու բրիտանական վարկային կազմակերպությունների կողմից:

Այս նախագծում Գազարմի հիմնական գործընկերներն էին իտալական էներգետիկ միավորում ԷՆԻ-ն և վերջինիս գազի ոլորտում մասնագիտացած մասնաճյուղ ՍՆԱՄ-ը:

Նոր գազամուղով բնական գազի մատակարարումը սկսվել է դեռ 2003-ի փետրվարի 20-ին: Մինչև 2003-ի մարտ տեղափոխվել է 193 մլն խորանարդ մետր գազ: 2004-ին այս գազատարով Թուրքիա է տեղափոխվել ավելի քան 3,2 մլրդ խորանարդ մետր գազ, իսկ 2005-ի առաջին 9 ամսվա ընթացքում՝ 3,7 մլրդ:

**ԱՐՏԱԿ ՀԱՔՐՈՅԱՆ**

**Պատմական գիտությունների բեկնածու**

**«ԵՐԿՆԱԳՈՒՅՆ ՀՈՍՔԸ» ՄԻԱՑՐԵՑ ԹՈՒՐԹԻԱՅԻՆ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ**

գույն հոսքի» բնական գազը կտեղափոխի մայրաքաղաք: Ռուսական ընկերությունները, մասնավորապես ՌԱՌԻ ԵՆՍ-ը, մասնակցում են հիդրո և ջերմաէլեկտրակայանների կառուցմանը, իսկ Գազարմը ցանկություն ունի մասնակցել Թուրքիայի էներգաբաշխիչ ցանցերի տեղադրմանը: Ինչպես երևում է, ռուս-թուրքական համագործակցությունը ծանրանում է էներգետիկ ոլորտում:

Թուրքիայի Ռուսաստանում ներդրումները հիմնականում տեքստիլ, սննդի, ապակու, էլեկտրական սարքերի, քիմիական, շինարարական նյութերի արդյունաբերության ոլորտներում են: Կարևորվում են նաև թուրքական ընկերությունների ներգրավվածությունը սուպերմարկետների ցանցերի, զբոսաշրջիկական և բանկային ոլորտներում:

**ՀԱՅԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՂԹԱՀԱՐԵՆ ՀԱՂԹՈՂԻ ԳՈՌՈՉՈՒԹՅՈՒՆԸ, ԱԴԻԲԵՉԱՆՑԻՆԵՐԸ՝ ՓՈԽՎՐԵԺԻ ԾԱՐԱՎԸ**

Ղարաբաղյան կարգավորման լավագույն գիտակներից Վլադիմիր Կազիմիրովը 1992-96թթ. եղել է կարգավորման հարցում ռուսական միջնորդական առաքելության ղեկավարը: «Ազգ» օրաթերթին ուղարկած հոդվածում նա գրում է. «Կարևոր է, որ որոշ հայեր հաղթահարեն հաղթողի գոռոզությունը, իսկ աղբբեջանցիները՝ փոխվեժի ծարավը: Նայեք ավելի խորը և լայն: Ակնհատ է ողբերգական «ոչ ոքին»: Նախիջևանում չեն մնացել հայեր, Լեռնային Ղարաբաղում՝ աղբբեջանցիներ»:

Ղարաբաղյան կարգավորման համար 2006թ. համարելով ճշմարտության պահ՝ Կազիմիրովը նշում է, որ գլխավոր խոչընդոտը կողմերի անչափ կոշտ դիրքորոշումն է: «Հակամարտության հիմնական պատճառը և գլխավոր վիճելի խնդիրը Լեռնային Ղարաբաղի ճակատագիրն է: Կա դրա լուծման ընդամենը երեք ճանապարհ՝ երկուսն ուժային («ամեն գնով») կամ հաղթողի «փրավունքով») և մեկը՝ ողջամիտ, քաղաքակիրթ: Կարևոր է կտրականապես մերժել երկու ուժային մոտեցումները: Այս հակամարտության լուծումն ընդունելի է միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի արտահայտման միջոցով»:



# ՎՐԱՑԱԿԱՆ ԹՂԹԱՊԱՆԱԿ

1919թ. Թիֆլիսում լույս էր տեսել հետաքրքիր մի գիրք՝ «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии»: Փաստաթղթերի այս ժողովածուն «վրացական հայացք» է 1918թ. պատմական բուռն իրադարձությունների, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի անկախ հանրապետությունների առաջացման, Անդրկովկասում տեղաբնակ ժողովուրդների, ինչպես նաև Թուրքիայի, Ռուսաստանի և այլ երկրների շահերի թնջուկի հանդեպ:

Անցնելով այդ գրքի էջերով և ներկայացնելով մեջբերումներ որոշ փաստաթղթերից՝ մենք անաչառ շարադրանք ենք տրամադրում, գերծ մնում մեկնաբանություններից՝ եզրակացություններ ու հետևություններ կատարելը վերապահելով ընթերցողին:

1917թ. նոյեմբերի 7-ին, Պետրոգրադում տեղի ունեցած բուլշևիկյան հեղափոխությունն ավետեց Ռուսական կայսրության փլուզումը: Դա կայսրության փլատակների տակ չմնալու ակնհայտ ազդանշան էր, և մեկ շաբաթ անց նոյեմբերի 15-ին, Թիֆլիսում կազմավորվեց յուրատեսակ մի գործադիր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը: Ահա դրա կազմը՝ կոմիսարիատի նախագահ, աշխատանքի և արտասահմանյան հարաբերությունների նախարարության գործերով կոմիսար Ե. Գեգեչկորի, ներքին գործերի կոմիսար Ա. Չխենկելի, ռազմական և ծովային նախարարության գործերի կոմիսար Դ. Դոնսկոյ, ֆինանսների կոմիսար Խ. Կարճիկյան, արդարադատության կոմիսար Շ. Ալեքսեև-Մեսխիև, առևտրի և արդարադատության կոմիսար Մ. Ջաֆարով, հողագործության կոմիսար Ա. Ներուչև, հողագործության ուղիների կոմիսար Խ. Մելիք-Ասլանով, պարենի կոմիսար Դ. Տեր-Ղազարյան, հանրային խնամակալության կոմիսար Դ. Օհանջանյան, պետական վերահսկողության կոմիսար Խ. -բ. Խաս-Մամեդով:

Այս մարմնի ձևավորումը Անդրկովկասյան միասնական պետություն ստեղծելու փորձ էր, որը տնօրինելու էր աշխարհաքաղաքական մի վիթխարի տարածք զբաղեցնող երեք հիմնական ժողովուրդների ճակատագիրը: Չնայած որ Անդրկովկասի անպաշտոն-թագակիր մայրաքաղաք Թիֆլիսում բնակչության գերակշիռ մասը հայեր էին, կոմիսարիատի ղեկավարությունը և կարևորագույն պորտֆելները վերցրեցին վրացի մենչևիկները և թաթար (իմա՝ ադրբեջանցի) մուսավաթականները՝ հայ տարրը ներկայացնող դաշնակցականներին տրամադրելով ընդամենը երեք կոմիսարական պաշտոն:

1917թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում զինադադար կնքվեց Կովկասյան բանակի և թուրքերի միջև: Սակայն վերջիններս ակնթարթորեն հասկացան, որ բուլշևիկյան հրդեհի բռցերի մեջ այրվող կայսրությունը հրաշալի առիթ է պանթյուրքզամի գաղափարը կենսագործելու և տարածքային զավթումներ իրագործելու համար: Պատրվակ բռնելով այն, որ Սվազցի Մուրադը՝ Երզնկայում և Բայբուրդի Արշակը՝ Բայբուրդում ինքնապաշտպանական մարտեր էին մղում հայոց անխնա կոտորածները կանխելու համար, թուրքական բանակի հրամանատար Ֆ. Վեհիբ փաշան մի քանի բողոքի նոտաներ հղեց Կովկասյան ռազմաճակատի հրամանատարներ Օդիշելիձեին ու Պրժևալսկուն և լայիշորեն ստելով «հայերի չարագործությունների մասին»՝ 1918թ. հունվարի 30-ին, ոտնահարելով զինադադարը, անցավ լայնածավալ հարձակման:

Բրեստ-Լիտովսկի դավաճանական պայմանագրով փետրվարի 21-ին թուրքերին հանձնեցին Արդահանը, Ղարսը և Բաթումը: 1918թ. մարտի 1-ին Տրապիզոնում բանակցություններ սկսվեցին Անդրկովկասյան սեյմի և Թուրքիայի միջև: Դրանք տարօրինակ բանակցություններ էին. մի կողմից թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ-բեյը «Անդրկովկասյան պետության» հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մեղեխիկ ու շողոքորթ հավաստիացումներ էր շռայլում, մյուս կողմից թուրքական բանակը մահ ու ավեր սփռելով առաջ էր շարժվում ստիպելով բանակցություններում զիջումներ անել և ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Արդեն մարտի 6-ին թուրքերը գրավեցին Արդահանը:

Մարտի 31-ին Անդրկովկասյան սեյմի նիստում դրվեց Թուրքիայի դեմ պատերազմը շարունակելու չշարունակելու հարցը: Մեջբերենք մի հատված դաշնակցական Դարությունյանի ելույթից. «Նրանք (թուրքերը - Խ. Դ.) մեզ ասում են՝ ընդունեք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, այսինքն՝ տվեք երեք սանջակները, և ակամայից հարց է ծագում՝ կբավարարվի՞, արդյոք, այդ պետությունը երեք սանջակով, թե՞ առաջ կշարժվի և կիրականացնի իր վաղեմի ծրագիրը՝ Կոստանդնուպոլիսը Բաքվի հետ մուսուլմանական համատարած զանգվածով միավորելու ծրագիրը, մի ծրագիր, որը նա կատարել է բազում դարերի ընթացքում, վերջին հարյուրամյակների ընթացքում՝ քայլ առ քայլ, օրեցօր, թույլ առ թույլ:

Ովքե՞ր են մնացել այդ տարածության մեջ, որոնք խանգարում են այդ պետությանը վերջնականապես կատարել իր ծրագիրը: Մնացել են երկու փոքր ժողովուրդ՝ վրաց և հայ ժողովուրդները ու չնչին բանակությամբ ասորիներ: Դամատարած մուսուլմանական ժովին այս ժողովուրդների հախից գալը հեշտ է, հատկապես այնպիսի պետության համար, որի պայքարի կերպը կոտորածն է, որը կարող է սրի քաշել ամբողջ ազգություններ: ...Նա առաջ կշարժվի, նա վստահ է հայտնի ներքին տարրի աջակցության հարցում: Եվ հենվելով այդ տարրի, սեփական կազմակերպված ուժերի վրա, դիմացն ունենալով ապակազմակերպված զորամիավորումներ, նա մտածում է, որ վերջնականապես կարող է հասնել իր ուզածին՝ հասնել Բաքու և մեկընդմիջ խնդիրը լուծել այնպես, ինչպես հարկ է համարում թուրքական պետությունը»:

Մուսավաթի անունից Ռուսաստանեկովը հայտարարեց, թե իրենք չեն պատերազմի իրենց հավատակիցների դեմ, բայց կսատարեն Անդրկովկասի մյուս ժողովուրդներին, ինչին սեյմի անդամ Ջուղելին պատասխանեց, թե այդպիսի

*Այս մարմնի ձևավորումը Անդրկովկասյան միասնական պետություն ստեղծելու փորձ էր, որը տնօրինելու էր աշխարհաքաղաքական մի վիթխարի տարածք զբաղեցնող երեք հիմնական ժողովուրդների ճակատագիրը: Չնայած որ Անդրկովկասի անպաշտոն-թագակիր մայրաքաղաք Թիֆլիսում բնակչության գերակշիռ մասը հայեր էին, կոմիսարիատի ղեկավարությունը և կարևորագույն պորտֆելները վերցրեցին վրացի մենչևիկները և թաթար (իմա՝ ադրբեջանցի) մուսավաթականները՝ հայ տարրը ներկայացնող դաշնակցականներին տրամադրելով ընդամենը երեք կոմիսարական պաշտոն:*



**«...չեզոքությունը թուրքիային ակտիվ աջակցության բնույթ է կրում»:**

Երկարատև և բուռն քննարկումներից հետո որոշվեց թուրքիայի դեմ պատերազմը շարունակել, բայց մեկ օր անց՝ ապրիլի 1-ին, թուրքերը գրավեցին Բաթումը:

Ապրիլի 9-ի սեյմի նիստում Անդրկովկասը պաշտոնապես հռչակվեց Անդրկովկասի ժողովրդական Դաշնային Հանրապետություն (Անդրֆեդերացիա), իսկ մեկ օր անց՝ ապրիլի 10-ին, թուրքերը գրավեցին Կարսը ու քաղաքը հրկիզեցին:

Ապրիլի 15-ին թուրքիան ճանաչեց Անդրֆեդերացիան, բայց մահ սփռելով, հայի արյուն խմելով՝ շարունակեց գավթել հայկական տարածքները:

Եվ այստեղ ամբողջ «պերճանքով» դրսևորվեց հինգերորդ շարասյան՝ թաթարների դերակատարությունը. մայիսի 13-ին Ախալցխայի և Ախալքալաքի թաթարները 40 հոգու ստորագրությամբ մի թուրք հրապարակեցին, որով, հիմնվելով ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, այդ գավառները հռչակեցին թուրքիայի մաս: Դա, անշուշտ, թուրք-թաթարական համակցված գործողության, փոխադարձ պայմանավորվածության արդյունք էր, որով թուրքիային հրավեր-«քավորական» էր հղվում դեպի Բաթու:

Երկու օր անց՝ մայիսի 15-ին, թուրքերը գրավեցին Ալեքսանդրապոլը, զինաթափեցին բոլոր տղամարդկանց, անվերադարձ տարան ամհայտ ուղղությամբ և քաղաքում հայոց արյան բաղնիս սարքեցին: Առջևում թիֆլիսն էր, ապա՝ Բաթուն, իսկ Կասպից ծովից անդին՝ մուսուլմանական Միջին Ասիան. իրական հնարավորության Մեծ թուրանի գաղափարը կենսագործելու համար...

Մայիսի 26-ին թուրքիայի արդարադատության նախարար Հալիլ-բեյը Անդրֆեդերացիային վերջնագիր ներկայացրեց, որտեղ կային այսպիսի տողեր. «Հարյուր հազարավոր թյուրքեր ու մուսուլմաններ Բաթվում ու նրա շրջակայքում գտնվում են անողորք ավազակների՝ այսպես կոչված հեղափոխականների արյունոտ լծի տակ, և այդ տարաբախտներին սպառնացող անուղղելի աղետը ավելի ու ավելի է անխուսափելի դառնում»:

Ապա հայտնում էր, թե թուրքիան չի կարող անհաղորդ մնալ հավատարկիցների ճակատագրի հանդեպ: Այս վերջնագիրը ռումբի պայթյունի ազդեցություն ունեցավ և պատճառ դարձավ Անդրֆեդերացիայի տրոհման:

Նույն օրը՝ մայիսի 26-ին, ժամը 15-ին կայացավ սեյմի նիստը, որտեղ օցցալ-դեմոկրատական խմբակցության անունից ելույթ ունեցավ Ի. Ծերեթելին. «Թուրքիայի առաջխաղացումը և նրա ներխուժումը Անդրկովկաս ու ժողովրդի են Անդրկովկասում բնակվող առավել բազմաքանակ ազգի՝ մուսուլմանական ազգի, ձգտումը դեպի թուրքիա, դեպի Անդրկովկասից անջատում»:

...Եվ ահա ստեղծվել է այսպիսի մի իրավիճակ. Անդրկովկասի վիթխարի մասը գտնվում է նրանց ուղղակի կամ անուղղակի ենթակայության տակ, ովքեր մեր պատվիրակության հետ բանակցություններ են վարում (նկատի ունի մայիսի 11-ին Բաթումում սկսված բանակցությունները - Խ. Դ.): Անդրկովկասի վիթխարի մի մասն արդեն անջատվել է Անդրկովկասյան Հանրապետությունից. մի մասը՝ զենքի ճնշման ներքո, նկատի ունեն հայ ազգին, որը ձեռքից եկած ամեն ինչ արեց, բայց իր տարածքի զգալի մասը ստիպված եղավ տալու ֆիզիկական գերակշռություն ունեցող հակառակորդին: Բնակչության մյուս մասը, փաստացիորեն, նույնպես անջատվել է, քանզի վճռական պահին նա մեզ չպաշտպանեց և նրա ներկայացուցիչները ակնհայտորեն կամ ոչ պաշտոնապես աջակցում են հակառակորդ կողմին (նկատի ունի թաթարներին - Խ. Դ.):

Ապա Անդրֆեդերացիայի կազմալուծման մեջ ուղղակիորեն մեղադրելով Մուսավաթին ու թաթարներին՝ Ախալցխայի և Ախալքալաքի «ինքնորոշման» նախաձեռնության համար, Ծերեթելին այսպիսի կոչ հղեց սեփական ժողովրդին. «Բայց իմացիր, եթե ուզում ենք պաշտպանել մեր սեփական շահերը, փրկենք ինքներս մեզ, ապա պետք է ստեղծենք թուրք սեփական պետական մարմինը և թուրք սեփական պաշտպանական ներկայացուցչությունը: ... Փոքրաթիվ ազգությունների միակ հուսալի պաշտպանությունը միջազգային ժողովրդավարությունն է»:

Այս վերջին մտքին ի պատասխան, սեյմի ռուս անդամ Բերեզովը մոգական խոսքեր ասաց. «Միջազգային իրավունքի նորմերը վատ երաշխիք են փոքր ժողովրդի համար, թող անկախ Վրաստանն իմանա, որ միջազգային իրավունքի նորմերը և միջազգային համաձայնագրերը չեն ապահովի նրա անկախությունը»:

Բոլորի համար ամեն ինչ արդեն պարզ էր, և Անդրկովկասի սեյմն ընդունեց իր վերջին որոշումը. «Ելնելով այն բանից, որ պատերազմի ու խաղաղության հարցում ի հայտ են եկել արմատական տարածայնություններ Անդրկովկասի անկախ Հանրապետությունը ստեղծած ազգերի միջև, ինչի հետևանքով անհնարին է դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմը փաստում է Անդրկովկասի տրոհումը և վայր է դնում իր լիազորությունները»:

Նույն օրը՝ ժամը 16:50-ին, տեղի ունեցավ Վրաստանի Ազգային խորհրդի նիստը, որին մասնակցում էին 42 անդամներ ու 36 անդամության թեկնածուներ, բազմաթիվ հրավիրյալներ, որոնց թվում էին գերմանական զորքերի հրամանատար, կոմս Շուլենբուրգը, վրաց հոգևորականությունը, սպայական կազմը, տարբեր ազգերի ներկայացուցիչներ: Նախագահում էր Ազգային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ Նոյ ժորդանիան, որն իր ելույթն այսպես սկսեց. «Քաղաքացիներ, այսօր այստեղ դուք վկան եղաք եզակի պատմական իրադարձության. այս դահլիճում մեռավ մի պետություն և, ահա, հիմա այդ նույն դահլիճում դրվում է այլ պետության հիմքը»:

Ապա մասնավորապես ավելացրեց. «Մենք հատուկ ուշադրություն կդարձնենք խորը ողբերգության այն ժողովրդի, որի մի մասն ապրում է մեր տարածքում, իսկ մյուս մասը՝ մեր սահմաններից դուրս: Դա հայ ժողովուրդն է: Ժամանակակից վրացիները կհիշեն հիմնավոր պատգամը, և հայ ժողովուրդը մեզ մոտ կգտնի նույն պաշտպանությունը, ինչին արժանանում էր վրաց արքաների կողմից: (Երկարատև ծափահարություններ)»:

Ազգային խորհուրդն ընտրեց կառավարություն և ընդունեց Վրաստանի անկախության ակտը: Նիստը փակվեց ժամը 17:55-ին. 2 ժամ 55 րոպեի ընթացքում ցրվեց սեյմը և ստեղծվեց Վրաստանի ժողովրդավարական Հանրապետությունը: Սկսվեց վրացական «ազգային զարթոնք» և վրաց անկախ պետականության ուղին: Քայլերը այդ ուղիով հիմնվելով «վրացական թղթապանակի» փաստաթղթերի վրա:

Մայիսի 27-ին, Վրաստանի հարցմանն ի պատասխան (թե՛ մենք արդեն անկախ ենք), թուրքերը հայտարարեցին, թե վերջնագիրը, միևնույն է, տարածվում է նաև անկախ Վրաստանի վրա: Մայիսի 31-ին վրացիներն ընդունեցին վերջնագրի գրեթե բոլոր պահանջները, այդ թվում՝ Թուրքիայի տարածքային հավակնությունները Ախալքալաքի և Ախալցխայի գավառների հանդեպ: Իսկ հունիսի 4-ին, Բաթումում կնքեցին վրաց-թուրքական խաղաղության և բարեկամության պայմանագիր: Դրա հետ մեկտեղ ստորագրեցին «Լրացուցիչ պայմանագիր Օսմանյան կայսրության և Վրա-



ցական Հանրապետության միջև», որի 2-րդ հոդվածի 1-ին մասում ասվում էր, թե վրացական կառավարությունը պարտավորվում է իր տարածքից անմիջապես հեռացնել այն երկրներին սպառնալից ու քաղաքացիական պաշտոնյաներին, որոնք պատերազմի մեջ էին Թուրքիայի հետ: Այնուհայտ էր, որ այս կետն առաջին հերթին ուղղակիորեն վերաբերում էր հայերին ու ռուսներին:

Իսկ Լրացուցիչ պայմանագրի 3-րդ հոդվածի 1-ին կետում ասված էր, թե Վրաստանը համաձայն է Թուրքիային տրամադրել իր երկաթուղին ու ճանապարհները զինուժի, զենքի ու ռազմամթերքների տարանցիկ փոխադրումների համար, եթե դրանք ուղղված չեն լինի Վրաստանի դեմ: Դրանով Վրաստանը ուղի հարթեց դեպի Բաքու, ինչի հետևանքով սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին թուրքերն ու ադրբեջանցիները Բաքվում իրականացրեցին հայերի ցեղասպանությունը՝ կոտորելով 22.800 հոգու:

Ուշադիր ընթերցողը հավանաբար նկատեց, որ մայիսի 26-ից սկսած վրացական բառապաշարում ի հայտ եկավ «տարածք» բառը: Ի՞նչն էին վրացիներն իրենց տարածք համարում. այն ամենը, ինչ ցարական Ռուսաստանի վարչատարածքային բաժանմամբ մտնում էր Թիֆլիսի ու Քուրթայիսի նահանգների մեջ՝ առանց հաշվի առնելու պատմականությունը և բնակչության կազմը: Հայաստանը նման էր մի հոշոտվող մարմնի. թուրքերը զավթել էին այն ամենը, ինչ հնարավոր էր, ադրբեջանցիները աչք էին տնկել Չանգեզուրի ու Ղարաբաղի վրա, մի «համեղ պատառ» էլ մնացել էր վրացիների համար: Այդ «պատառը» ոչ մի տեղ չէր փախչի. Վրաստանին հետաքրքրում էր Սև ծովի առափնյակը:

Բաթումում վրաց-թուրքական պայամանագրի ստորագրման օրը՝ հունիսի 4-ին, Վրաստանի կառավարությունը հանդես եկավ այսպիսի մի հայտարարությամբ. «**Վրացական Հանրապետությունը, տեղեկանալով, որ Ադրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչները Օսմանյան կառավարության հետ բանակցություններ են վարում այդ երկրների սահմանների որոշման և ճշտման ուղղությամբ, որոշեց ի ցույց դնել այդ երկրների Ազգային խորհուրդներին (նկատի ունի Հայաստանի ու Ադրբեջանի- Խ. Դ.), որ Թուրքիայի, Ադրբեջանի ու Հայաստանի միջև սահմանների ճշտումն ու որոշումը հանդիսանում է նշված երկրների կառավարությունների իրավասությունը և որ Վրացական Հանրապետության կառավարությունը տվյալ հարցի կապակցությամբ Ադրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչների հետ կարող է անմիջական բանակցություններ վարել Թիֆլիսում, առանց Թուրքիայի միջամտության: Իսկ եթե նշյալ առիթով որևէ պայմանագիր կլինի, մի կողմից, Օսմանյան կայսրության և, մյուս կողմից, Ադրբեջանի ու Հայաստանի կամ նրանցից որևէ մեկի միջև, ապա այդպիսի պայմանագիրը Վրացական Հանրապետության կառավարությունը ոչ մի դեպքում չի կարող ճանաչել իր համար ընդունելի ու պարտադիր»:**

Այս հայտարարությամբ վրացիները «պահածոյացնում» էին իրենց տարածքային հավակնությունները (որոնք, ինչպես հետագայում կտեսնենք, ուղղված էին «թույլ օղակի» Հայաստանի դեմ), քանզի նրանց առաջնահերթ ռազմավարական հետաքրքրությունը Սև ծովն էր:

Ռուսական կայսրության փլուզումը հանգեցրել էր քա-

ղաքացիական պատերազմի և կատարյալ քաոսի. նախկին գիզանտի տարածքում ի հայտ էին եկել շուրջ 200 ինքնուրույն հանրապետություններ: Ահա, օգտվելով այս խառնի-խուռն իրավիճակից, վրացիները գրավեցին Տուսպսեն, Սոչին, Աղլերը՝ բռնությունների ենթարկելով ռուս սպաներին ու պաշտոնյաներին Վրաստանում:

Սեպտեմբերի 25-ին բանակցություններ սկսվեցին Վրաստանի և Կուբանի կառավարության ու Կամավորական բանակի միջև: Ռուսական կողմը ներկայացնում էին յոթ մարտական զեներալներ, այդ թվում Ալեքսեևը և Դենիկինը, վրացականը՝ Ե. Գեգեչկորին: Վերջինիս պահվածքը զավեշտի հասնող հոխորտալից ու «տղայական» էր: Նա կտրականապես հրաժարվեց վրացական զորքերը դուրս բերել Սոչիից, որևէ զիջում անել Աբխազիայի, Գագրայի հարցում, իսկ Կամավորական բանակին անվանեց «մասնավոր կազմակերպություն»:

Ի պատասխան այդ վիրավորանքների, ավարտելով անպտուղ բանակցությունները, զեներալ Ալեքսեևը շատ համզուստ եզրափակեց. «**Կարծում եմ, որ չափի և արդարության զգացողություն պետք է լինի ամեն ինչում և մշտապես: Ինչպե՞ս եք դուք, դեռ չորոշած Աբխազիայի ապագա կարգավիճակը** (ընդգծումը մերն է - Խ.Դ.), **ի հավելումն մեզնից խլում մերը՝ զուտ ռուսականը: Այդ իսկ պատճառով ես գիտեմ, որ այս հարցում դուք կողմնակիցներ չեք գտնի, մենք մի կերպ կապրենք և մի կերպ կշարունակենք մեր աշխատանքը, իսկ դուք կախման մեջ կլինեք Ռուսաստանի այն շրջաններից, որոնք ձեզ կարող են տալ հաց և ուրիշ շատ բան: Գերմանացիները ձեզ շատ բան տալ չեն կարող, այնինչ ձեր մշտական աղբյուրն այստեղ է»:**

Արդյունքը եղավ այն, որ Կամավորական բանակը մտավ Սոչիի օկրուգ և կարճ ժամանակում գլխավին ջախջախեց վրացիներին:

Սև ծովի ափերին պարտություն կրելով՝ Վրաստանը շրջվեց դեպի «պահածոյացված համեղ պատառը» Լոռի: Դեկտեմբերի 4, 5, 6-ին վրացիները զորք մտցրեցին Ախալքալաք ու գրավեցին այն, ինչի

առթիվ դեկտեմբերի 5-ին Հայաստանի կառավարությունը բողոքի նոտա հղեց:

Դեկտեմբերի 8-ին վրացիները Սանահինում սկսեցին վայրագություններ ու դաժանագույն բռնություններ իրագործել խաղաղ հայ բնակչության նկատմամբ: Հատուցումը հետևեց անմիջապես՝ հայկական զինուժը, Դրոյի, Նժդեհի, գնդապետ Տեր-Նիկողոսյանի գլխավորությամբ, դեկտեմբերի 9-13-ը ջախջախեց վրացիներին ու դուրս շարտեց Լոռուց:

Դեկտեմբերի 15-ին Հայաստանի արտգործնախարար Սիրական Տիգրանյանը ռադիոհեռագիր ուղարկեց իր վրացի գործընկերոջը, որտեղ մասնավորապես ասված էր. «...Այդ շրջանը (Լոռին- Խ. Դ.) անկասկած չի մտնում Վրաստանի տարածքի մեջ, հանդիսանալով Հայաստանի անբաժան մասը, որը բռնի ուժով գրավել էր վրացական զորքերի կողմից: Դրսևորելով ծայրաստիճան խաղաղասիրություն, Հայաստանի կառավարությունը ժամանակավորապես հաշտվում էր այդ իրադրության հետ, հույս ունենալով, որ Վրաստանի կառավարությունը զերծ կմնա Վրաստանի հետ միանալ չցանկացող տեղի բնակչության նկատմամբ ագրեսիվ գործողություններից: Այնինչ, Վրաստանի կառավարությունը ոչ միայն չընդառաջեց մեր ցանկությանը՝ սահմանների հարցը լուծել խաղաղ ճանապարհով, այլև, նպատակ





ունենալով ամրապնդվել օտար տարածքում, արշավանք ձեռնարկեց խաղաղ բնակչության դեմ, ինչն ուղեկցվեց արյունալի ու դաժան բռնություններով՝ ընդհուպ մինչև հայկական գյուղերը հրետանային կրակով ավերելը: Հայաստանի կառավարությունը չի կարող անհաղորդ հանդիսատեսի նման նայել, թե ինչպես են հարևան պետության զորքերը անարգություններ իրականացնում Հայաստանին պատկանող տարածքում ու զնդակահարում Հայաստանի քաղաքացիներին»:

Բայց սա դեռ վերջը չէր, վրացական զորքի պարտությունը հայոց զինուժի առջև ուղղակի ճանապարհ էր բացում դեպի Թիֆլիս: Վրաստանի մայրաքաղաքում կատարյալ խուճապ առաջացավ և բռնություններ սկսվեցին քաղաքը կառուցած ու համեմատական թվային գերակշռություն ունեցող հայ բնակչության նկատմամբ:

Ցանկանալով ազգային ոգին բարձրացնել՝ դեկտեմբերի 16-ին կառավարությունն այսպիսի կոչով դիմեց իր քաղաքացիներին. «Սկսելով ռազմական գործողություններ, մեր հակառակորդները ձգտում են անարխիա առաջացնել: Տուրք մի՛ տվեք մեր թշնամիների սադրանքներին: Պահպանեք լիակատար պետական կարգուկանոն:

Թող մենք քաղաքացի իմանա, որ վրացական կառավարությունը պայքարում է ոչ թե հայ ժողովրդի, այլ այն հայկական ռազմական խմբերի դեմ, որոնք մեղավոր են հեղված եղբայրական արյան համար»:

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 17-ին, Վրաստանի խորհրդարանում ելույթ ունեցավ կառավարության նախագահ Ն. Ժորդանիան և ասաց. «Նա (Հայկական կառավարությունը - Խ. Դ.) պատմական մեծ հանցանք գործեց, և այդ հանցագործությունը կմնա՝ որպես անջնջելի խայտառակություն պատմության սև էջերում: Քաջազունու կառավարությունը պատասխան կտա, ինչպես ժողովրդի, այնպես էլ արդարության առջև:

...ժամանակին մենք հայտարարել ենք, որ Վրաստանի սահմանների մեջ մենք համարում ենք ամբողջ Թիֆլիսի նահանգը և որ այդ ամբողջ տարածքը մենք կզբաղեցնենք, և եթե որևէ մեկը այս հարցում ինչ-որ բան վիճելի է համարում՝ մենք պատրաստ ենք բանակցություններ վարել»:

Կառավարությունը համեմատելով գայլի հետ, Ն. Ժորդանիան եզրափակեց. «Նրանց, ովքեր մեր դեմ զենք են բարձրացրել, մենք պետք է պատասխանենք զենքով: Մենք դրա համար ունենք անհրաժեշտ ուժ: Հարկ է միայն, որ հանրապետության ամեն մի քաղաքացի և ամեն մի ծառայող կատարի իր պարտքը և արժանիորեն դիմավորի թշնամուն: (Բուռն ծափահարություններ: Խորհրդարանը ոտքի է կանգնում)»:

Այս ելույթից վեց ամիս առաջ հայ ժողովրդի հասցեին ներքոններ հյուսող Ն. Ժորդանիան, մեղմ ասած, թաքցնում էր ճշմարտությունը՝ բարոյալքված ու խուճապի մատնված Վրաստանը դիմադրելու ոչ մի ուժ չունեցրելով:

Դեկտեմբերի 25-ին անգլիացիները (ի դեմս գեներալ-մայոր Ռայկրոֆտի) և ֆրանսիացիները երկու կողմերից էլ պահանջեցին անհապաղ դադարեցնել պատերազմական գործողությունները: Հայկական ու վրացական կողմերը ամրագրեցին, որ **ԱՆԱԼՔԱԼԱՔԸ ՎԻՃԵԼԻ ՏԱՐԱԾՔ Է**, և դեկտեմբերի 31-ին կռիվը պաշտոնապես ավարտված հայտարարվեց:

Ամանորից հետո՝ 1919թ. հունվարի 3-ին, մեզ արդեն ծանոթ արտգործնախարար Ե. Գեզեչկորին ելույթ ունեցավ Վրաստանի խորհրդարանում. դա հոխորտանքի, պարծենկոտության, գլուխգոլմանության մի զավեշտական խառնուրդ էր, ուր փառաբանվում էր վրացական զենքի ուժը, որը ջարդեց հայերին ու նրանց փախուստի մատնեց: Սակայն նա վրիպում թույլ տվեց և արտաբերեց մի նախադասություն, որն արձանագրված է փաստաթղթում. «Նա (վրաց կառավարությունը - Խ. Դ.) հաշվի էր առնում այն հանգամանքը, որ վրաց ժողովրդի գլխին մեծ դժբախտություն կարող է պայթել»:

**ԽԱՉԱՏՈՐ ԴԱԴԱՅԱՆ**

*ՀԳ - Ավարտելով հայ-վրացական փոխհարաբերությունների վերաբերյալ այս համառոտ հրապարակումը՝ մենք նպատակ ունեինք ընթերցողին տեղեկացնել մեր ժողովուրդների կարճատև, բայց դրամատիզմով առլեցուն մի թմրուկի մասին: Քանզի տեղեկացված մարդը պաշտպանված է ու զգոն:*

**ԷԼԵՆԵ ԹԵՎԴՈՐԱԶԵ. «ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՅԱԳՐԳՈՎԱԾ ԼԻՆԵՆ ԻՐԵՆՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ»**

Վրաստանի խորհրդարանը վավերացրեց Շրջանակային Կոնվենցիան որոշ վերապահումներով: Կներկայացնեն դրա կետերից մի քանիսը.

- «Ազգային փոքրամասնությունները կարող են օգտագործել մայրենի լեզուն ժողովների ժամանակ, սակայն գործավարությունը պետք է տարվի վրացերեն լեզվով»:
- «Պետությունը իրավունք ունի արհեստականորեն փոխել բնակչության ազգագրական կազմը տարերային աղետների ժամանակ, թուրք-մսխեթցիների եւ փախստականների հիմնախնդիրների գոյության պայմաններում: Սակայն դա տեղի է ունենալու բնական ճանապարհով»:
- «Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար վրացական պետության կողմից կստեղծվեն բոլոր պայմանները նրանց ինքնագիտակցության, մասնավորապես կրոնի, լեզվի, մշակութային ժառանգության և սովորույթների պահպանման նպատակով»:
- «Ոչ վրացական դպրոցները, ինչպես ԽՍՀՄ տարիներին, կպահովվեն պետության կողմից, չնայած շատ երկրներում դրանք ինքնաֆինանսավորվում են»:
- «Պետական մարմինները պարտավոր են թարգմանիչներ ունենալ, և եթե քաղաքացին վրացերեն չի հասկանում, ապա մարմինները իրենց հաշվին պետք է նրան ապահովեն թարգմանիչով: Ֆինանսների նախարարությանը զգուշացրել ենք, որպեսզի նրանք հաշվի առնեն, որ վավերացումից հետո մեր բոլոր բյուրոկրատական ինստիտուտներում պետք թարգմանիչներ լինեն»:
- «Մեզ մոտ (Թբիլիսիում) կան հայկական, ադրբեջանական, ռուսական թատրոններ: Եվ այդ թատրոնները Ֆինանսավորվում են պետության կողմից: Ես հանդիպումներ եմ ունեցել նախագահի և մշակույթի նախարարի հետ, և որոշեցինք, որ լավ կլինեք անցկացնել Վրաստանի ժողովուրդների փառատոն, այսինքն՝ Ադրբեջանական մշակույթի օրեր, Հայկական մշակույթի օրեր և այլն:
- «Եկեղեցիների համար ստեղծված են բոլոր պայմանները: Մեզ մոտ ոչ մի եկեղեցի չի բողոքում ճնշումներից»:



# ԳԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վերջերս պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ստեփան Ստեփանյանի նախաձեռնությամբ գերմաներենից ռուսերեն թարգմանվեց Վոլֆգանգ և Ջիգրիդ Գուստեր ամուսինների կազմած «Հայերի ցեղասպանությունը» խորագրով ուշագրավ փաստաթղթերի ժողովածուն: Գերմանացի հրապարակախոս Վոլֆգանգ Գուստը ծնվել է 1935-ին, Հանովերում: Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Ֆրանսիայի Տուլուզ քաղաքում, որտեղ ուսումնասիրել է ռոմանական գրականություն և տնտեսագիտություն: Հինգ տարի եղել է գերմանական «Շպիգել» հանդեսի խմբագիրը, իսկ յոթ տարի էլ՝ թղթակից Փարիզում: Հենց այդ տարիներին էլ «Շպիգել» հանդեսում տպագրվում են Հայոց ցեղասպանության մասին նրա հոդվածները: Դրանք Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության պարբերական մամուլում Հայոց ցեղասպանության մասին երբևէ տպագրված ամենածավալուն հոդվածներն էին: Ուշագրավ է, որ մեծահարուստ թուրքերից մեկը պատրաստակամություն է հայտնում գնել «Շպիգելի» Գուստի հոդվածները պարունակող բոլոր համարները և վառել: Հրապարակախոսի հոդվածները մեծ հետաքրքրություն են առաջ բերել գերմանական հասարակության մեջ:

Վ. Գուստը 1990-ից իրեն ամբողջովին նվիրում է Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրությանը: 1993-ին լույս է տեսնում նրա «Հայոց ցեղասպանությունը» գիրքը (թարգմանվել է հայերեն): 1995-ին հրատարակվում է նրա «Սուլթանի կայսրությունը» գիրքը: Շատ կարևոր է Գուստի այն հավաստումը, որ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ գերմանական արխիվներում կան 3000-ից ավելի փաստաթղթեր, որից Յոհաննես Լեփսիուսը հրատարակել է ընդամենը 444-ը: Ուսումնասիրելով Յ. Լեփսիուսի կազմած «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուի՝ արխիվային նյութերը՝ Վ. Գուստը իր հետազոտական աշխատանքում եկել է այն եզրակացության, որ այդ գրքի արխիվային նյութերի մի մասը չի համապատասխանում գերմանական արխիվային

փաստաթղթերի բնօրինակներին: Ո՞վ է մեղավոր, որ «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուի բազմաթիվ նյութերի տեքստերը կրճատված կամ փոփոխված են: Վ. Գուստի ուսումնասիրությունների հենքի վրա պարզ է դառնում, որ Լեփսիուսի ժողովածուի փաստաթղթերի տեքստերի փոփոխություններն ու կրճատումները կատարվել են Կայզերական Գերմանիայի արտաքին գործերի նախարարության պատասխանատուների կողմից: Այսպիսով, ըստ էության, Յ. Լեփսիուսը փաստաթղթերը հրատարակել է այն տեքստով, ինչ կերպ նրան հրամայվել է: Հարկավ, Լեփսիուսն այստեղ բացար-



ծակ մեղք չունի, չնայած անժխտելի է նաև, որ նա ևս միտում է ունեցել՝ Հայոց ցեղասպանության գործում թեթևացնել Կայզերական Գերմանիայի մեղքը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գերմանական պաշտոնական փաստաթղթերի տեքստերի փոփոխման գործում կոնկրետ առնչություն է ունեցել Գերմանիայի այն ժամանակվա կանցլեր Բեթման Հոլվեգը, որը Վ. Պոլսում իր երկրի դեսպան Վոլֆ-Մետերնիխի տվել է հետևյալ ցուցումը. «Ոչ մի ուշադրություն չդարձնել հայերի վրա... Մեր միակ նպատակն է՝ մինչև պատերազմի վերջը թուրքիային պահել մեր կողմում, կարևոր չէ հայերը կկոտորվեն, թե՛ ոչ»: Հետաքրքիր է, որ հենց այդ փաստաթուղթը տեղ չի գտել Յ. Լեփսիուսի ժողովածուում: Ավելին, Գերմանիայի արտաքին

գործերի նախարար Արթուր Ցիմմերմանը ցուցում էր տվել, որ «Գերմանիային հայերը պետք չեն: Հայերով բնակեցված Հայաստանը վնասակար է նրա շահերին»: Վ. Գուստը հսկայական ջանքեր է թափում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում: Այսօր ինտերնետի ցանցում նա ստեղծել է հատուկ կայք, որում տեղակայել է 1000-ից ավելի գերմանական պաշտոնական արխիվային փաստաթղթեր: Կայքը մշտապես թարմացվում, և փաստաթղթերի թիվն ավելանում է:

Գրախոսվող ժողովածուի փաստաթղթերն ինչպես գերմաներեն, այնպես էլ ռուսերեն հրատարակվում են առաջին անգամ: Դրանք ցույց են տալիս, որ Գերմանիան ոչինչ չի ձեռնարկել՝ խանգարելու Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործմանը, ընդհակառակը՝ նպաստել է և աջակցել: Պաշտպանելով իր դաշնակցին՝ Գերմանիան նույնիսկ ջանացել է «պատասխան միջոցառումների» համար մեղադրել Անտանտին, որն, իբր, հայերին տրամադրում էր թուրքիայի դեմ: Պատերազմի ժամանակ ամեն մի հաղորդագրություն հայերի և Հայկական հարցի մասին Գերմանիայում անպայման ենթարկվում էր ռազմական գրաքննության: Այդ իսկ պատճառով «մարդասեր» Գերմանիայի ծայրը շատ թույլ էր հնչում կամ համարյա չէր լսվում:

Առաջին անգամ որպես գերմանական աղբյուր, հրատարակվում է այն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է Հայոց ցեղասպանությունը խորհրդանշող օրը՝ ապրիլի 24-ը: 1915-ի ապրիլի 30-ին գերմանական դեսպան Հանս Վանգենհայմը Վ. Պոլսից կանցլեր Բեթման Հոլվեգին հաղորդում է, որ «ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը՝ և ամբողջ կիրակի և երկուշաբթի... այստեղ կատարվել են բազմաթիվ հայերի ձերբակալություններ... ձերբակալվածները հիմնականում բժիշկներ, ժուռնալիստներ, գրողներ, հոգևորականներ, ինչպես նաև մի քանի հայ պատգամավորներ են»:

Ժողովածուի փաստաթղթերը բացահայտում են թուրքական ռազմական իշխանությունների, նրանց ղեկավարների հրամանները հայերի



տեղահանությունների և բնաջնջման մասին: Այդ հրամաններից մեկը Ջեմալ փաշայի կողմից ստորագրվել է 1915-ի մարտի 15-ին, ուր նշվում է, որ Ջեյթունի շրջակայքում անհրաժեշտ է կանխել կամ դադարեցնել թուրք բնակչության ինքնագործ խժոժությունները, որպեսզի տեղահանվող հայերի դեմ կիրառվող գործողություններն իրականացվեն հիմնականում զինվորականների կողմից:

Ջեմալ փաշան 1915-ի ապրիլի 28-ին, մայիսի 25-ին, հունիսի 4-ին և 10-ին իր արձակած հրամաններով խնդիր էր դնում տեղահանությունը կազմակերպել այնպես, որպեսզի հայերի նկատմամբ կատարված վայրագությունների լուրերը չթափանցեն արտասահմանյան երկրներ: Այս փաստաթղթերը հաստատում են, որ հայերի տեղահանության և ջարդարարության մասին թալեթի հրամաններին զուգահեռ և նրան հավասարազոր գործել են նաև Ջեմալի հրամանները:

Ժողովածուում տեղ են գտել արևմտահայության տեղահանության և զանգվածային կոտորածներ

րի՝ թուրքական կառավարության գործողություններին Գերմանիայի մասնակցությունը հաստատող նոր վավերագրեր: Դրանցից մեկը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վոլֆ-Մետերնիխի 1915-ի դեկտեմբերի 7-ին կանցլերին հղած զեկուցագիրն է և վերջինիս նրա տված պատասխանը: «Վերջին շաբաթներից,- գրել է Մետերնիխը,- հայկական կոտորածների մասին խոսել են էնվեր փաշայի, Խալիլ բեյի, Իսկ այսօր՝ Ջեմալ փաշայի հետ և ասել են, որ այդ ամենի նկատմամբ հուզումներն ու զայրույթը տարածվել է նաև բարեկամական արտասահմանյան երկրներում և Գերմանիայի լայն շրջաններում: Ջեմալ փաշայի շտաբի պետ, գնդապետ Ֆոն Կրեսն, ինձ հետ զրուցելիս, ասաց, որ այս աղետը աննկարագրելի է և գերազանցում է նախորդ բոլոր պատկերացումները»:

Նշենք, որ հատուկ առաքելությանը դեսպան Վոլֆ-Մետերնիխը գերմանական այն եզակի դիվանագետներից էր, որ առաջարկում էր Գերմանիայի կառավարությանը՝ կոնկրետ և զորեղ միջոցների գոր-

ծադրմամբ դադարեցնել հայերի տեղահանությունն ու կոտորածները: Սակայն գերմանական պաշտոնական շրջանները հաշվի չէին նստում նման առաջարկությունների հետ: Նրանք Հայոց ցեղասպանության ամբողջ ժամանակաշրջանում տրորեցին բարոյականության և ամոթի բոլոր նորմերը: Հայոց ցեղասպանության ամենաեռուն շրջանում՝ 1915-ի աշնանը, Գերմանիան չխորշեց Կ. Պոլսում հիմնելու «Թուրք-գերմանական բարեկամության տուն», որի նախագահն է դառնում դահիճ էնվեր փաշան: Դա «քաղաքակիրթ» գերմանական կառավարության և թուրքական ջարդարարների մարտահրավերն էր քաղաքակիրթ հասարակայնությանը: Մարտահրավեր, որում մարմնավորվեց պետական-քաղաքական պոռնկության վերածած վիլիելմյան միլիտարիստական իմպերիալիզմի և երիտթուրքական դեսպոտիզմի անամոթությունը:

**ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**  
**Պատմական գիտությունների դոկտոր**



## ՄԱՐՋԱԿԱՆ ՍԽՐԱՆՔԻ ՄԻ ԴՐՎԱԳ

**«Ուխտ Արարատի» կազմակերպությունը շնորհավորում է Ջորվար Անդրանիկ միության նախագահ Նորայր Մուշեղյանին՝ ծննդյան 75-ամյակի առիթով և սիրով ներկայացնում հետևյալ հուշագրությունը:**

### ԵՐԴՈՒՄ

1957թ., հուլիսի 12: Ըմբշամարտի աշխարհի գավաթի խաղարկության եզրափակիչ: Ստամբուլի Սիդիս փաշայի անվան հսկայական մարզադաշտն ավելոծվում էր հազարավոր թուրք մարզասերների բացականչություններից: Ըմբշամարտի համար հարմարեցված ասպարեզում էին թուրք փառաբանված ըմբիշ Մուստաֆա Դադստանլին և 22-ամյա հայ ըմբիշ Նորայր Մուշեղյանը: Աշխարհի, բալկանյան և օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոնը ոչինչ չկարողացավ հակադրել երիտասարդ հայ ըմբիշի մեկը մյուսին հաջորդող հնարքներին: Դեռ ավելին. ցուլի պես խոյահարելու համար առաջ նետվող Դադստանլին ինքը հայտնվեց... մեջքի վրա, այն էլ՝ գորգից դուրս:

Թուրք հանդիսականներից ոչ մեկը չհավատաց, որ պարտվողն իրենց կուռքն է: Սակայն դատավորներն դա ձևակերպեցին՝ որպես արգելված հնարքի կիրառում: Նորայր Մուշեղյանը գրավեց երկրորդ տեղը:

Երևանում բարեկամները Նորայրին դիմավորեցին որպես հերոսի: Սակայն դիմավորողների հետ չէր նրա հայրը՝ մշեցի վարպետ Թազվորը:

Հայրը նրան տանն էր սպասում. նա, անձայն ու խիստ հայացքով նայելով որդուն, կարծես ասում էր. «Այդ ո՞ւմ պարտվեցիր»:

«Հայրիկ, ես խոստանում եմ քեզ՝ հաջորդ տարի նրան կհաղթեմ, երդվում եմ»:

«Տեսնենք», - ոչ այն է՝ թերահավատորեն, ոչ այն է՝ հույսով, նայեց որդուն ու հետո՝ պատուհանից դուրս երևացող Արարատին...

Կրոնական իմաստով ոչ հավատացյալ հայորդին եղավ Սուրբ Էջմիածնում, մոմ վառեց Մայր Տաճարում: Աղոթեց, որ գոնե մեկ անգամ էլ հանդիպի Դադստանլուն:

1959թ., Սոֆիա: Վասիլ Լևսկու անվան մարզադաշտ... Աշխարհի գավաթի խաղարկությունում Նորայր Մուշեղյանը հաղթեց Մուստաֆա Դադստանլուն:

Երևանում որդուն առաջինը դիմավորեց հայրը: Վարպետ Թազվորը որդու ճակատը համբուրեց և ասաց. «Ապրես, զավակս, շատ ապրես, որ երդումդ պահեցիր...»:

**ՀԱԿՈՒ ՍԱՆՁՅԱՆ**  
**«Տաճար տանող ճանապարհը...», 1996 թ., էջ 22:**



Վերջերս մեզ և Հայաստանի հազարավոր հյուրերին հնարավորություն ընձեռվեց ևս մեկ անգամ ծանոթանալ հայկական մշակույթի բացառիկ ու բարձրա-

ճաշակ նմուշներին:

Նպատակն է Հայաստանում և Հայաստանից դուրս հնարավորինս ներկայացնել հայկական գանձերը: Այս առաքելությունը իր վրա է վերցրել «Հայաստանի Գանձեր» ընկերությունը՝ ի դեմս հիմնադիր-տնօրեն Նինա Հովնանյան-Ալեքսանյանի:

Ներկայացնելով հնի ու նորի համադրությունը՝ «Հայաստանի Գանձեր» ընկերությունը ցուցահանդեսում ներկայացրել է պատկերազարդ կաշվե պայուսակներ, որոնց վրայի պատկերները ոչ այլ ինչ են, քան հայ մեծ արվեստագետների նկարները, ինչպես նաև հազուստներ, կոշիկներ, տիկնիկներ, կերամիկական թանկարժեք մետաղներից, քարերից պատրաստված իրեր, ասեղնա-



## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՆԶԵՐ» ՆԻՆԱ ՀՈՎՆԱՆՅԱՆ-ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

գործ լուսամփոփներ և արվեստի այլ բարձրակարգ ու որակյալ ստեղծագործություններ: Ամենը ներկայացված էր մեկ օրինակով: Գները մատչելի չէին, օրինակ՝ ձեռագործ մի տիկնիկ, որը մի երիտասարդ աղջիկ պատրաստել էր 2 տարվա ընթացքում և մեծ դժվարությամբ էր հանձնել ցուցահանդեսին, արժեք մոտ 500.000 դրամ: Դրանք կարծես թանգարանային նմուշներ լինեին:



Յուրօրինակ աշխատանքները գտնում են իրենց գնորդներին, իսկ ուլքեր զբոսաշրջիկ են, անպայման ուզում են հուշանվեր տանել իրենց երկիր: Դա նպաստում է հայ մշակույթի արմատների տարածմանը այլ երկրներում:

«Հայաստանի Գանձեր» ընկերությունը իր գործունեությամբ մեկ անգամ ևս բարձրաձայնում է այն անհերքելի փաստը, որ հայ մարդն իր վրա կրում է հանճարեղ լինելու դրոշմը:

## «ԵՐԿԻՆՔԸ՝ ԵՐԿՐԻՑ» ՅՈՒՑԱՅԱՆԴԵՍ ՀԱՅԱՍՏԱ-

Հայաստանի ազգային պատկերասրահում տեղ են գտել ազգային և համաշխարհային արվեստի

դիրներով: Երկրի գեղեցկությունը վերևից նրա առջև առաջին անգամ բացվում է, երբ կնոջ՝ Աննայի հետ Քենիայի արգելանոցներից մեկում օդապարիկից ուսումնասիրում է առյուծների վարքը:

1995-ից ի վեր Յան Արտուս-Բերտրանը ձեռնարկում է մոլորակի վիճակը ներկայացնող իր ծավալուն աշխատանքը՝ օդային լուսանկարների տեսքով, որն էլ հիմք է հանդիսացել «Երկիրը՝ երկնքից» գրքի ստեղծմանը: «Երկիրը՝ երկնքից» ցուցահանդեսը ներկայացվել է 30 երկրներում և ունեցել է ավելի քան 50 մլն այցելու:

Յան Արտուս-Բերտրանը կամեցել է կիսել իր լուսանկարչական հայացքները կույրերի հետ: Պատկերները փորագրված են համակարգչային նորագույն ծրագրի շնորհիվ: Առաջին անգամ, թույլ տեսնող կամ կույր մարդիկ հնարավորություն կունենան հաղորդակցվելու հուզմունք առաջացնող զարմանահրաշայր նկարներին:



Լուսանկարների հավաքածուն ընդգծում է, որ ավելի քան երբևէ ռեսուրսների սպառման ու շահագործման արդի մակարդակն ու ձևերը չեն կարող անվերջ գոյատևել:



հարուստ հավաքածուներ, որոնց նշանակությունը, հասարակության յուրաքանչյուր անհատի հոգևոր դաստիարակության համար, անգնահատելի է: Յան Արտուս-Բերտրանը իր ցուցահանդեսներով հրավիրում է ճանապարհորդության աշխարհի իրականությունների միջով: Նրա օդային լուսանկարներն արտացոլում են ոչ միայն բնության զանազանություններն ու կյանքի արտահայտության ձևերը, այլ նաև մարդու կողմից նրա շահագործումն ու պատճառած վնասները շրջակա միջավայրին: 4000 ժամ ուղղաթիռով թռիչք և հարյուրավոր երկրներով ճանապարհորդություն պահանջող այս աշխատանքը՝ ներկայացնում է մոլորակի վիճակը:



Յան Արտուս-Բերտրանը ծնվել է 1946-ին: Վաղ հասակում հրապուրվելով կենդանական աշխարհով՝ նա սկսում է հետաքրքրվել բնության պահպանության խն-

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# ՀՐԱԶՅԱ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ԾՆՆԳՑԱՆ 110-ԱՄՅԱԿԻՆ

Ասում են արվեստագետին հասարակությունը ըստ արժանվույն գնահատում է մահից հետո, սակայն Հրաչյա Ներսիսյանին գնահատել են և՛ իր ժամանակակիցները, և՛ հետագա սերունդները:

Բնության այն հազվագյուտ պարզևներից է Հրաչյա Ներսիսյանը, ում մեջ մարմնավորվում էր վեհ մարդկություն, արտիստական համճար և խորաթափանց միտք:

Հրաչյա Ներսիսյանի հարուստ, խոր ու անարատ հոգում զարմանալիորեն համաձույլ էին էնոցիան ու ինտելեկտը: Այդպես է լինում բնությունից շռայլորեն օժտված այն արտասովոր տաղանդների մոտ, ովքեր այնուհետև կյանքում մշակվում են և բյուրեղանում ընկալելով ժամանակի նվաճումները մտքի հարստացման և հոգու կատարելագործման ուղղությամբ: Այդ է պատճառը, որ Հրաչյա Ներսիսյանի ինտելեկտը այնքան էնոցիոնալ էր, էնոցիան այնքան ինտելեկտուալ, և արտիստական հմայքն այնքան մարդկայնորեն հուզող ու կախարդիչ:



Ես ինձ անչափ երջանիկ եմ զգում, որ ականատես եմ եղել Հրաչյա Ներսիսյանի արտասովոր տաղանդի փայլատակումներին Շեքսպիրի՝ Օթելլոյի, Սարոյանի՝ Մեք-Գրեգորի, Շիրվանզադի՝ Էլիզբարովի և այլ բազմաթիվ դերերում և այսուհետև խորապես դժբախտ եմ զգում, որ այլևս երբեք ականատես չեմ լինի այն հրաշքին, երբ ողջ բեմը և թատերասրահն իր մոնումենտալ կերպարների ապրումներով ու հույզերով լցնում էր Հ. Ներսիսյանը:

### Մարտիրոս Սարյան

Հրաչյա Ներսիսյան... նրա ընկերները, նրա արվեստակիցները դժվարանում են պատկերացնել իրենց բեմական կյանքն առանց Հրաչյայի: Չէ՞ որ նրա վիթխարի տաղանդը միշտ եղել է այն հաստատուն պատվարն ու հենարանը, որով նրանք բարձրացել են արվեստի ոսկե աստիճաններով:

Բնությունը նրան պարզևել էր աստվածային հուր, որով այրվում էր Հրաչյան բեմի վրա, իբրև մի անշեջ փարոս, և՛ իր խաղընկերների, և՛ հանդիսատեսի հույզերի ըն-

թացքը ուղղում է դեպի իմաստության լուսավոր ափերը: Հրաչյա Ներսիսյան...

### Վարդան Աճեմյան

Մի քիչ կոպիտ, բայց խոսուն դիմագծեր, հարուստ դիմախաղ, բացառիկ արտահայտիչ աչքեր նայում են էկրանից՝ մերթ փոթորկում, շանթեր արձակում, մերթ ժպտում այնքան մեղմ ու բարի, որ թվում է՝ զայրույթն անհարիր է այդ աչքերին, մերթ խոհուն, մերթ անհուն թախիծով լեցուն աչքեր, որոնք, իրոք, ինչպես ընդունված է ասել, հոգու հայելի են:

Առանց այդ ամենի, թվում է, թե արտիստը կզրկվի իր հմայքից:

Հրաչյա Ներսիսյանը թատրոնինը, կինոյինը լինելուց բացի նաև մեր Հրաչյան էր, ռադիոյի Հրաչյան:

### Պրաչուհի Ջինանյան



Չեչտ չէ ռեժիսորի գործը: Լինում են պահեր, երբ ուզում ես ամեն ինչ մի կողմ նետել, հեռանալ տաղավարից և մեկընդմիշտ մոռանալ կինոմատոգրաֆիան: Եվ իսկապես, երբ գրողին վիճակված է գործ ունենալ բառերի, նկարչին՝ գույների, երաժշտին՝ հնչյունների հետ, ռեժիսորը պարտավոր է հարակցել այդ արվեստների արտահայտչականության բոլոր միջոցները, ապա ականա միշտ ինչ-որ մի բան չի ստացվում, ինչ-որ մի բան կաղում է և այդ պատճառով էլ ապրում ես մշտական անբավականության ծանր զգացում:

Եվ ահա քո բազմահոգ կյանքում հայտնվում է մեկը, որ քեզ կես խոսքից հասկանում է, այնպես, ինչպես և դու՝ նրան, մարդ, որը դառնում է քեզ համախոհ, մարդ, որի հետ ուս-ուսի տված անցնում ես կինոնկարի ստեղծման ամբողջ տառապալի ճանապարհը, նման դեպքում կինո-ռեժիսորը իրեն իսկապես երջանիկ է զգում:

Այդպիսի երջանկություն ինձ բաժին ընկավ՝ Հրաչյա Ներսիսյանի հետ աշխատելիս:

### Համո Բեկ-Նազարյան

### Պատրաստեց ԱՆԻ ՄԱՅԱԿԱՆՅԱՆԸ



Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 86-ամյակին նվիրված մեծարման երեկո էր կազմակերպել Ռուս-հայկական (սլավոնական) պետական համալսարանը: «Երբեմն, երբ հոգնում եմ հասարակական-քաղաքական կյանքում իմ «միջամտություններից», հիշում եմ մեր բանաստեղծուհուն ու ասում. այ տղա, ամոթ է, օրինակ առ տիկին Սիլվայից...», - ասում է դրամատուրգ Պերճ Ջեյթունցյանը, ավելացնելով, որ նա իր համար ոչ միայն գեղագիտական, այլև քաղաքացիական ու բարոյական չափանիշ է:

Սիլվա Կապուտիկյանի հայրենամկեր բանաստեղծությունները դաստիարակում են արդեն 4-րդ սերնդին: «Սա հանդիպում է կենդանի դասականի հետ: Ո՛չ ոսկի, ո՛չ նավթ, ունենք ազգային մշակույթ, և Ս. Կապուտիկյանն իր արժանի տեղը ունի այնտեղ», - Մոսկավայի գրողների միության միջազգային ընկերակցության կողմից բանաստեղծուհուն հուշամեդալ հանձնելով՝ մեջք Հայաստանի գրողների միության նախագահ Լևոն Անանյանը:

Համալսարանը Սիլվա Կապուտիկյանին նվիրեց «Աղանմանդակուռ ծիթենու ճյուղ» հուշամեդալ՝ ի նշան հարգանքի և գնահատանքի: Գեղարվեստական մասում հնչեցին երգեր՝ բանաստեղծուհու տողերով:

### ԿԱՐԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ





# 2005-Ը ԹԱՏԵՐԱՇԽԱՐՅՈՒՄ ԱՃԵՄՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻ ԷՐ



2005-ը Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային թատրոնը հայտարարել է Աճեմյանական տարի նվիրված մեծ ռեժիսորի՝ Վարդան Աճեմյանի 100-ամյակին:

Աճեմյանական օրերը մեկնարկեցին նոյեմբերին Շիրվանզադեի «Պատվի համար»-ի բեմադրությամբ: Հայ դասական դրամատուրգիայի լավագույն ստեղծագործություններից մեկը և Շիրվանզադեի պիեսներից լավագույնը համարվող այդ գործը թատրոնում առաջին անգամ ներկայացվել է 1939-ին, որն իրականացրել է Վարդան Աճեմյանը: Սա նրա առաջին քննությունն էր մայր թատրոնում: Ներկայացման մեջ ընդգրկված էին հայ թատերաբեմի ականավոր վարպետներ՝ Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետյանը, Արուս Ոսկանյանը, Դավիթ Մալյանը և ուրիշներ:

Հակոբ Պարոնյանի անվան թատրոնում Աճեմյանական շաբաթը բացվել է «Ատաննաբույժն արևելյան» ներկայացումով, որը 1951-ին առաջին անգամ բեմադրել է Վարդան Աճեմյանը: Ուժեղ արևմտյան այնքան մեծ է, որ հայ թատրոնը իր պարտքն է համարում հավատարիմ մնալ Վարպետի սկզբունքին:

«Այն, ինչ արեց Արան Խաչատրյանը երաժշտության մեջ, Ալեքսանդր Թամանյանը՝ ճարտարապետության և Սարտիրոս Սարյանը հայ գեղանկարչության մեջ, նույնն արեց Վարդան Աճեմյանը հայ ռեժիսուրայում», - ասում է Երվանդ Ղազանչյանը:

Ա.Ս.



## ԳՅՈՒՄՐԻՆ ԵՈՐԲՑ ԿՐԱՑՆԻ ՈՒ ԿԵՆՆԱՆԱ. ԵՐԿՈՒՍ ԾԱՏՈՒՐՅԱՆ

**- Պարոն Ծատուրյան, ինչպիսի՞ն է Գյումրիի Վ. Աճեմյանի անվան թատրոնի վիճակը, հե՞շտ է աշխատել գյումրեցի դերասանների հետ:**

- Այսօր տխուր է ոչ միայն Գյումրիի Վարդան Աճեմյանի անվան թատրոնի, այլև Հայաստանի բոլոր թատրոնների վիճակը:

Հայաստանն ապրեց մի դժբախտություն. հինը կործանվեց, նորն էլ չի ստեղծվում: Ունենալով անկախություն չգիտենք, թե ազատության հետ ինչ անենք: Հայ ժողովուրդն այն ընկալեց այսպես. ազատ լինել, գնալ արտասահման: Գյումրիում դա եղավ կրկնակի. և՛ երկրաշարժ, և՛ արտագաղթ: Թատրոնի վիճակն անմխիթար է, որովհետև երկրի վիճակն էլ այդպիսին է: Իսկ ինչ վերաբերվում է գյումրեցի դերասանների հետ աշխատելուն, բոլորի հետ էլ և՛ հեշտ է, և՛ դժվար: Հայաստանի լավագույն այդ թատրոնը, որն ուներ կարկառուն դեմքեր, այսօր ավագ սերնդի դերասանի կարիք ունի, որի պատճառով նա երկրաշարժն էր: Ունենք երիտասարդ լավ դերասաններ, նրանք էլ են քիչ: Թատերախումբը նորացնել կարելի է, բայց դժվար է, քանի որ այնտեղ հաստատվելու խնդիր կա, այն դեպքում, երբ տեղաբնակն ինքը բնակարանի կարիք ունի: Թատրոնն ունի տաղանդավոր դերասաններ, որոնց հետ աշխատելիս՝ ես մեծ հաճույք եմ ստանում: Նրանք ինձ հույս են ներշնչում:

**- Ի՞նչը Ձեզ տարավ Գյումրիի թատրոն:**

- Գյումրի գնալուս նախապայմաններից մեկն այն էր, որ ՀՀ մշակույթի նախարարն ինձ խնդրեց գնալ այնտեղ և լավացնել թատրոնի վիճակը, իսկ երկրորդ հիմնական պատճառն այն էր, որ Գյումրիի մայր թատրոնը կրում է Վ. Աճեմյանի անունը: Վերջինս ինձ համար շատ հարազատ մարդ է, նա է ինձ առաջին կուրսում դասավանդել և տարել Գ. Սունդուկյանի անվան թատրոն, որտեղ ես աշխատել եմ շուրջ 20 տարի: Ծրագրեր շատ կան, եթե դրանց տասը տոկոսը իրագործեմ, մեծ բան արած կլինեմ:

Թատրոնին հարկավոր է պետական աջակցություն, հատկապես՝ նյութական: Գյումրիում շատ քիչ է հանդիսատեսը, դեկավար մարմինները արդարաճանաչում են՝ պատճառաբանելով, որ հինգ ներկայացումից հետո հանդիսատես

չի գալիս: Չնայած դժվարություններին՝ շարունակում եմ աշխատել և չեմ հուսահատվում: Եվ անկախ ամեն ինչից. շաբաթը երկու անգամ պետք է լինի ներկայացում՝ թեկուզ չորս հանդիսատեսի համար:

Առաջիկա ծրագրերի մեջ է մտնում Վ. Աճեմյանի 100-ամյա հոբելյանի միջոցառումները: Ներկայացումը, որ Գ. Սունդուկյանի երկու պիեսների «Խաթաբալա» և «Բաղնիսի բոխչա» կրճատումից հետո միավորել եմ, դարձել է հետաքրքիր աշխատանք: Այնքան նրբորեն է միացված, որ շատերը չեն էլ զգա, որ այն երկու պիեսների միացություն է, որը նվիրում ենք մեծ ռեժիսորի հոբելյանին: Նախատեսում ենք Սիեր Մկրտչյանի անվան հարյուր հոգանոց



փոքրիկ դահլիճ բացել, բայց, ցավոք, ամեն ինչում գումարի խնդիր կա: Չնայած որ Վահագն Հովնանյանը 25.000 դոլար է հատկացրել թատրոնին, բայց գումարը դեռ չի հասել:

**- Թատրոնը մշակույթի ամենամեծ օջախներից մեկն է, ի՞նչ ընթացք ունի Գյումրիի մշակութային կյանքը, որով ապրում եք Գուր:**

- Մեր իրականության մեջ, ցավոք, մշակութային ամենամեծ օջախը ոչ թե թատրոնն է, այլ՝ թատրոնի շենքը, որտեղ մեծ թվով հանդիսատես է հավաքվում՝ միայն էժանագին ռաբիս լսելու: Մեր ժողովրդի ճաշակն ընկել է:

Մեկ տարվա ընթացքում ութ ներկայացում է բեմադրվել:

**- Ինչպիսի՞ն է Ձեր հանդիսատեսը:**

- Գյումրիի թատրոնը Հայաստանի լավագույն թատրոնն է եղել. 140 տարի այնտեղ ներկայացում է բեմադրվել: Հետաքրքիր մի բան. երբ պրեմիերա է, առաջին երկու



օրը այնպիսի հանդիսատես է գալիս, ինչպիսին ես երևանում չեմ տեսել՝ խստապահանջ, նրբաճաշակ, բարձր մակարդակի: Իսկ հետո հաջորդ օրերին հսկայական անջրպետ է լինում և հանդիսատեսի մակարդակի կտրուկ նվազում... Այս թատրոնը ժամանակին թնդում էր ներկայացման բոլոր օրերին:

**- Պիեսների ընտրության հարցում հենվում եք ժամանակի պահանջին, թե՞ գաղափարին:**

- Ի տարբերություն մյուս արվեստների (նկարչություն, քանդակագործություն, ճարտարապետություն, կինո), որոնք մնայուն են, թատերական արվեստը որքան էլ որ նկարես տեսախցիկով, միևնույն է չի ապրում. նա այսօրվանն է: Ներկայացումն այսօրվա շատ ու շատ հարցադրումների մասին պիտի լինի, որն իր մեջ պետք է պարունակի բոլոր հարցերի պատասխանները: Ես հենվում եմ ժամանակի պահանջին:

Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» պիեսում գտա այսօրվա բացասական երևույթները. այն կոչվելու է «Փուղի գործերը»: Ցավոք սրտի, այսօր փողը բոլոր փոխհարաբերություններում վճռորոշ դեր է խաղում լինի բարոյական, թե տնտեսական: Բեմադրությունում ակնհայտ է, որ մարդիկ կորցնում են իրենց մարդկային բոլոր հատկանիշները և այնտեղ դրական ոչ մի կերպար չի մնում: Կա միայն մի դրական կերպար՝ Սունդուկյանն է: Մարդիկ հերթական այլանդակությունն են անում, հանկարծ դողանջում են եկեղեցու զանգերը, և Սունդուկյանի ծայրն է լավում. «Ես ի՞նչ եք անում, ուշքի՛ եկեք»:



Մյուս ներկայացումը Արտաշես Քալանթարյանի «Բունդերանգ»-ն է, որտեղ հայրերի և որդիների կռիվն է, բայց ի վերջո գալիս են համաձայնության, որ միասին պիտի ապրեն: Այնտեղ մի հատված կա, որտեղ ծնողն ասում է. «...Այնպես, ինչպես դուք եք վարվել ձեր ծնողների հետ, ձեր երեխաներն էլ վարվեն ձեզ հետ»: Տղան պատասխանում է. «Վա՛յ, Աստված հեռու տանի»:

Ըստ Կալինովսկու, «Հրեշը լուսնի վրա» ներկայացման մեջ հերոսները որդեգրում են իտալացի մի երեխայի և ապրում են երջանիկ: Ինքնաբերական մեջ ավարտն են փոխել. նրանք հուսալքված թողնում են ու հեռանում:

Այսօր արտագաղթը շարունակվում է, չնայած որ ազատ, անկախ Հայաստան ունենք: Գնում ենք, կառուցում, թողնում ու հեռանում: Եվ այսպես շարունակ... Դրա վառ օրինակն է Թիֆլիսը, Բաքուն... Եվ այդպես են անում նաև իմ հերոսները...

Այսօր մեր ժողովուրդը հարցեր ունի, որոնք պետք է հետապնդենք պետական բարձր մակարդակով:

Թատրոնները թատրոնավայել կապրեն, երբ պետությունը հասկանա նրա նշանակությունը: Այսօր դրամատուրգը չի գրում, ասում է՝ գրել եմ, բեմադրող չկա: Չի բեմադրվում, որովհետև փող չկա, իսկ եթե չկա դրամատուրգի, չի կարող լինել թատրոն՝ ազգային թատրոն: Որքա՞ն կարող ենք Շեքսպիր, Չեխով բեմադրել:

Մեզ պետք է, որ ազգը ազգ դառնա, երկիրն էլ օրենքի երկիր:

**- Առաջիկայում նոր ներկայացումներ և հյուրախաղեր նախատեսվում են:**

- Այո՛, նախատեսվում են. մշակույթի նախարարությանը հայտ ենք ներկայացրել, որ հաջորդ տարի Ռուսաստանում «Հայաստանի տարի» մշակութային այդ մեծ միջոցառմանը հանդես գա նաև Գյումրիի Վ. Աճեմյանի անվան թատրոնը՝ իր «Գավառային անեկդոտներ» ներկայացումով:

**- Վ. Աճեմյանի թատրոնը հայ բեմին Վարպետների մի փայլուն աստղաբույլ է տվել, ի՞նչ եք կարծում Գյումրին նորից կդառնա՞ «Վարպետների քաղաք Գյումրի»:**

- Գյումրին եղել և մնում է Վարպետների քաղաք. այնպիսի շենքեր, ինչպիսիս այնտեղ են կառուցում, քարը մշակում, շարունակում ոչ մի տեղ չեք տեսնի. զարմանում եմ այդպես սրբատաշ, այդքան ուղիղ: Այնպես, ինչպես նրանք են դարբնություն անում, ոչ ոք չի անի: Հնարավոր չէ, որ այն վերանա, քանի որ հայը մի լավ բնավորություն ունի. հայրն իր արհեստը սովորեցնում է որդուն:

2007-ից Հայաստանը ծաղկելու է ոչ թե նրա համար, որ մեր երկրի վիճակը էլ ավելի լավ է լինելու, այլ աշխարհն այնքան է վատանալու, որ հայերը հետ են գալու: Երկրի ճակատագիրը որոշում է աշխարհի անցուդարձը, այն կապված չէ նախագահից:

Մենք Հայաստանի մայրաքաղաքը միառժամանակ պետք է տեղափոխենք Գյումրի, այն մեծացնենք, լավացնենք, հետո տեղափոխենք Վանաձոր և այսպես՝ Հայաստանի բոլոր մեծ քաղաքները: Թող մայրաքաղաքը շրջի և Հայաստանը միջից լույս տա:

Ես հավատում եմ, որ Գյումրին նորից կհառնի ու կշեմանա:

ՆԱՆԵ ՍԵՎԱՆ

**ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ՄԻՆԱՍԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆԸ**

Ջաջուռում, դեկտեմբերի 7-ին վերաբացվել է Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը: Այն գործում էր դեռևս խորհրդային տարիներին, սակայն ավերվել էր 1988-ի երկրաշարժից: 2003-ին «Լինսի» հիմնադրամի «Մշակույթ» հիմնադրամով վարպետի հայրենի Ջաջուռում կառուցվեց տուն-թանգարան, այն շահագործման է հանձնվել 2004-ին, սակայն ցուցանմուշների բացակայության պատճառով մինչ օրս չէր գործում:

Ցուցանմուշներ հավաքելու նպատակով նկարչի ընտանիքը դիմել էր անձնական հավաքածուների տերերին: Մինասի մի քանի գործեր են հանձնվել նորաբաց թանգարանին, մյուսները արտապատկերներ են, որոնք, փորձագետների գնահատմամբ, շատ բարձրորակ են: Մինասի վրձնած նկարներից բացի, տուն-թանգարանում ցուցադրվել են նաև նրա ձևավորած բեմական զգեստները:

Ավելացնենք, որ Մինասի ընտանիքը և նրա արվեստի երկրպագուները նպատակ ունեն թանգարանը դարձնել մշակույթի կենտրոն:





# ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՈՒՇԵՆՉՈՂ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՂ Է



Ճանաչված ասմունքող, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, փառատոների կրկնակի դափնեկիր Սվետլանա Խանունյանը 2002-ին ԱՄՆ-ում Յուսիսային Կառլինայի կենսագրական կենտրոնի կողմից արժանացել է «Տարվա կին» գնահատանքին:

**- Ինչպե՞ս եղավ, որ ասմունքը դարձավ Ձեր կյանքի իմաստը: Ինչպե՞ս սկսվեց Ձեր ստեղծագործական ուղին:**

- Երբ ասում եմ ստեղծագործական ուղի, ես իմ կենսագրությունն եմ պատկերացնում: Պատճառն այն է, որ դպրոցական հասակից առանձնակի վերաբերմունք ունեի ընթերցանության նկատմամբ: Աշխատում էի բարձր ընթերցել և միշտ ցանկանում էի ունկնդիր ունենալ. կլինե՞ր մայրս, եղբայրս, թե դպրոցում դաս պատասխանելը՝ հատկապես գրականությունից: Քանի որ մաթեմատիկայի նկատմամբ մեծ ընդունակություններ ունեի, ուստի մտածում էի մաթեմատիկայի ուսուցչուհի դառնալ, սակայն հետագայում երազանքներս փոխվեցին: Եվ ամբողջ էությանը կլանվեցի բեմով: Ճիշտ է, ես թատրոնի դերասանուհի չդարձա, սակայն պոեզիան լրացրեց բեմական երազանքս ու կարոտս: Թատերական ուսումնարանն, ապա նաև Երևանի պետական համալսարան ավարտելուց հետո ուղղվեցի դեպի բեմ:

«Սայաթ-Նովայի» 250-ամյա հոբելյանին նվիրված ասմունքողների մրցանակաբաշխության երրորդ փուլն էր. մենք՝ ուսանողներս, նույնպես սրահում էինք՝ որպես հանդիսատես: Ունկնդիր էինք ասմունքողներին, արտիստներին, թատերական ինստիտուտի ուսանողներին: Մրցանակաբաշխության հանձնախմբի նախագահ Ավետ Ավետիսյանը տեղից բարձրացավ անսպասելի, շրջվեց դեպի հանդիսատեսը և հարցրեց. «Ո՞վ է Սվետլանա Խանունյանը, թող բեմ բարձրանա...»:

Ես անակնկալի եկած՝ տեղից վեր թռա, հետո պարզվեց, որ բանասիրական ֆակուլտետի աղջիկներից մեկը մի գրություն էր ուղարկել իմ անունից, թե ես հանպատրաստից ցանկանում եմ մասնակցել մրցանակաբաշխությանը: Հուզմունքս զսպելով՝ բեմ բարձրացա: Այդ մրցույթում արժանացա Մշակույթի մինիստրության (նախարարության) պատվոգրի: Հանդես գալ Մետաքսյա Սիմոնյանի,

Գի, Բաբկեն Ներսիսյանի, Թամար Դեմուրյանի և շատ դերասանների հետ և արժանանալ պատվոգրի՝ ուսանողիս համար մեծ գնահատանք էր: Հետագայում մասնակցեցի երկու փառատոների և երկու անգամ էլ շահեցի ասմունքողների համար նախատեսված Ոսկե մեդալն ու Առաջին կարգի դիպլոմը:

Ես պարտական եմ և խոնարհվում եմ Հայկուհի Գարագաշի հիշատակի առջև, ով իմ առաջին մրցույթի նախագահն էր: Մեր գրույցի ժամանակ նա ինձ ասաց. «Խոստացիր, որ կյանքում բեմը չես թողնելու, խոստացիր, որ երբևէ չես հուսահատվելու, ինչ էլ պատահի: Այս պարզեցրեց նրա համար եմ, որ մեր բեմում նոր ասմունքողներ երևան: Դու պետք է միշտ բեմում լինես»:

Նա ինձ մեծ հավատ ներշնչեց: Ես միշտ հիշում եմ Հայկուհի Գարագաշի խոսքերը:

**- Ո՞րն է ասմունքի ուժը:**

- Բացի մշակութային արժեքից, որ պարունակում է գեղարվեստական խոսքը, բացի անհատի վրա թողած իր բազում ազդեցություններից՝ դաստիարակող է: Ուզում եմ ընդգծել խոսքի բացառիկ ուժը, հալածանքների ենթարկված ժողովրդիս համար: Սկսած մայրենիի պահպանումից մինչև կռվի դաշտ մեկնող զինվորի շուրթերին թառած երգի տողերը, բառերը, հայրենիքի կենսագրությունը, վերելքներն ու վայրէջքներն անցնում են ստեղծագործող անհատի ոգով: Իսկական բանաստեղծի ներաշխարհը հայելին է իր երկրի, իր ժողովրդի:

Հիշում եմ այն մութ, ցուրտ տարիներն էին: Կոմիտասի անվան կամերային տանը կայացած գրական երեկոյից հետո լեփ-լեցուն սրահում հանդիսատեսն ինձ բաց չէր թողնում անելով իր սրտի խոսքը: Հանդիսատեսներից մեկը հուզմունքով փաթաթվեց ինձ և ասաց. «Ես այնպես հուզված եմ եկել Նոյեմբերյանի դիրքերից, որ մտածում էի ետ չգնալ խրամատ: Շնորհակալ եմ ձեզանից, ես վաղը դիրքեր կվերադառնամ...»: Ավելի մեծ գնահատական հնարավոր չէր պատկերացնել:

Այսօր էլ Սվետլանա Խանունյանը շարունակում է հանդես գալ գրական երեկոներով: Յոթ տարի շարունակ եթերում հնչեց Սվետլանա Խանունյանի հեղինակային «Լուսամատյան» ռադիո-ծրագիրը՝ նվիրված քրիստոնեության 1700-ամյակին:

«Երևան» հեռուստաընկերության «Երկիր Նաիրի» հեղինակային ծրագիրը, որը վարում է նա, մեր ժողովրդին պոեզիայի հրաշալի երեկոներ է պարզում:

## Բանաստեղծուհի ԼԻԼԻԹ



Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ օծվել է Երևանի Հարավարևմտյան թաղամասի նորակառույց Սբ. Երրորդություն եկեղեցին: Այն կառուցվել է Լուիզ Սիմոն Մանուկյանի բարերարությամբ: Նորակառույց եկեղեցու ճարտարապետն է լուսահոգի Բաղդիկ Արզումանյանը: «Հրաշափառի» երգեցողության ներքո, եկեղեցականների թափորի ուղեկցությամբ, իր օրհնությունը բաշխելով հավատացյալ ժողովրդին՝ Վեհափառը մտավ նորակառույց տաճար: Վերջինս եպիսկոպոսաց դասի հետ սրբալույս մյուռնով օծեց սուրբ սեղանը, խորանի սյուներն ու մկրտության ավազանը:

Նորին սրբությունն իր գնահատանքը հայտնեց բարերարին, Երևանի քաղաքապետին, Մալաթիա-Սեբաստիա համայնքի թաղապետին և շինարարներին:

Այնուհետև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ Եպիսկոպոս Կճոյանը Սուրբ պատարագ մատուցեց:



# ՀԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՆ ԱՄՈՒԹԻԿՈՒՆՔՍ Է



Սասունցի է երգչուհի Լուսա Կալայեյանը. ծնվել, մեծացել է Սիրիայում, սակայն միշտ բարձր է գնահատել հայրենիքն ու հայկական մշակույթը:

Հալեպի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն երգեհոն էր նվագում, միաժամանակ երգում էր «Ձվարթնոց» երգչախմբում, մասնավոր դասեր էր վերցնում Տաթևիկ Սազանդարյանի սան՝ Արաքս Չեքեյանի մոտ:

Հայ երգարվեստը մանկուց էր նրան հոգեհարազատ: Վերադառնալով Հայաստան՝ մասնավոր դասեր վերցրեց Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում: Այժմ սովորում է Կոմիտասի անվան պետական երաժշտանոցում՝ աշուղ Շահենի դուստր տիկին Էլինարի մոտ:

Լուսա Կալայեյանը բազմաթիվ միջոցառումների է մասնակցել (վերջերս ՀՀ պաշտպանության նախարարության հրավերով եղել է տարբեր զորամասերում՝ Սևանում, Վարդենիսում,

Մարտունիում, Քարվաճառում): Ներկայացել է հեղինակային երգերով: Նրա ստեղծագործական աշխատանքների երախարհիքը «Հաղթանակ» ծայրասկավառակի թողարկումն է: Ձայնասկավառակում զետեղված են հայ դասական-ժողովրդական երգեր, որոնք նորատիպ են և ուրվագծում են Հայաստանի անցյալի և ապագայի հաղթանակները: Իր արվեստով նա փորձում է ներկայացնել ազգային գաղափարախոսությունը:

Երգչուհուն զորամասերում ընդունեցին խանդավառությամբ: Արժանանալով ջերմ ընդունելության՝ նա ավելի ամուր է զգում իրեն հայրենի հողում: Չորամասերում նա ծանոթացավ զինվորի ապրելակերպին, նիստուկացին, տեսավ ու համոզվեց, որ ամեն ինչ ընթանում է իր հունով: Եվ նրա համոզմամբ՝ Հայոց բանակը հզոր է, կարգապահ և կազմակերպված:

Լ. Կալայեյանի ցանկությունն է, որ զինվորը միշտ ոգևորությամբ լսի հայրենասիրական երգեր: Նա առաջիկայում համերգային ծրագրով պատրաստվում է ներկայանալ Ֆրանսիացի հանդիսատեսին, որտեղ հանդես է գալու ազգային երգերով:

Այժմ Լուսա Կալայեյանը ՀՀ քաղաքացի է, և հայրենի լեռնաշխարհը նրա համար ամուր ու վստահելի թիկունք է նորանոր բարձունքներ նվաճելու համար:

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ԱՇԽԱՐՀՆ ԱՌԵՂԾՎԱԾ Է, ՄԱՐԴԸ՝ ՎԵՐԾԱՆՈՂ



Որքանով է ներդաշնակ մարդու էությունը գոյության հետ, մտածելու տեղիք է տալիս: Արդեն պատմությունը դարձած 20-րդ դարն ունեցավ և նվաճումներ, և կորուստներ, բայց արդյո՞ք լիարժեք է բացահայտված մարդու էությունը: Այս և նմանատիպ հարցերին պատասխանեց ԵՊՀ փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի պրոֆեսոր, գիտությունների դոկտոր Սիիրան Մովսեսի Խաչատրյանը:

**- Ի՞նչ ասել է մարդու էության և գոյության հարաբերակցություն:**

- Փիլիսոփայական մարդաբանության մեջ թերևս ամենաշատ վիճարկվող հարցը վերաբերում է մարդու էության և գոյության փոխհարաբերությանը: Մարդկային գոյությունը կեցության անդադար որոնումն ու նրա իմաստի ընթերցումն է: Այդ ճանապարհով մարդը ձգտում է իրացնել իր հիմնարար պահանջմունքները: Նոր դարաշրջանի փիլիսոփայության մեջ գոյության պայման համարվեց միակ հավաստի ռեալություն հանդիսացող մարդկային սուբյեկտիվությունը՝ բանականությունը, մտածողությունը: Իշխող դարձավ այն գաղափարը, որ բանականությունից դուրս ոչինչ չկա, գոյություն ունեցող ամեն ինչ բանական է: Աշխարհն ու մարդը՝ զարգացման բնորոշ առանձնահատկություններով, հակասություններով, գոյության պայմանների արտադրության և վերարտադրության գործընթացով ապահովում են զարգացման որոշակի ուղղվածություն: Եվ քանի որ մարդն ու աշխարհը մի միասնություն են, ապա այն, ինչ տեղի է ունենում աշխարհի հետ, փոխանցվում է մարդուն՝ ապրումների, տազնապների ձևով:

Ու եթե մարդը չհասկանա, թե ինչ է կատարվում աշխարհի հետ և չլսի նրա օգնության կանչը, ապա նա ընդունակ չի լինի ճանաչել նաև իր սեփական մտքերն ու խոհերը: Ամեն մի դարաշրջանում ստեղծված գոյության պայմաններն ապահովում են մարդու էութենական ուժերի զարգացման և իրականացման այն չափը, որը շատ թե քիչ համապատասխանում է տվյալ ժամանակաշրջանի առաջընթացի պահանջներին:

**- Արդյո՞ք մարդն իր ներուժը լիարժեք օգտագործում է այս աշխարհի հետ հարաբերվելիս:**

- Հայտնի է, որ մարդկությունն իր ներուժի մի չնչին մասն է օգտագործում: Դրա իրացման չափը պայմանավորված է հասարակական որոշակի պահանջարկի առկայությամբ: Մարդն ավելի է, քան առկա կեցությունը. նրա կյանքի շատ երևույթներ իրական, առարկայական աշխարհի շրջանակներից «դուրս են»: Թեև մարդն ինչպես մտածում, այնպես էլ գործում է, բայց գործունեության արդյունքը կարող է հավասարազոր չլինել գործադրած ջանքերին, ծախսված միջոցներին, սպասելիքներին: Դա մասամբ պայմանավորված է այն բանով, որ մարդու հարաբերությունն աշխարհի հետ հետզհետե ավելի միջնորդավորված բնույթ է կրում, որի վառ ապացույցն է «վիրտուալ» աշխարհի գոյությունը: Մարդկությունն ապրում է նաև այնպիսի պահեր, երբ մարդկային այդ ներուժի հանդեպ «պահանջարկի» աճի շնորհիվ նրա զարգա-



ցունը դառնում է ավելի ինտենսիվ և համապարփակ, դրան համապատասխան էլ ծնվում են մտքի տաղանդներ ու հանճարներ: «Բանականության ուժը իմացության լույսն է, կամքի ուժը՝ բնավորության էներգիան, զգացմունքի ուժը՝ սերը»:

**- Որքանո՞վ է մարդու զարգացումը նպաստում հասարակության առաջընթացին:**

- Մարդու էվոլյուցիոն զարգացման ընթացքում միասնաբար են հանդես գալիս նրա կեցության ժամանակային բոլոր դրսևորումները՝ անցյալը, ներկան ու ապագան: Մարդը չի կարող անտարբեր լինել իր անցյալի հանդեպ, նա գնահատում է իր ապրած կյանքը, բայց նրա համար թերևս ամենադժվարին խնդիրը ընդհանուրի մեջ սեփական «անկախության» պահպանումն է՝ իբրև ինքնաբավ մեծություն: Մարդու զարգացումն ավելի ինտենսիվ է ընթանում այնքանով, որքանով նա կարողանում է «անկախ» լինել և հաստատել իր «ես»-ը: Մարդու գոյությունն իմաստավորվում է հասարակության, մարդկանց հետ ունեցած փոխադարձ կապերով ու հարաբերություններով, որտեղ ձևավորվում ու դրսևորվում են նրա անձնային հատկությունները: Մարդու հասարակական ու անհատական կեցությունը չի սահմանափակվում միայն գոյության առկա հնարավորություններով, այն ընդգրկում է նաև ներկայի մեջ ներառված անցյալի ժառանգությունը, երևակայությանը արտահայտվող ապագայի տեսլականը՝ իրականությունում դառնալու ակնկալիքով:

**- Մարդու ու գոյության աշխարհը բացի նյութական աշխարհից, ունեն նաև հոգևոր աշխարհ: Որքանո՞վ է կարևոր «հոգևորը» մարդկության առաջընթացում:**

- Ակնհայտ է այն իրողությունը, որ հսկայական խզում է առաջացել մարդու զարգացման արտաքին՝ նյութատեխնիկական հնարավորությունների և նրա ներքին՝ հոգևոր ու բարոյական ներուժի իրացման մակարդակի միջև: Հասարակական նոր կողմնորոշումների հատուցած դժվարությունները, մարդկանց ապրելակերպի ավանդական ձևերի կտրուկ փոփոխություններն ու դրանց շնորհիվ ստեղծված սոցիալական ու հոգեբանական լարվածությունը, մարդու գործողությունները, մտածելակերպը, վարքագիծը դարձնում են անկայուն, անկանխատեսելի, ավելի շուտ՝ ներքաշում առօրեական հոգսերի ու «մանրունքների» գիրկը, զրկում աշխարհայացքային ճիշտ կողմնորոշումներից, իդեալներից: Մոռացության են տրվում համամարդկային այն արժեքները, որոնք մերձեցնում են մարդկանց, ամրացնում նրանց հոգևոր միասնու-

թյունը: Հասարակական գործընթացների այս բացասական միտումները հաղթահարելով՝ միայն բարձրությունը կարող է արդյունավետ օգտագործել իր կարողությունները և ապահովել հետագա առաջընթացը՝ լավատեսական ակնկալիքով:


**- Ո՞րն է 21-րդ դար թևակոխած մարդու փիլիսոփայությունը:**

- 20-րդ դարում մարդկությունը մեծ կորուստներ կրեց ոչ այնքան օբյեկտիվ հանգամանքների բերումով, որքան սուբյեկտիվ-անձնական որակներով պայմանավորված օրվա պահանջների ոչ համարժեք մտածելակերպի, գործողությունների, կողմնորոշումների պատճառով, որոնք, անշուշտ, կախված են մարդկային բանականության զարգացման աստիճանից: Մարդկության գործադրած ջանքերը և ձեռք բերած արդյունքը համատեղելի չեն: Այդ պատճառով էլ նախորդ դարից ներկա սերունդը ժառանգեց չլուծված, ժամանակի առումով նաև «ուշացած» ու բարդացած բազում հիմնախնդիրներ, որոնք որոշակի լարվածություն ստեղծելով՝ դարավերջում դարձան սոցիալական ցնցումների, ազգամիջյան, տարածքային բազմաթիվ բախումների պատճառ: Այդ իմաստով էլ մարդկությունը, կարծես, անցած հարյուրամյակը «պարտքով» փակեց: Բայց այդպես է առաջին հայացքից միայն: Այնուհանդերձ, 20-րդ դարը նոր՝ 21-րդ դարին փոխանցեց նյութական ու հոգևոր մեծ ժառանգություն, ինչպես նաև շատ ուսանելի դասեր: **21-րդ դարը պետք է լինի մարդկային բանականության հաղթանակի դար:** Այս դարը պետք է կողմնորոշվի դեպի մարդասիրական քաղաքակրթություն: Մարդու գոյության արտաքին աշխարհը իր բոլոր արժեքներով ոչ այն ինչ է, եթե ոչ մարդու էութենական ուժերի առարկայացված արդյունք: Այդ իմաստով էլ իրական աշխարհը պետք է մարդկային չափում ունենա, այսինքն՝ նրա գնահատման հիմքում դրվի «Մարդը բոլոր իրերի չափանիշն է» սկզբունքը: Դրանով է պատմական ընթացքը մարդկային իմաստ ստանում:

Մարդու մեծագույն մենաշնորհը՝ հզորության աղբյուրը, եղել և մնում են նրա բանականությունը, գիտակցությունը, ճանաչելու, ստեղծագործելու կարողությունը: Աշխարհի խորհուրդը նրա մարդկայնացումն ու բանական ձգտումը մարդով է պայմանավորված: Նա պատասխանատու է աշխարհում տեղի ունեցող բոլոր իրողությունների համար:

Գ.Յ.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԴՈՒԴՈՒԿԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍԱՐԿՎՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՐ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՆՈՒԽԳՈՐԾՈՑ**



ՅՈՒՆԵՍԿՕ-ն հայկական դուդուկի երաժշտությունը ճանաչել է մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության գլուխգործոց: Կազմակերպության մամլո տեղեկագրում նշվում է, որ վերջին տասնամյակներին դուդուկն ավելի ու ավելի քիչ է օգտագործվում ժողովրդական տոնակատարությունների ժամանակ, աստիճանաբար ավելի մեծ տեղ զբաղեցնելով համերգային կատարումներում: «Կուլտուրա» ռադիոկայանն այս կապակցությամբ ընդգծում է, որ դուդուկը դառնում է բարձր մշակույթի բաղադրամաս: Ծիրանենուց պատրաստվող հին հայկական գործիքի՝ դուդուկի երաժշտության ամենահայտնի կատարողներն են՝ Զիվան Գասպարյանը, Մկրտիչ Մալխասյանը և Սերգեյ Կարապետյանը:

Երևանում նախատեսվում է բացել «Դուդուկի տուն», որը կլինի հավաքատեղի դուդուկահարների և դուդուկի երաժշտության սիրահարների համար: «Դուդուկի տուն» կարող են այցելել ու սովորել ոչ միայն Հայաստանի ու Սփյուռքի երեխաները, այլև օտարազգիները: Այս մասին տեղեկացրեց դուդուկահար Գևորգ Դաբաղյանը և ավելացրեց, որ կենտրոնի հիմնումը նախատեսվում է իրագործել հինգ տարվա ընթացքում: Սա ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Մարդկության բանավոր և ոչ նյութական մշակութային գլուխգործոց» ծրագրի շարունակությունն է լինելու, որի իրականացման համար Հայաստանում ցուցաբերվելու է նաև պետական աջակցություն:



# Ճ Ե Ա Մ Ե Ն Ի Ը Ե Կ Ո Ւ Ջ Ե Ն Ի Ն



## ՀԱՂԱՐԾՆԻ ՀԱՍՏԵՆԻ ԸՆԿՈՒԶԵՆԻՆ

Առ շխարհի ամենագեղատեսիլ անկյուններից մեկն այն ձորահովիտն է, որ ընկած է Դիլիջան քաղաքից տասնութ կիլոմետր հյուսիս, ուր գտնվում է Հաղարծնի վանքը: Այստեղ, 1281-ին կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցու կողքին մի ընկուզենի է աճում, որը հասակակից է տաճարին՝ 700 տարեկան է:

Ավանդությունն ասում է, որ այդ տաճարը կառուցող վարպետը սովորություն ուներ իր կառուցած շենքերի կողքին ընկուզենի տնկել:

- Շենքը չմնա, ծառը կմնա, ծառը չմնա, շենքը կմնա,- սիրում էր կրկնել վարպետը: Տաճարը մարդու հոգին է քաղցրացնում, ընկուզենին՝ բերանը:

Եվ հիմա անանուն վարպետի հիշատակը հավերժացնում են քարե և կանաչ հուշարձանները:

## ՆՉԵՑՈՒ ԸՆԿՈՒԶՈՒՅԸ

Սասունում մի գավառ կար Նիչ անունով: Հենց այստեղ է ծնվել Եռամեծար փիլիսոփա Եսայի Նչեցին, ով

հիսունհինգ տարի եղել է Գլաձորի համալսարանի ուսուցչատեղ:

- Մեկն արհամարհելի թիվ չէ,-ասում էր փիլիսոփան,- մի-մի ծառ կտրելով՝ կարելի է անտառ ոչնչացնել, միաժամանակ մի-մի ծառ տնկելով՝ կարելի է անտառ ստեղծել:

Իր ասածը գործնականորեն հավաստելու համար նա դիմեց հետևյալ քայլի. Գլաձորի համալսարանի շենքից ոչ այնքան հեռու մի առապար ընտրեց և պարտադրեց, որ սաներից յուրաքանչյուրն ամեն



գարուն այնտեղ մի ընկուզենի տնկի, ապա օրի ու խնամի:

Հիսուն տարի անց ստեղծվեց ընկուզենիների մի հսկա անտառ, որտեղ երեք հազարից ավելի ծառ կար: Ուսուցչատեղի անունով էլ սաները անտառը կոչեցին Նչեցու ընկուզուտ:

## ՄԵՍՐՈՊԻ ԱՂԲՅՈՒՐՆ ՈՒ ՏԱՍՆՀԻՆԳ ԸՆԿՈՒԶԵՆԻՆԵՐԸ

Եղեգնաձորի շրջանի Խաչիկ գյուղի կենտրոնում մի սառնորակ աղբյուր կա: Այն կառուցել է տվել

դարբին մեսրոպը, դրա համար էլ կոչվում է Մեսրոպի աղբյուր:

Այ թե դարբին էր, հա՛: Երբ նա մուրճը սալին էր խփում, թվում էր, թե աշխարհի բոլոր չարերի շղթաներն է կռում: Երբեմն ինքն իրեն ասում էր. «Անժառանգ մարդն աշխարհում այնպիսի բան պիտի թողնի, որ մարդկանց աչքին բազմազավակ երևա»: Այդպես էր ասում, որովհետև ինքն էլ անժառանգ էր:

Իր կառուցել տված աղբյուրը նա համարեց անդրանիկ ժառանգ: Ապա աղբյուրի շրջապատում տնկեց տասնհինգ ընկուզենի, որոնք էլ համարեց իր որդիները: Ջրեց, խնամեց, և մի քանի տարի անց հաղթահասակ ծառեր դարձան: Նրա տնկած ընկուզենիներն ամեն տարի առատ բերք են տալիս խաչիկցիներին: Նրանք օգտվում են Մեսրոպի թողած բարիքից և հիշում մեծերի խոսքը.

- Եթե տնկածդ ծառը բար է տալիս՝ հաշվիր, որ դու դեռ ողջ ես:

## ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ «Սոսյաց անտառ»



## ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՐԾԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Օրերս Ախալքալաքի Կարծախ գյուղում Հայ օգնության միության (ՀՕՄ) Ջավախքի օժանակության ծրագրերի հանձնախմբի հովանավորությամբ և Հայ Առաքելական եկեղեցու Ախալքալաքի շրջանի հոգևոր հովիվ Տեր-Սամվել քահանա Թորոսյանի ձեռնար տեղի ունեցավ մանուկների մկրտության արարողություն:

Կազմակերպիչներն ընտրելն էին Կարծախ գյուղը, որովհետև այն սահմանամերձ է Թուրքիային և շրջկենտրոնից հեռու է 30 կմ:

Ջավախքում ստալինյան ռեպրեսիայի ժամանակներից սկսած՝ Կարծախ ոտք չէր դրել ոչ մի հոգևորական: Այս առումով, Կարծախի գյուղապետ Ատոմ Հողմրցյանը առավել է արժևորում ՀՕՄ-ի հանձնախմբի նախաձեռնությունը և ողջ համագյուղացիների անունից շնորհակալություն հայտնում:

ՀՕՄ-ի Ջավախքի օժանակության ծրագրերի հանձնախմբի նախագահ Բագրատ Սարգսյանը, Ա-Ի-Ն-Ֆ-Ո-ի հետ զրուցելիս նշել է, որ հանձնախումբը ծրագրում է նման հավաքական մկրտություն կազմակերպել նաև Բորժոմի շրջանի Տապածղուր գյուղում, ինչպես նաև Նինոծմինդայում:



# ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

Հայ մեծանուն աստվածաբան-հմաստասեր Գրիգոր Տաթևացին իր թողած մատենագրական հսկայածավալ ժառանգությամբ անջնջելի հետք է թողել հայ աստվածաբանական - փիլիսոփայական մտքի զարգացման վրա:

Գ. Տաթևացին ծնվել է 1346թ., Գուգարք նահանգի Թմբկաբերդ ավանում: Հետագայում նրա ընտանիքը տեղափոխվում է բնակություն է հաստատում Սյունյաց գավառի Վայոց Ձորում: Ծնողները նրան ուղարկում են ուսանելու Տաթևի վանք, որտեղ ժամանակին դասավանդում էր Հովհան Որոտնեցին: Տաթևացին դառնում է նրա ամենասիրելի աշակերտն ու օգնականը: 1371թ. նրանք միասին ուխտագնացության են գնում Երուսաղեմ, որտեղ Տաթևացին ընդունում է կուսակրոն քահանայության աստիճանը: Իր ուսուցչի մահից հետո նա Տաթևի վանքում իր շուրջն է հավաքում աշակերտներին: (Տաթևի համալսարանը վայելում էր մեծ հռչակ՝ որպես ժամանակի գիտական խոշոր կենտրոն): Տաթևացին մահացել է 1409-ին, Տաթևի վանքում:

Տաթևացու գլխավոր աշխատություններն են՝ «Գիրք Հարցմանց», «Գիրք քարոզութեան (Ամարան և Չմերան հատորներ)», «Գիրք, որ կոչի Ոսկեփորիկ», «Լուծունք համառօտի տեսութիւնն Դաւթի», «Ընդդէմ տաճկաց» և այլն: Նրա աստվածաբանական-փիլիսոփայական մտակառուցումները հիմնականում վերաբերում են Աստծուն, նրա կեցության ապացույցներին, արարչագործությանը, հոգու և մարմնի հարաբերակցությանը, կամքի ազատությանը, մարդու կյանքի իմաստին և նպատակին: Տաթևացու կարծիքով մարդկային ճանաչողության և գիտության գերագույն նպատակը աստվածայինի ճանաչումն է, միևնույն ժամանակ, աստվածային էությունն անճանաչելի է:

Աստծո մասին մարդը կարող է երկու եղանակով պատկերացում ունենալ՝ գիտությամբ և անգիտությամբ: Ինչ վերաբերում է գիտությամբ ճանաչելուն, ապա այն «բնական քննությամբ» է հնարավոր, այսինքն՝ մարդը, ուսումնասիրելով արարված աշխարհը և բացահայտելով տիեզերքում առկա կարգավորվածությունը, ներդաշնակությունը, բարոությունը, գեղեցկությունը և կատարելությունը, տրամաբանորեն հանգում է այդ ամենի գերագույն պատճառի անհրաժեշտ գոյության գաղափարին: «Բնական քննությամբ» միջոցով ապացուցվում է Աստծո գոյությունը, սակայն բնական տեսությունը ի վիճակի չէ իմանալու աստվածային էությունը: Աստծո բնությունն անեղ է, «անյայտ և անգիտելի»:

Տաթևացին նախապատվությունը տալիս է Աստծո գոյության տիեզերաբանական ապացույցին: Այդ ապացույցի ժամանակ միտքը արարված աշխարհի, հետևանքների ուսումնասիրությունից բխեցնում է դրանց պատճառի՝ Աստծո գոյությանը: Ըստ Տաթևացու, ոչ միայն հավատով, այլև բանականությամբ կան «բնական քննությամբ» կարելի է հիմնավորել Աստծո գոյությունը: Աշխարհը ինքնակա և ինքնածին չէ, ոչ էլ հավերժական գոյ է, այն ստեղծվել է Աստծո կողմից: Ի սկզբանե եղել է Աստված և ստեղծել է աշխարհը ոչնչից: Արար-

ված տիեզերքն իր մեջ կրելով աստվածային հետքերը, ներկայանում է իբրև կարգավորված ու աստիճանակարգված, ներդաշնակ ու նպատակահարմար գոյերի ամբողջություն: Տաթևացին արարված տիեզերքի, յուրաքանչյուր գոյացության մեջ տեսնում է բարության, օգտակարության և նպատակադրվածության հատկություններ: Այն, ինչ Աստված ստեղծել է, կատարել է որոշակի նպատակով, արարվածներից յուրաքանչյուրը ունի նախասահմանված ուղղակի և անուղղակի նշանակություն: Իբրև աստվածային ստեղծագործության արգասիք՝ մարդը, մի կողմից գոյաբանական-ծագումնաբանական առումով համացեղակից է մյուս արարածներին, իսկ մյուս կողմից՝ Աստծո կամոք տրված անզուգական կարգավիճակով գերազանց և առավել է մյուս արարածներից:

Տիեզերքը, ըստ նրա, մարդակերպ կենդանի օրգանիզմ է, ուստի՝ ինչպիսին մարդու կազմությունն ու կառուցվածքն է, այնպիսին էլ մեծ տիեզերքն է: Օրինակ, թե՛ մեծ տիեզերքը, թե՛ փոքր տիեզերքը կազմված են միևնույն տարրերից՝ հողից, ջրից, օդից և կրակից, որոնք երկու աշխարհում էլ ունեն միևնույն դասավորվածությունը: Համապատասխանություն գոյություն ունի նաև մարդու և տիեզերքի, մասերի և անդամների դասավորվածության միջև: Մարդու նման մեծ աշխարհն ունի մարմին, երկինքը գլուխն է, երկիրը՝ ոտքերը: Մարդու գլուխը նման է երկնքին, որը գտնվում է վերևում և կլոր ձև ունի, աչքերը երկնային լուսատուներին, միտքը՝ երկնքում գտնվող իմանալի գոյերին, և այլն: Աստծո պատկերով և նմանությամբ է ստեղծվել մարդը, և բազում են մարդու և Աստծո միջև գոյություն ունեցող նմանություններն ու ընդհանրությունները: Աստված անմահ է, աներևույթ, աննյութական, մարդն էլ շնորհիվ իր հոգու նմանատիպ հատկությունների, նման է Աստծուն: Աստված Սուրբ Երրորդություն է, մարդը նույնպես երրորդություն է, այսինքն՝ բաղկացած հոգուց, մարմնից և մտքից: Մարդն Աստծո նման ունի միտք, իմացություն և կամք: Ինչպես Աստված է ամեն ինչ տեսնում, ճանաչում, այնպես էլ մարդը գիտության միջոցով ճանաչում է գոյերը և հասու լինում ճշմարտությանը:

Աստծո և մարդու բնությունները իրար նման են, բայց ոչ նույնական: Դա ունի բազմաթիվ բացատրություններ, ինչպես, օրինակ, եթե մարդը կարող է սխալ ընտություն կատարել, ապա Աստված միշտ անսխալական է, մարդը կարող է ուսման և գիտության, իսկ Աստված անկարող է, քանզի հենց ինքն է գիտության և իմաստության աղբյուրը: Տաթևացին իր աշխատություններում ցույց է տալիս մարդու կարգավիճակի բացառիկությունը արարչակարգում, նրա առավելությունը և գերազանցությունը մյուս արարածների նկատմամբ:

Վերը ներկայացվածը Գրիգոր Տաթևացու աստվածաբանության մի փոքր մասնիկն է, այն առավել ծավալուն և բազմակողմանի ներկայացման կարիք ունի:







# 1500-ԱՄԵԱՅ ԶԱՅՈՑ ԳԻՐԸ. ԳՐԻԳՈՐ ԶՕՅՐԱՊ



«Չայրե-նակիցներ»

Ա մ է ն ազգ, ամեն ժողովուրդ իր տօներն ունի, ո՛րը թագաւորութեան մը ծնունդը, ո՛րը ազատութեան ձեռք բերուիլը, ո՛

րը պատերազմի դաշտին վրայ շահած յաղթանակ մը կը տօնէ: Ասոնք քաղաքական նշանակութիւն ունին: Մենք այստեղ ժողուրդ ենք մեր ազգային լեզուն տօնելու. անիկա քաղաքական չէ, այլ քաղաքակրթական հանգամանք մը ունի:

Քաղաքական տօները յաճախ արյան բիծեր կ'ունենան իրենց վրայ, մեր տօնածը գերծ է այդ տեսակ ցաւէ: Թագաւորութիւնները կ'իյնան, ազատութիւնները կը ջնջվին, հաղթանակները յաճախ պարտութիւններու կը փոխուին, բայց լեզուն կը մնայ ազգի մը ճակատագրի պէս անջնջելի:

Չայ տառերուն գիտովը Չայ լեզուն եւս, ազատելով իր արկածալից կեանքէն, հաստատուն ձեւ մը ստացաւ. ահա ասոր համար է, որ Չայ լեզուի տօնը կը միանայ Չայ տառերու տօնին հետ: Ես պատմականը չպիտի ընեմ Չայ տառերու գիտին, այլ անոր երկու հանգամանքներու վրա պիտի ծանրանամ:

Առաջին՝ անոր կատարելութիւնն է:

1500 տարի ետքը՝ այսօր, մեր այբուբենը որ եւ է պակասութիւն չկրէր: Եթէ բոլոր օտար լեզուները արտասանելու մէջ հեշտութիւն ունինք, ատիկա մեր այբուբենին ճոխութեան կը պարտինք: Ասոնք չնչին առաւելութիւններ չեն, այո՛, որովհետեւ չկայ մարդկային գիտ մը, որ որոշ ժամանակէ մը վերջ իր այժմեութիւնն ու գործածականութիւնը կորսնցուցած չըլլայ:

Մեկը ժամանակը, միւրուը՝ պարտքը, որոնցմով քաղաքականութիւնը շինուած է՝ ձեռք-ձեռքի տուած շարունակ կ'աշխատին նորութիւնները փճացնելու: Նորութիւնները նորութիւններով կը փոխանակուին: Ճշմարիտ հանճարը ահա այս յատկութիւններով է, որ կը զանազա-

նուի սովորական հանճարէն: Այս պատճառով մեր նախնիքը գիտին մէջ հրաշք մը տեսած են. ատիկա նկատած են ընծայ մը, միակ ընծան այն ազգին, որուն այնքան աղէտներ տուած է:

Երկրորդ հանգամանք. թէ՛ Չայ լեզուի եւ թէ՛ Չայ տառի մասին աշխատողները լայնախոհ ազատականութեամբ մը կատարած են իրենց գործը, նեղմիտ չեն եղած եւ մեր դրացի ազգերէն փոխառութիւններ ըրած են: Ահա՛ այդ փոխառութիւններուն է, որ կը պարտինք մեր գրական ճոխութիւնը: Եկեղեցականութեան համար պատիւ մըն է, որ այդ գիտը ընդունողները եկեղեցականներ են: Եկեղեցականին պարտականութիւնը միայն աղօթելը չէ. տեսէք Դեռնողները: Նախկին եկեղեցականները խաղաղութեան ատեն գրակա-



նութեամբ զբաղէր են եւ պատերազմի ատեն ալ ռազմադաշտ զացած: Այս մասին շատ անուններ կրնամ յիշել, բայց նախ կ'ողջունեմ այն աճիւնները, որոնք Աշտիշատի եւ Օշականի մէջ կը հանգչին (բուռն ծափեր):

Մեր եկեղեցին տառերու գիտը ընողները սուրբերու կարգը անցուց: Ի՞նչ է սրբութիւնը: Մի՞թէ եկեղեցիներու եւ վանքերու մէջ առանձնանալ, ծոմ պահել, ոչ ոքի չարութիւն չընել կը բաւեն սրբութեան համար: Ո՛չ: Սրբութիւնը ան է, որ մարդ ուրիշներուն ցաւը կ'ամոքէ եւ իր անձը մոռնալով, անոնց համար կ'աշխատի: Այսօր 20-րդ դարու սուրբեր են Մարքոնի, Էտիսըն, Բասթօր եւն.: Երբ մարդ իր հայրենակիցներուն համար իր կեանքն ու դիրքը վտանգի կը դնէ,

անիկա ազգին սուրբն է: Երբ ուշադրութեամբ հետեւինք հայ պատմութեան, կը տեսնենք, որ գիրի գիտը Չայուն գոյութեան ամենամեծ ազդակը եղած է:

Վերջին 100 տարուան գրեթէ ժամանակակից պատմութեան վրայ աչք մը նետենք: Անցեալ դարուն սկիզբը գրականութիւն չկար, գրաբարը կորսուած էր, իսկ աշխարհաբարը դեռ չէր կազմված: 1850-ին մամուլը սկսաւ հրատարակուիլ, յետոյ Մխիթարեանները սկսան: Օտեանի պէս հոյակապ անձ մը պատկուցութիւն չստացաւ իրեն գրականութեամբ զբաղելու եւ անով պատուելու: 1870-ին թէ՛ Թուրքիոյ եւ թէ՛ Կովկասի մէջ գրականութիւնը զարթում մը ունեցաւ: Այնտեղ ծագում առին Խ. Աբովեան, Ռաֆֆի, Մ. Նալպանտեան եւն.: 1880-ին Չայ գրականութիւնը արդէն բոլոր գրականութիւններուն մէջէն իր գլուխը վեր բարձրացուցած էր:

...Եթէ քննենք ազգի մը իյնալու պատճառները, պիտի տեսնենք, թէ այն ազգը, որ եսականութեամբ օժտուած է, որքան յոյս ու կենսունակութիւն ունենայ իր մէջ, նոր կ'իյնայ այդ ազգը: Իսկ երբ եսականութեան տեղ այլասիրութիւն եւ ազգասիրութիւն տիրէ, որքան ալ յուսահատ ըլլայ այս ազգը, նորէն չմեռնիր:

...Ո՞վ ենք մենք ազգերու ժողովին մէջ. պատուկ մը, աղքատ մը: Ֆրանսացի բանաստեղծ մը կ'ըսէ. «Պատուկները, հա, բայց անոնք ալ իրենց զանծերն, իրենց երազներն ունին»:

Մենք ալ՝ իբր ազգ մեր յոյսերը, մեր յիշատակները եւ մեր երազներն ունինք, եւ այդ յիշատակը անշէջ պահելու համար է, որ մեծ տօնը կը տօնենք:

Երոպացի գիտնական մը ըսած է. «Մեծ կայսրութիւններու անկման պատճառները իրենց մէջ են»:

Ես պիտի ըսեմ. մեզի պէս պատիկ ազգերը իրենց վերականգնումին յոյսերը իրենց սիրտին եւ այսօրուան պէս իրենց յիշատաններուն մէջ կը կրեն:

Գատրգիւղ, 13 Նոյեմբեր, 1913թ.

**Տպագրութեան ներկայացրեց  
ՅՈՒՏԱ ԶԱԿՈՅԱՆԸ**



# ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ ԵՎ ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ (1825-1912)

Բ. «Այն ժամանակ միայն, երբ արդեն արտադրության տվյալ եղանակը կիսով չափ իր դարն ապրել է, երբ նրա գոյության պայմանները նշանակալից չափով անհետացել են, և նրա հաջորդն արդեն բախտում է դմները, այն ժամանակ միայն շարունակ ավելի ու ավելի անհավասար դարձող բաշխումը սկսում է անարդարացի թվալ միայն, այդ ժամանակ մարդիկ սկսում են իրենց դարն ապրած փաստերից դիմել՝ այսպես կոչված **հավիտենական արդարությանը**»: Բարոյականության և իրավունքի աշխարհին ապավինող այս ցասումը, էնգելսի կարծիքով, որքան էլ արդարացի է, սակայն այլևս չի նպաստում հետագա զարգացմանը:

Խղճի, արդարության, ճշմարտության **հավիտենականացման** պատճառը, հայ էթնոհոգեբան Հայկ Ասատրյանի կարծիքով, միջնադարյան ավատական մտախառնվածքի ոգեղենությունն էր: Երևույթների ծագման աստվածային սկզբի պատկերացումը հավիտենապաշտության կնիքով էր դրոշմում այդ ժամանակի մշակույթը: Աստվածային սկիզբն է արժեքների հավիտենացուցիչը: Նոր հարաբերությունների երևան գալով՝ միջնադարյան համայնական մտախառնվածք ունեցող մարդը ողբերգականորեն է ապրում հավիտենական իմաստների և իրականության աններդաշնակության իրողությունը: Միջնադարում հավիտենականի կռահում կար բարոյականության մեջ, հոգին ավելի մոտ էր Աստծուն, խիղճն ավելի արթուն էր, միտքն ավելի հավիտենատես և հավիտենահակ: Մինչդեռ առևտրական և փողային հարաբերությունները ասպարեզ են բերում չոր ներկայապաշտություն: Փողային հարաբերություններով որոշարկված նոր ժամանակների մարդու պրագմատիկ մտածողությունն ու հոգեբանությունը՝ մարդկային հարաբերությունների մեջ իրենց չորության և պաղության շունչը բերեցին:

Այդ նոր հոգեբանությունն էլ սնուցեց մի անսանձ ազատականություն, ինչը ծնեց իմաստամերժ իրապաշտություն և ներկայագագեց եսապաշտություն: Դա էլ խաթարեց կոլեկտիվի հավաքական գոյությունն իմաստավորող հավիտենահակ կենսատու արժեքները, աղոտացրեց հավիտենականի զգացումը: Հայ էթնոհոգեբանի բնորոշմամբ՝ շահը դարձավ ժամանակի մեծագույն առեղծվածը, թուլ-չանքը, երջանկության միջոցն ու նպատակը: Ավանդույթներից դատարկվեց ու աղոտացավ կյանքը, ներկայապաշտությունը սկսեց ավերել նախկին ոգեղեն աշխարհը, քրիստոնեությունը կորցրեց իր կենսազղեցությունը: Պրագմատիկ այս ոգին իր կնիքը դրեց համայնքի կյանքի բոլոր օղակների վրա, իրական շահի ըմբռնումը կապվեց տվյալ վայրկյանի հետ, իսկ վայրկենապաշտությունն ամեն ինչ դարձրեց հարաբերական:

4. Սունդուկյանի ստեղծագործությունը համայնքում, ինչպես նաև ազգային մարմնում, խաթարված հավիտենական արդարությունը վերականգնելու պատմամշակութային ջանադրություն է: Սունդուկյանը չգիտեր, թե ինչի՞ց է, որ նախկին բնական վիճակից առաջացավ այս արատավոր հանրությունը, սակայն համայնքին համահավասար ապրեց արդարությունից մինչև հարաբերական ներ-

կայապաշտություն ծավալվող ավերածության ողջ ողբերգությունը: Առերևույթ կարող է այն տպավորությունն ստեղծվել, թե հավիտենական արդարության, ճշմարտության, արդար, հալալ վաստակի հնչեցումները Սունդուկյանի արվեստի էթիկան դարձնում են մերկապարանոց բարոյախոսություն՝ ռացիոնալիստական և ուսուցողական շեշտադրումով: Իրականում Սունդուկյանը արդարության էությունը բխեցնում է ոչ թե բանականությունից, այլ զգացմունքների՝ սրտի, խղճի աշխարհից. «Աստվածաշնչումը գրած է, վուր աստուծ մարդուս ստիղծից իր պատկիրքի. էտու միտկն էն է, վուր մարթն աստուծ նմանվի չէ թե աճկով ու ունքով, ամա ճշմարտութենով ու արթարութենով: Եփ որ էս երկու բանը մարթս հաստատ ունենա սրտումը...»:

Նրա համար բարոյական կամքը, միաժամանակ, բանական կամքն է, ինչը կարող է հաղթել իր հակառակ «ես»-ին, որը ստեղծվում է անհատի անբանական բնությամբ: Դրա համաձայն, բարոյական գոյությունը բանական էակի անընդմեջ օրենսդրությունն է իր անձի հանդեպ: Իսկ այդ օրենսդրության բարձրագույն չափանիշը անհատի խիղճն է. «Ի՞նչ հարկավուր է դատաստան, ամեն մարթ արթարութենի կշիռք սարքած ունե սրտումն ու ավետարանի գորութենով է վարվում»: Սունդուկյանն իր հերոսների էության մեջ իրապես տեսնում է ճշմարտության, արդարության, կամքի ազատության պահանջը՝ որպես ինքն իրեն պտղավորող ուժ:

Թատերական արվեստի հնարավորություններով, հեզմանքով ու սարկազմով, արդարության, հավիտենական բարոյական արժեքների քարոզչությամբ, դրամատիկ և սենտիմենտալ էֆեկտներով Սունդուկյանը ջանում է վերստին ձևավորել ընդհանուր բանական և բարոյական կամք և ապահովել դրա հաղթանակը մասնավորված հանրության հանդեպ, բարոյականացնել մասնավորված շահերով ու կամքով տրոհված հանրության օրգանիզմը, վերակերտել կոլեկտիվ բարոյական մարմին, հանրային «ես» լուսավորված ժամանակի առաջավոր գիտակցությամբ, բարոյական կամքով, հարուստ ու ազնիվ զգացմունքների աշխարհով:

Եվ եթե համայնքի արդարությունը ենթագիտակցական է և սովորութենական համատեքստ ունի, ապա Սունդուկյանի արվեստում, այն ածանցվել է խղճին: Արդարության ըմբռնումը, հարաբերելով խղճին և պարտքի զգացմանը, Սունդուկյանը կերպավորեց պատմականորեն նոր մարդու նկարագիր: Խիղճը, եվրոպական շատ լուսավորիչների նման, Սունդուկյանը դիտում է որպես բոլոր կարգի հասարակական առաքինությունների և ազնվական մղումների ակունք: Ռուսոյի կարծիքով, առաքինության օրենքները գրված են բոլորի սրտերում, և դրանք ճանաչելու համար բավական է խորանալ ինքն իր մեջ և կրքերից խաղաղված լռության մեջ լսել սեփական խղճի ձայնը: Իսկ է. Կանտը շեշտում էր, թե արդարության դատը իր մեջ հակասություն է պարունակում, երբ այն փորձում են հաստատել իրավունքով, քանի որ իրավունքը ոչ միշտ կարող է հնչեցնել արդարության ձայնը: Հատկապես, երբ





## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼԱԶԱՐՅԱՆ (1735-1801)



270 տարի առաջ՝ նոյեմբերի 23-ին, ծնվեց ազգային-ազատագրական շարժման գործիչ Հովհաննես Լազարյանը՝ ռուսական ժառանգական ազնվական տիտղոս ստացած գերդաստանի երկրորդ սերնդի ներկայացուցիչը: Նա իր գործունեությամբ մեծ ճանաչում ու հռչակ բերեց Լազարյան տոհմին: Լինելով Ռուսաստանի հարուստ արդյունաբերող-կալվածատերերից մեկը և սերտ հարաբերություններ ունենալով արքունի մեծամեծների հետ՝ նա միաժամանակ տարված էր Հայաստանի ազատագրության ու ազգային պետականության վերահաստատման գաղափարներով և կանգնած էր իր ժամանակի հայ ազատագրական շարժման հայտնի գործիչներ Հովսեփ Էմինի, Հովսեփ Արղությանի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի և այլոց կողքին: Նա կազմեց և 1780-ի հունվարի 10-ին ռուսական կառավարությանը ներկայացրեց «Պարոն Իվան Լազարևի» հուշագիրը:

Այդ հուշագրում նա առաջ էր քաշել Հայկական պետություն ստեղծելու ծրագիրը, որը պետք է դաշնակցային կապերի մեջ գտնվեր Ռուսաստանի հետ: Հայաստանի ազատագրումը զլխավորելու էր հայ ժողովրդի կողմից ընտրված առաջնորդը: Այդ նպատակի իրագործմանն էին ուղղված նաև Հովհաննես Լազարյանի՝ հարազատ ժողովրդին կրթելու, լուսավորելու ջանքերը: Նրա միջոցներով դպրոցներ բացվեցին Թիֆլիսում, Նոր Նախիջևանում, Գրիգորիպոլսում (հայերի հիմնած Մոլդովա քաղաքում): Սակայն նրա երախայրիքը Մոսկվայի Լազարյան ճեմարանն էր, որը հիմ-

նադրվեց և սկսեց գործել միայն նրա մահից 14 տարի անց՝ 1815-ին:

19-րդ դարում արևելահայերի լուսավորության ու մշակութային կյանքի ամենանշանավոր կրթօջախը Լազարյան ճեմարանն էր, որը ժամանակակիցներն անվանել են «Սերմնարան հայոց դպրոցաց»: Լուսավորության բնագավառում Լազարյանի հայացքները հետագայում դրվեցին ճեմարանի գործունեության հիմքում և ուղեներեցին այդ կրթարանի դերը մեր ժողովրդի քաղաքական և մշակութային կյանքում: Ուսումնարանի նախնական նպատակն է եղել կրթություն տալ հայ աղքատ աշակերտներին, սակայն շուտով այն վերածվել է բազմաբնույթ ու բազմաստիճան, բարեկարգ մի հաստատության ընդունելով արևելագիտական թեքում: 1824-ին ճեմարանը դարձավ արևելյան լեզուների գիմնազիա, իսկ 1827-ին՝ վերանվանվեց Արևելյան լեզուների Լազարյան հայկական ինստիտուտ: 1848-ին նոր կանոնադրությամբ՝ այն դարձավ առաջին կարգի բարձրագույն ուսումնական հաստատություն և կոչվեց Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտ. գիմնազիական 6-դասյա դասընթացին զուգահեռ ավելացավ երկդասյա մասնագիտական լիցեյական բաժինը՝ արևելագիտական թեքումով, որն իր ընդգրկումով հավասար էր Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների բաժնին: Ճեմարանում ավանդվում էին հայոց լեզու, հայոց պատմություն, մատենագիտություն և այլն: Անկախ ցարական կառավարության հետապնդած նպատակներից (հաստատությունը դարձնել իր արևելյան քա-

ղաքականությանը նպաստող կենտրոն), Լազարյան ճեմարանը, շնորհիվ այնտեղ դասավանդող հայ դասախոսների (Հարություն Ալանդարյան, Ստեփանոս Նազարյան, Միքայել Նալբանդյան, Սմբատ Շահազիզ, Մսեր Մսերյան, Մկրտիչ Էմին) և մեծաթիվ հայ սաների, շարունակեց մնալ հայկական լուսավորության կենտրոն, զարկ տվեց հայագիտությանը, եղավ հայերեն նոր դասագրքերի ստեղծման ու տպագրության, թատերական կյանքի, աշխարհաբար լեզվի մշակման օրրան ու հայ մտավորականներ պատրաստող օջախ:

Լազարյան ճեմարանը 1871-ին անցավ Լուսավորության մինիստրության (Նախարարության) տնօրինության տակ, նրա լիցեյական բաժինը վերածվեց արևելյան լեզուների ֆակուլտետի և, շնորհիվ տեղի հայ ուսուցիչների ու հասարակության ակտիվ միջամտության, շարունակեց հայ մտավորակության կարգեր պատրաստել: Լազարյան ճեմարանի հետ է կապված հայ գիտնականների, ռուս խոշոր արևելագետներ Վ. Ֆ. Միլերի, Ա. Կ. Կրիմսկու, Ֆ. Ե. Կորշի, Ա. Ն. Վերելովսկու, Վ. Ա. Գրիգորևսկու և վրացի գիտնական Ա. Ս. Խախանաշվիլու գիտական ու մանկավարժական գործունեությունը:

խոսքը ուրիշի իրավունքի մասին է: Խստագույն իրավունքը մեծագույն անարդարություն է: Արդարությունը վերաբերում է միայն խղճի դատաստանին: Այդպես էին մտածում եվրոպացի լուսավորիչները, այդպես էր մտածում նաև Սունդուկյանը. «Վո՛ր օրենքն ինք դրուստ-դրուստ կատարում, վուր էս բանումն էլ մեմակ օրենքը պատճառ բերինք»: Սունդուկյանի էթիկան նաև կրոնին ապավինելու ներքին անհրաժեշտություն է զգում, քանի որ չունի ինքնուրույն էթիկական սկիզբ: Արարիչ և բնություն՝ ահա նրա ելակետը: «Ինչքան էլ մարդը կոպիտ կերպով պատկերացներ գերագույն սկիզբը, աստվածային ոգին, նա անպայման նրանում տեսնում է ճշմարտություն, գերիմաստություն, բանականություն, արդարություն, որոնք թագավորում և հաղթում են գոյության նյութական կողմը» (Գերցեն):

Բարոյականության փիլիսոփայության համաձայն, բարոյականի հիմքում, էության մեջ կա սուբստանցիալ, նախաստեղծ, ինտուիտիվ ինչ-որ բան, ինչը եսասիրական և հասարակական մղումների միջև ստեղծում է ներդաշ-

նակություն: Իրերի բնույթի մեջ առկա է մի կարգավորող սկզբունք, բնության մի ինչ-որ ներքուստ իրար կապակցող խորհրդավոր, առեղծվածային ուժ, ինչն էլ դրդում է, կամա թե ակամա, նպաստելու ընդհանուրի բարօրությանը: Եվ քանի որ դա, իրոք, այդպես է, ապա իմաստուն թունամյանը չափազանց խորագգա և ճշմարիտ էր, երբ Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունից առանձնացրեց ոսկու այն ծուլածո կտորը, ինչը մնայուն է և բոլոր ժամանակների համար ազնիվ մետաղի հնչողություն ունի. «Ու անվերջ մեծ Պեպոն կյանքի բեմի վրա մաքուր, հաղթական՝ Ձիմզիմովի դեմը կանգնած իր հալալ աշխատողի կոշտ ձեռքը կգարկի մուրհակին ու Թիֆլիզի բարբառով կորոտա. քու սրտումն ի՞նչ է գրած... ու կվարի իր ազնիվ կռիվը, ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար»:

**ԱՐԱՍ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների թեկնածու**



# Մ Ի Պ Ի Լ

(Չապել Ասատուր, 1863-1934)

## 5. Սիպիլի վաստակը՝ որպես ազգային գործիչ

1879-ին, ավարտելով Կ. Պոլսի Սկյուտարի ճեմարանը, Սիպիլը տասնվեց տարեկանում հիմնեց «Ազգանուէր Յայուհեաց Ընկերութիւնը», իր «ամէնէն մեծ գործը, զինքը բազմապատկող, խանդավառող գործը, իսկալը որուն շուրջ կը վառէր սիրտին ու միտքին ջահերը»: Ընկերության նպատակն էր, գավառների մեջ վարժարաններ բացելով, հայ գիրը հնչեցնել և կրթել հայ երեխաներին, առանձնապէս աղջիկներին: Ընկերության հասույթի աղբյուրը անդամավճարներն էին, բաժանորդագրությունները և մեծ համբավ վայելող պարահանդեսները, որոնց ներկա էր գտնվում ընտրանին: Սիպիլը այս ձեռնարկի «ձեղնաջահն էր եւ կը լուսաւորէր բոլորի հոգին, իր հոգիին ջահերով», - վերհիշում է Գ. Մառքը:

Ընկերության ջանքերով Մշո դաշտում, Վանում, Կարնո եւ Կիլիկիո հետին գյուղերում վարժարանների թիվը մի քանի տարում հասնում է 32-ի (11):

«Ազգանուէրը օրհնութիւն մը եղաւ ամէնուն համար, տեւելով որքան որ հնարաւոր եղաւ, եւ մնալով անմահ գործը կնոջ մը, որ անոր հիմքը դրաւ:

Ահա՛ հազուադէպ կեանք մը, ամբողջովին լեցուն գրական խղճմտանքով, լեզուական եւ ընկերային ընծայաբերումներով»(12):

«Ազգանուէր Յայուհեաց Ընկերութիւն»-ը գաւառներում մէջ բացած որբանոցներով ու վարժարաններով բարիք մը դարձած է այսօր գաւառացի աղքատիկ աղջիկները» (13), - վկայում է հրապարակագիր Արամ Անտոնյանը:

Եթէ Սիպիլը չունենար անգամ գրական վաստակ, ապա «Ազգանուէր Յայուհեաց Ընկերության» իսկ հիմնումը և այդ ձեռնարկի հանձնառությունը բավական կլինեին ասելու, թէ նա գնահատելի ծառայություն է մատուցել մեր ազգին և շարունակում է մատուցել՝ իր տիպարով հաջորդներիս ուսուցանելով:

## Հակոբ Օշականը՝ Սիպիլին ընդառաջ

Եթէ գրական արտադրանք տալը այնքան դուրսին գործ չէ, ապա գրականությունը կան որեւէ այլ արվեստ վերլուծելը՝ կրկնակի դուրսին չէ:

Հակոբ Օշականը (1883-1948) այն եզակի մտավորականներից է (գրող, խմբագիր, գրադատ), որը կազմել է «Համապատկեր արեւմտահայ գրականութեան» բազմահատորյակը: Այս համապատկերում նա անդրադարձել է նաև Սիպիլին, ունենալով մտածելու, տեսնելու ուրույն կերպ: Գ. Օշականի վերլուծականը մեծ արժեք ունի տարբեր տեսանկյուններից՝ պատմահասարակական, գեղագիտական, արվեստաբանական, գրադատական: Սիպիլի կյանքի ուղու վրա ևս մեկ անգամ հայացք ձգելու և գիտակցելու ևս կոգնի Գ. Օշականը՝ իբրև գրադատ, մշակութաբան: Ստորև մեջբերենք Օշականի «Արեւմտահայ գրականության համապատկերից» մի քանի գաղափար՝ իբրև ամփոփում Սիպիլի դիմանկարին:



«Մեր գրականութեան մէջ, պոլսեցի կինն իր բոլոր տկարութիւններով, ինչպէս շնորհներով մարմնացնող, միակ գրագիտուհին է անտարակոյս: Տիկին Սիպիլ, իր

հասկցած, կրցած կերպովը ծառայած է այս ժողովուրդին իմացական վաստակին: Անոր եօթանասուն տարիներուն ամէն մէկ էջը դրուագ մը պիտի պարփակէր մեր ընկերութեան հոլովոյթն:

Սկսած էր իր գարունքն: Անցած կեանքին մանաւանդ պաղէն: Կես դարը իր գիտակցութեան արեւմտահայ ողբերգութիւնն է կազմողը:

Կիներ կան իր գործին մէջ ու երբեմն ալ ինքը:

Իր վէպը շահ մըն է մեր ընդհանուր գրականութեան: Իր քերթողութիւնը՝ լեզուական փաստ մը: Իր հրապարակագրութիւնը՝ ընկերային արծագանգ մը:

Սորվեցուց ու ծառայեց:

Տառապեցաւ ու արտադրեց:

Իր անունը անարժան չէ իր սերունդին» (14):

## ՓՈՒԱՆՁԵՍ ՍԱՐԳՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### Ծանոթագրություն

11. Նկատենք, որ Նիկողոս Ջորայանը իր մի հոդվածում (1852թ., «Մասիս») գրում է, որ 1852թ., Կ. Պոլսում և նրա շրջակայքում եղել է 30 դպրոց, որոնցում ընդգրկված են եղել 3500 աշակերտ և 500 աշակերտուհի:

(Տե՛ս, Գ. Նազիկյան, Արևմտահայ մանկավարժական միտքն ու դպրոցը, Երևան, 1969թ., էջ 37): Այս տվյալի հիման վրա, կարելի է պատկերացում կազմել, թե տասնյակ դպրոցների բացումը ի՞նչ կրթական նշանակություն է ունեցել հայոց կյանքում:

12. Հայկանոյշ Մառք (Կեանքն ու գործը), Իսթանպուլ, 1954թ., էջ 382:

13. Ա. Անտոնյան, Գանձարան, Կ. Պոլիս, 1920թ., էջ 40:

14. Յակոբ Օշական, Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հինգերորդ հատոր, Երուսաղէմ, 1952, էջ 415-458:

## Սիպիլի մտածումներից (հանգավոր և արծակ)

Նոճի հասակ, շրթունք բոսոր,  
Մարգրիտ, գոհար, ոսկի վարսեր,  
Չեն կարող կին մընել աղուոր,  
Թէ աչքերուն մէջ չունի սէր:

Դժուար չէ օր մը բարիք ընել հոս,  
Ո՞վ իր կեանքին մէջ եղած չէ հերոս:  
Արդար արժանիք ունիս այն ատեն,  
Երբ այդ արարքներդ միշտ յարատեւեն:

Թո՛ղ անարգեն որքան կ'ուզեն քեզ մարդիկ,  
Դուն կա՛ց, մնա՛ յաղթ, անսասան զերթ մարտիկ,  
Յորչափ հոգւոյդ ալբերուն մէջ առանձին,  
Կրնաս յարգանք պահել հանդէպ քու անձին:

Տառապանքը աշխատութեան արգելք չէ. ընդհակառակը, աշխատանքը գուցէ օր մը ամոքիչը ըլլայ անոր:

Թէ՛ նիւթապէս, թէ՛ բարոյապէս տալը աւելի մեծ հաճոյք է քան թէ առնելը աւելի երջանիկ կ'ըլլանք սիրելով, քան թէ սիրուելով:

Ամէնէն անկիրթ մարդը ան չէ, որ ընկերութեան մէջ վարուիլ չի գիտեր. այլ ան, որ դժբախտին քով իր երջանկութեան վրայ կը խօսի, աղքատին քով՝ իր հարստութեան, եւ հիւանդին քով՝ իր առողջութեան:



**Կ**իլիկիայի հին և նշանավոր այս քաղաքը գտնվում է Կալիկադոնոս գետի (ջրառատությամբ երրորդն է Կիլիկիայում) ափին՝ Ադանայից 280 կմ հեռու: Ենթադրվում է, որ Ալեքսանդր Մեծի մահից հետո՝ մ. թ. ա. 3-րդ դարում, նրա զորավարներից Սելևկոս Նիկանորը, Ուլբիա և Գյուրիա քաղաքներն իրար միացնելով, կառուցեց բազմաթիվ նոր հաստատություններ, շենքեր ու պալատներ: Սելևկոսը նոր քաղաքը իր անունով՝ Սելևկիա կոչեց և քանի որ նույն անունով ուրիշ քաղաքներ էլ կային, այն վերակոչվեց Քարուտ Սելևկիա: Այն կոչվել է նաև Կալիկադոնյան Սելևկիա (համանուն գետի ջրերում 1190-ին խեղդվել է Ֆրիդրիխ Շիկամորուս կայսրը):

Երբ հայ իշխանները գրավեցին Կիլիկիան, պահեցին Սելևկիա անունը: Այժմ էլ քաղաքը կանգուն է, թուրքերն այն կոչում են Սիլիֆքե: Հին այս քաղաքը, ոչ միայն իր շինություններով ու վաճառականությամբ, այլև կրթական ու կրոնական հաստատություններով և իր տված բազմաթիվ անվանի գիտնականներով, ժամանակին մրցակցում էր Տարսուսի հետ:

Քրիստոնեության շրջանում Իսավրիայի նահանգի եպիսկոպոսանիստ աթոռն այստեղ էր գտնվում և քսան եպիսկոպոսական թեմեր ուներ, այնպես որ, Լևոն Ա-ի թագադրության հանդեսին ներկա արքեպիսկոպոսներից հետո, առաջին տեղը զբաղեցնում էր Սելևկիայի եպիսկոպոսը՝ «Տէր Թորոս եպիսկոպոս Սելևկիոյ»:

Այսօր կանգուն են երկու տաճարներ՝ իրար մոտիկ և մեկը մյուսից գեղեցիկ, կանգուն է նաև ամֆիթատրոնն ու Կեոքսուի (Հին Կալիկադոնոս) հնամենի քարե գեղակերտ կամուրջը: Այս բոլորից բացի նշանավոր է Սելևկիայի բերդը, որը գտնվում է քաղաքի արևմտյան մասում բարձր բլրի վրա: Բերդն այսօր մասամբ կանգուն է, այնտեղ կարելի է բարձրանալ միայն մի նեղ ճանապարհով: Պարիսպ-

պահպանվել է հայերեն մի արձանագրություն, որը հնագետները ամբողջությամբ չեն կարողացել կար-

## Ս Ե Լ Ե Վ Կ Ի Ա

դալ ու վերծանել: Ծովապետ Պոֆորտը ընդամենը մի քանի տող է կարողացել կարդալ «Ի ՀԱՅՈՑ ՄԵԾ ԹՎԱ-ԿԱՆԻՆ Ո ԵՒ ՉԵ ԱՄԻՆ... /1205/»:

Երկրորդ և չորրորդ տողերում հազիվ կարդացվում է «ԹԱՉԱՒԻՐՆ ՅԵ-ԹՈՒՄ ՈՐ...»: Յոթերորդ տողում՝ **Կոստանդին** անունը (Հեթումի հայրն էր), ամենավերջին տողում՝ **Լևոն**: Աջ կողմի շրջանակում՝ **Սմբատ** անունը, որը Սմբատ Գունդստաբլը (Հեթումի եղբայրը) կարող էր լինել, և որի անվան վերևում, ըստ Լանկլուայի, գրված է «ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ»:

## Պատմական ակնարկ

Լևոն Մեծի իշխանության գլուխ գալուց առաջ՝ Թորոս Բ-ի օրոք, Սելևկիա բերդաքաղաքը հայերի ձեռքում էր: Իր իշխանության առաջին իսկ օրերին Լևոն Ա-ն այն նվիրում է Շահանշահի որդուն՝ Սասունցի Չորսվանելուն, որի մահից հետո՝ 1194-ին, բերդաքաղաքի տեր և իշխան է հիշատակվում Սելևկիայի Կոստանց անունով իշխանը, որ ազգակից էր հույն Կոմարտիոս իշխանին: Իշխան Կոստանցը ներկա է եղել Լևոնի թագադրության հանդեսին, հիշելով նրան, Սմբատը գրում է. «Իշխանն Սելևկիոյ եւ Պունառոյ Կոստանցն»: Լևոն Ա-ն իր թագադրության 12-րդ տարում Սելևկիան Նորբերդի և Կամարտիասի հետ նվիրում է Երուսաղեմի հիվանդանոցի Ասպետներին՝ պատերազմի ժամանակ նրանցից ստացած օգնության փոխարեն, և երկար տարիներ Սելևկիան նրանց իշխանության տակ էր:

Լևոն Ա-ի մահվան նախօրյակին

բերդի տեր է հիշատակվում Սիրատան (Սիր Ատոմ): Սա Լևոնի դստեր դաստիարակն էր և արքունիքում մեծ ազդեցություն ուներ: Սմբատ Սպարապետն այսպես է գրում. «Էր տեր բազում բերդից եւ գաւառաց, ի Սելևկիոյ մինչեւ ի Կալսոնօրոս»:

Հեթումի թագավորության սկզբում, Ջաբել թագուհին այցի է գնում իր մորը՝ Սելևկիա: Ասպետները դրդում են Ջաբելին չվերադառնալ Սիս: Ջայրանալով՝ Կոստանդին թագավորահայրը բանակով արշավում և պաշարում է Սելևկիան՝ ստիպելով թագուհուն իրեն հանձնել: Ասպետները չեն կարողանում դիմադրել և ստիպված ոչ միայն Ջաբելին, այլև քաղաքն էլ են հանձնում: Կոստանդինը երկրից վտարում է ասպետներին և Սելևկիայի վրա զորավոր պահակաունդ է թողնում: Բերդը նորոգելու ժամանակ դառն կրա մի արձա-


նագրություն է քանդակել տալիս (այս մասին արդեն խոսել ենք - Ջ. Բ.):

13-րդ դարի կեսերին Քարամանները գրավում են Սելևկիան: Կիլիկիայի հզոր այս բերդաքաղաքը պատմության մեջ վերջին անգամ հիշատակվում է 1271-ին, երբ Լևոն Բ-ն իր թագավորության օրոք այցելում է Սելևկիա:

Կիլիկիայի թագավորության անկումից մեկ դար անց՝ 1471-ին, վենետիկցի Պարպարոն, լինելով Սելևկիայում, հետագայում իր հուշերում գրում է. «...Բերդի ամեն անկյունում կար մեկական աշտարակ, իսկ բերդի դռները երկաթից էին: Բերդի կենտրոնում մի քարայր էր փորված, որը հավանաբար ծնռանը անձրևի ջրով էր լցվում: Քաղաքի չորս կողմը կաշալի տեսարան էր բացվում. մի կողմում տարածված էր ծովի արծաթ հայելին, իսկ մյուս կողմում Տավրոսի ծյունապատ լեռներն էին»:


19-րդ դարում Սելևկիա բերդին է անդրադառնում Լանկլուան, իսկ նրանից հետո՝ բազմաթիվ մատենագիրներ, մինչև մեր օրերը:

## ՉԵՄՍԱ ԲՎՂՂՂՅԱՆ





# ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ




- Արարատ Զակոբյան, «1920թ. թուրք-հայկական պատերազմի պատմության փորձն ու դասերը», Երևան, «Ճարտարագետ», 2004, 28 էջ (Ա-5):

Փաստաթղթերի, հուշագրությունների և պատմագիտական գրականության հարուստ աղբյուրների վրա հենված, հեղինակը քննարկում և վերլուծում է Կարսի 1920թ. հոկտեմբերի 30-ի անկման և դրան հետևած Հայաստանի առաջին Հանրապետության կործանման բուն պատճառները և հանգում եզրակացության, որ այդ պարտությունների հիմնական պատճառները Հայոց բանակում և հայ հասարակության մեջ համատարած բարոյա հոգեբանական հոռի վիճակն ու դրանից բխող պարտվողական ոգին էին:

- Արարատ Զակոբյան, «Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն 1918-1920թթ.», Երևան, հեղինակային հրատարակություն, 2005, 64 էջ (Ա-5):


Ուսումնասիրության մեջ առաջին անգամ համակարգված ու համառոտ ներկայացվում են Հայաստանի առաջին Հանրապետության շուրջ 60 պարբերականներ՝ ըստ իրենց պատկանելիության, բնույթի և բովանդակության: Ներկայացվում է դրանց մեծ մասի բովանդակած նյութերի տեսությունը:



- Գառնիկ Ոսկանյան, «Մոսկովյան քրեամարտերում», Երևան, «Վան Արյան», 2005, 152 էջ (Ա-5):

Մոսկվայի ոստիկանությունում երկար տարիներ ծառայած, պաշտոնաթող գնդապետ-հեղինակը ներկայացնում է դրվագներ մոսկովյան հանցախմբերի վնասագերծման իր փորձառությունից:

Ուշագրավ է, որ այդ հանցաշխարհի շատ ներկայացուցիչներ հայազգի են, նրանց շարքում՝ ՀՀ նախագահի և հայերի համաշխարհային առաջնորդի հավակնորդ Սերժ Ջիլավյանը:



Մոսկովյան քրեամարտերում

- Հիլտա Գալֆայեան-Փանոսեան, «Մեսրոպեանը ազգային միասնութեան նախապայման», Երևան, «Նախիջևեան», 2005, 279 էջ (Ա-5):


Ֆրանսահայ հեղինակի այս հավաքածուն ընդգրկում է 2000-2005թթ. գրած և մամուլում տպագրած հոդվածներն ու զանազան ատյանների ուղղած նամակները, որոնք հիմնավորում են ՀՀ-ում Մեսրոպյան ուղղափառության անհապաղ վերականգնման անհրաժեշտությունը և նրա քաղաքական նշանակությունը: «Հավելված» բաժնում լույս



են տեսել Պարույր Սևակի 1969թ. գրած նամակը ուղղափառության հարցի շուրջ և Փարիզի «Յառաջ» թերթի 18-19 մայիս 2002-ի հատուկ համարի հրապարակումները:

- (Խմբագիր՝ ժողգեֆ Ավետիսյան), «Ես գնացի Կոմիտասի այգի - 1966, ապրիլ 24», Երևան, հրատարակություն «Բնօրրան» հանդեսի, 68 էջ (Ա-5):

Գրքում լույս են տեսել 1966թ. ապրիլի 24-ին Կոմիտասի այգի Պանթեոն, ուսանողական երթի մասնակիցների մի մասի հուշերն իրենց ձեռքակալության ու բանտարկության մասին: Հուշերն ընդգրկում են ակնարկներ հետագա տարիներին նշանավոր դարձած հայորդիների մասին, ինչպես Հայկազ Խաչատրյանը, Ստեփան Ջատիկյանը, Լևոն Տեր-Պետրոսյանը և այլք:



- (Կազմողներ՝ Ամատունի Վիրաբյան և Գոհար Ավագյան), «Վշտապատում - Հայոց Մեծ եղեռնը ականատեսների աչքերով», Երևան, «Ջանգալ-97», 412 էջ (Ա-5):

Գրքում տեղ են գտել Հայկական ցեղասպանությունից մազապուրծ 187 հոգու վկայություններ՝ գրի առնված նրանց փրկությունից անմիջապես հետո՝ 1915-1916 թվականներին:

Հատորը հրատարակվել է ՀՀ պետական աջակցությամբ: Հրատարակման է երաշխավորել Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհուրդը:

- Ջոհրաբ Մ. Ղասաբյան, «Կրակոտ և անտեսանելի ճակատում (Հուշեր անցյալից)», Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատարակչություն, 2005, 108 էջ (Ա-5):

Պատմագիտության դոկտոր-հեղինակը պատմում է իր կյանքի հուշերը, որոնք առնչվում են ԽՍՀՄ հետախուզության մեջ իր կատարած աշխատանքներին՝ Մարոկոյի թագավորությունում 1964-1969 թվականներին:

Լույս է տեսել որպես «Մեսրոպ Արք. Աշճեան» մատենաշարի 6-րդ գիրք:



- Եղիշե Ասծատրյան, «XX դար. Հայաստանի կառուցման ճանապարհին - Հուշեր», Գիրք Ա, Երևան, «Էդիթ Պրինտ», 2004, 236 էջ (Ա-5):

Հուշագրողը՝ Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական երկարամյա բարձրաստիճան գործիչ է, որը շարադրել է իր հուշերը հանրապետության կյանքի տարբեր ոլորտների զարգացման, Խ. Միության ակնավոր գործիչ



Անաստաս Միկոյանի և 1937-1988թթ. Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղարների հետ իր համատեղ աշխատանքի մասին:



- Արտակ Մովսիսյան, «Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)», Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2005, 176 էջ (Ա-5):

Աշխատանքում փորձ է արվում ամբողջությամբ վերականգնել Հայաստանի պատմությունը Ք. ա. 3-րդ հազարամյակում՝ հիմք ունենալով բացառապես գրավոր աղբյուրները: Հավելվածում հայերեն թարգմանությամբ բերվում են քառասուն բնագրեր, որոնց մեծ մասը հայերենով լույս է տես-


նում առաջին անգամ: Հեղինակը անվիճելիորեն ապացուցում է հայերի տեղաբնիկությունն իրենց հայրենիքում Հայկական լեռնաշխարհում:

Գիրքը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ՝ հեղինակի ամերիկահայ բարեկամների օժանդակությամբ:

- Գարեգին Նժդեհ, «Որդիների պայքարը՝ հայրերի դեմ», Բեյրութ, «Համազգայինի Վահե Սեփեան տպարան-հրատարակչատան» հրատարակչություն, 2005, 128 էջ (Ա-5):



Հայ ազգայնական գաղափարախոսության կարկառուն դեմքերից Գ. Նժդեհի՝ 1927թ. Սալոնիկում լույս տեսած վերլուծական-գաղափարական աշխատանքի առաջին վերահրատարակությունն է սփյուռքում (1999-2002թթ. 3 անգամ վերահրատարակվել է ՀՀ-ում): Գիրքն ունի հրատարակչի նախաբան, նաև Նժդեհի կենսագրականը (ցավոք՝ սխալաշատ): «Մուրատ Գաբլանեան, Կարո Պայթարեան, Յովսէփ Մարգարեան, Վրէժ Ճինպաշեան այս գրքի հրատարակութիւնը կը նուիրեն գաղափարապաշտ ընկեր՝ Կարո Գաբլանեանի յիշատակին», - կարդում ենք անվանաթերթի դարձերեսին:




- Էդուարդ Դանիելեան, «Գանձասարի պատմություն», Երևան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 2005, 460 էջ (17X24 սմ):

Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր հեղինակը այս գիտական ծանրակշիռ աշխատանքով ներկայացնում է առհասարակ Արցախի, մասնավորաբար Գանձասարի վանքի ու Գանձասարի կաթողիկոսության ամբողջական պատմությունը:

Գիրքը լույս է տեսել Արցախի թեմի առաջնորդ Պարզև արք. Մարտիրոսյանի հրամանով, մեկենասությամբ լոնդոնաբնակ Կոմիտաս Հարությունյանի՝ ի պատիվ իր հոր՝ Կարապետի և ի հիշատակ իր մոր՝ Քնարի:

- Ռաֆայել Համբարձումեան, «Գարեգին Նժդեհ, կենսագրական յաւելումներ, անտիպ գրութիւններ ու խորհր-



դածութիւններ», Երևան, «Նախիջեան» հրատարակչութիւն, 500 էջ (Ա-5):

Ժողովածուն ամփոփում է հատվածներ Գարեգին Նժդեհի առաջին (1908-1912թթ.) ու հատկապես երկրորդ (1944-1955թթ.) բանտարկությունների նյութերից՝ նամակներ, զեկույցներ, դիմումներ, հարցաքննությունների արձանագրություններ, նաև կենսագրական հավելումներ: Նյութերի մեծ մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ:

Գիրքը տպագրվել է ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանի հովանավորությամբ:

- Արմենակ Մանուկյան, «Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950-1988թթ.», Երևան, «Ամրոց Գրուպ», 2005, 104 էջ (Ա-5):



Հեղինակը պատմագիտության դոկտոր է, ազգային անվտանգության գնդապետ: Սույն աշխատանքով, հենված Ազգային անվտանգության ծառայության արխիվային նյութերի վրա, փորձ է արվում ներկայացնել խորհրդային Հայաստանում այլախոհության, ավելի ճիշտ՝ ազգային շարժման համապարփակ պատմությունը: Որպես հավելված տպագրվել են Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) ծրագիրը, կանոնադրությունն ու ԱՄԿ-ի անդամի երդումը:

Տպագրվել է Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի որոշմամբ:



-Սելզոն Էպիղաթեան, «Գաղթականայնէն խորհրդարան...», Բ. հատոր, Հալէպ, «Կիլիկիա» հրատարակչութիւն, 2005, 80 էջ (Ա-5):

Հեղինակը՝ Լիբանանի խորհրդարանի և ՀՀ-ի Լիբանանի ղեկավար մարմինների երկար տարիների անդամ, ներկայացնում է իր հուշերը 1975-1991թթ. Լիբանանյան քաղաքացիական պատերազմի ընթացքում իր խաղացած կարևոր դերի մասին: Գիրքը կարևոր աղբյուր է լիբանանահայ գաղթօջախի քաղաքական պատմությունն ուսումնասիրողների համար:

Եղիա Նաջարյան, «Արաբական մշակութային զարթոնքը», թարգմանիչ՝ դոկտ. Պողոս Սարաջյան, Կահիրե, 600 էջ (Ա-5) (արաբ.):

Աշխատությունը արևելագետ հեղինակի՝ 1988թ. Երևանում լույս տեսած գիտական մենագրության արաբերեն թարգմանությունն է: Լույս է տեսել դամասկոսահայ ինժեներ Վարուժան Սալթյանի մեկենասությամբ:







# ՀԱՅՈՑ ՄԿԻՏՈՒԹԻՒՆ՝ ՀՈԳԵՒՈՐ ՎԵՐԱԾՆՈՒՆԳ



**Բագրեւանդ.** կը գտնուի Մեծ Հայքի Այրարատ նահանգին մէջ: Բագրեւանդը կը համապատասխանէ ներկայ Ալաշկերտի տարածքին: Ալաշկերտի դաշտը՝ դէպի արեւելք կը շարունակուի Չիրաւի դաշտը: Ծաղկանց լեռներէն կը բխի Եփրատի ամենամեծ վտակը՝ Արածանին: Ձմրան գետերու մեծ մասը կը սառցակալի: Բագրեւանդի մէջ կան բազմաթիւ լիճեր ու լճակներ. ամենամեծը Գայլատուն է: Բագրեւանդի կլիման ցամաքային է: Շրջանը անտառազուրկ է, պտղատու ծառեր քիչ կան, սակայն կենդանական աշխարհը հարուստ է: Առատ ջուրի, ընդարձակ ու հարթ դաշտերու շնորհիւ Ալաշկերտի դաշտը հին ժամանակներէն սկսեալ եղած է բարեբեր գիւղատնտեսական շրջան: Մեծ հռչակ ունեցած է Ալաշկերտի ցորենը: Բագրեւանդ Հայ ազգի ամենահին կեդրոններէն մէկն է. անիկա սկիզբէն բնակուած է հայկական ցեղերով: Արտաշէսեաններու եւ Արշակունիներու ժամանակ Բագրեւանդը յաճախ ենթարկուած է հռոմէացիներուն: 1500-ական թուականներուն եղած է թուրք-պարսկական պատերազմներու թատերաբեմ: 19-րդ դարուն եւ 20-րդ դարու սկիզբին ռուսները երեք անգամ գրաւած են Բագրեւանդը: 1877-ին ռուսական զօրքերը հրամանատար Արշակ Տէր-Ղուկասեանի գլխաւորութեամբ գրաւեցին Բագրեւանդը, որ Պեռլինի պայմանագիրով կրկին անցաւ Թուրքիոյ:

18 եւ 19-րդ դարերուն Բագրեւանդը կը գտնուէր Երզրումի նահանգին մէջ: Այդ շրջանին հոն հետզհետէ սկսան հաստատուիլ քրտական ցեղեր, որոնք բնակեցան հայկական գիւղերու մէջ:

### Սրբազանի 2000-ի ուխտագնացութեան յուշերէն:

Պարզ կիրակի օր մըն էր, եւ որ սակայն լեցուեցաւ, շքեղացաւ, յորդեցաւ, եւ դարձաւ, ինծի համար, որ արդէն 40 տարիէ ի վեր Հայ Եկեղեցւոյ խոնարհ ծառայ մըն եմ, ինծի համար, որ արդէն 50 տարի եւ ավելի Հայ Եկեղեցւոյ մթնոլորտին մէջ եմ՝ ուխտի, հոգեւորականի ապրումի բարձրակէտ եղաւ, քանի որ պիտի ըլլայի այնտեղ՝ ուր, ըստ Ազաթանգեղոսի, Գրիգոր Լուսաւորիչը մկրտեր էր Հայոց արքան, արքունիքը եւ բիւրաւոր հայեր: Պիտի ըլլայի «առ ափունս Եփրատայ», պիտի ըլլայի Արածանիի ափերուն:

Նախ գացինք թրքական գիւղը, որ մեր **Բագաւանն** էր եղած, յետոյ կոչուեր էր Իւլ Քիլիսա՝ որովհետեւ երեք շքեղ խորաններ ունէր, եւ յետոյ եղեր էր ակերակ, եւ հիմա եղեր է քարակոյտ: Ո՞ւր է Բագրեւանդի տաճարը՝ Հայոց մեծագոյն եկեղեցիներէն մին: Գրիգոր Լուսաւորիչ, Կեսարիայէն դարձին, քանդեր էր այնտեղի մեհեանները եւ կառուցեր մոր եկեղեցին, որու վրայ հետագային բարձրացեր էր շքեղ տաճար մը, Իսրայէլ Գոռաղճեցի ճարտարապետի ձեռքով, 630-ական թուականներուն:

**Բագաւան.** կը գտնուի Մեծ Հայքի Այրարատ նահանգի Բագրեւանդ գաւառի հարաւ-արեւելեան շրջանին մէջ, Նպատ լեռան հիւսիս-արեւմտեան ստորոտին, Արածանիի ձախ ափին (այժմ՝ Իւլ Քիլիսէ գիւղը): Նախաքրիստոնէական շրջանին անիկա Հայաստանի ամենայայտնի հոգեւոր կեդրոններէն մէկն էր: Նաւասարդեան օրերուն Բագաւանի մէջ կը գումարուէր Հայոց աւագանիի խորհրդակցական ժողովը՝ Աշխարհաժողովը: Արածանի գետին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչ մկրտեց Տրդատ Մեծ թագաւորը եւ մեծ թիւով նախարարներ՝ իրենց գունդերուն հետ, որմէ

ետք քրիստոնէութիւնը հռչակուեցաւ Հայաստանի պետական կրօն: Գրիգոր Լուսաւորիչ բազմներու վրայ եկեղեցիներ շինել տուաւ: 371-ին Բագաւանի մօտերը տեղի ունեցած ճակատամարտի ընթացքին հայ-հռոմէական միացեալ բանակները Մուշեղ Սամիկոնեան սպարապետի գլխաւորութեամբ յաղթեցին պարսից Շապուի թագաւորի բանակին:


1802 Մայիս 25-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան օրինականութիւնը պահպանելու համար, Սուրբ Էջմիածին իսկ չհասած՝ Բագրեւանդի Մայր Եկեղեցւոյ մէջ Աղթամարի Կարապետ Կաթողիկոսին կողմէ կաթողիկոս կ'օծուէր Դանիէլ Սուրմառեցին: Իսկ հիմա՞: Քար մը հոս, քար մը հոն. հագիւ կը նայիս՝ քիւրտերը կու գան եւ կը նային թէ քարտէս բերե՞ր ես հետոյ: Անշուշտ զբօսաշրջիկութեան մասին չէ խօսքը: Ոսկիի քարտէսն է: Ա՛խ, ինչեր պիտի տային քիւրտերը մեզի եթէ ակերակ վանքի մը յատակագծի փոխարէն, մեր հետ ունենայինք գիւղին քարտէսը, եւ քարտէսը այն տան՝ ուր, ըսենք, 2 մէթր խորութեամբ թաղուած են մեր ոսկիները: Բայց միայն այստեղ չէր: Ուր որ գացինք՝ նոյն խենէշ ցանկութիւնը կար՝ Ալթո՛ւն, Ալթո՛ւն... Մեր ոսկի աշխարհը առեր նստեր են, մեր ոսկեղաշտերը անապատի են վերածեր, մեր հողերու տէրն են, եւ կ'ուզեն, որ մեր հայրերու ոսկին ալ գտնենք եւ տանք իրենց: Ազա-հուքիւնը սահման եւ երկինք չունի: Նոյնպէս անզգամութիւնը:

### Բագաւանի Ս. Յովհաննէս տաճար:

հիմնադրուած է 631 թուականին: Հոս Գրիգոր Լուսաւորիչ ամփոփած է Յովհաննէս Սկրտիչի եւ Ս. Աթանագիմէսի նշխարներէն, եւ մատուռ մը կառուցելով, գայն կոչած է Ս. Յովհաննէս: Սա քրիստոնէութեան շրջանին դարձած է առաջնորդանիստ կեդրոն, ուր հինգերորդ դարուն առաջնորդ եղած են Եզնիկ Կողբացին եւ Մովսէս Խորենացին: Գմբէթաւոր պագիլիք ոճի կառոյց է, երկարութիւնը՝ 46 մէթր, լայնութիւնը՝ 27 մէթր, բարձրութիւնը առանց գմբէթի՝ 20 մէթր: Տաճարը շրջափակուած է երեք շարք աստիճաններով: Հարաւային մուտքի հարթակներէն մէկու վրայ գտնուած են արամեա-տառ արձանագրութիւններ:



### Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրութեան պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՅԱՆԸ





Բազմական, այժմ՝ իւշ Քիլիսե գյուղ, որ  
նշանակւում է Երեք Եկեղեցի...





## ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻՆ

Պիտի հասնինք, Սրբազա՛ն Լեռ, կատարիդ,  
Երբ Ջրհեղեղը ռուժբերուն գտնէ վերջ,  
Երբ արիւնի ծովերն հագնին ծիածան,  
Երբ մորթուած խաղաղութեան աղաւնին  
Վերադառնայ արհաւիրքի վիհերէն  
Ձիթենիի հաշտարար ճիւղը բերնին՝  
Պիտի հասնինք կատարիդ:

Տե՛ս մեր շարքերը խանդաբորբ ու արի,  
Տե՛ս մեր թռիչքը խոյանքով Վահագնի,  
Տե՛ս մեր հոգին քու լեռներուդ պէս ամուր,  
Ու կամքը մեր տես ժայռերուդ պէս ամուր,  
Ու հաւատա՛, կրանիթեայ ով Աստուած,  
Սրբազան Լեռ, հաւատա,  
Որ կը հասնինք, մենք կը հասնինք կատարիդ:

Անդրանիկ

Ծառուկեան

Անդրանիկ Ծառուկյանը ծնվել է 1913-ին, Կյուրին քաղաքում (գավառ Փոքր Հայքում՝ Սեբաստիայի նահանգի Սեբաստիայի գավառում): 1915-ի եղեռնական դեպքերից հետո ապաստան է գտել Հալեպի որբանոցում: Նախնական կրթություն ստացել է Հալեպի հայկական վարժարանում, տեղափոխվելով Բեյրութ, սովորել է Հայ ճեմարանում: Ճեմարանն ավարտելուց հետո Ծառուկյանը աշխատել է որպես ուսուցիչ, զբաղվել է խմբագրական գործով. 1941-ին հիմնել ու երկար տարիներ խմբագրել է սփյուռքահայ մամուլի պատմության մեջ նշանակալի տեղ ու դեր ունեցող «Նաիրի» գրական-հասարակական շաբաթաթերթը: 1980-ականներին տեղափոխվել է Փարիզ, ուր և մահացել է 1989-ին:

Միաժամանակ նա իր ուժերը փորձել է բանաստեղծության, արձակի, գրական քննադատության ու հրապարակախոսության մեջ: Անդրանիկ Ծառուկյանի գրչին են պատկանում «Առագաստներ» բանաստեղծությունների ժողովածուն, «Թուրք առ Երևան» պոեմը, «Մանկություն չունեցող մարդիկ» վիպակը, «Մեր եղեռնի մեջ», «Վերջին անմեղը» վեպերը, «Երազային Հալեպը» ինքնակենսագրական վիպակը և այլ ստեղծագործություններ: